



ՊԱՐՏԱՏՈՄՍԵՐԻ ԾՐԱԳՐԱՅԻՆ ԱԶԴԱԳԻՐ

«ԳԼՈԲԱԼ ՇԻՓՓԻՆԳ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություն

Թողարկողի ֆիրմային անվանումը, կազմակերպարավական ձևը

ՀՀ, 0051, ք. Երևան, Հր.Քոչար 44/53

հեռ. (+374 60) 616-616

էլ. փոստ՝ info@globbing.com

ինտերնետային կայք՝ www.globbing.com

«ԿՈՆՎԵՐՍ ԲԱՆԿ» ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ

Գլխավոր տեղաբաշխողի անվանումը, կազմակերպարավական ձևը

Հայաստանի Հանրապետություն, 0010, ք. Երևան, Հանրապետության հրապարակ,

Վազգեն Սարգսյան 26/1

հեռ. (+374 10) 511-211

էլ. փոստ՝ post@conversebank.am

ինտերնետային կայք՝ www.conversebank.am

ՀՀ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ ԿՈՂՄԻՑ ԱԶԴԱԳՐԻ ԳՐԱՆՑՈՒՄԸ ՉԻ ՀԱՎԱՍՏՈՒՄ ՆԵՐԴՐՄԱՆ ԱՊԱՀՈՎՈՒԹՅՈՒՆԸ, ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ՃՇՏՈՒԹՅՈՒՆԸ ԿԱՄ ԻՍԿՈՒԹՅՈՒՆԸ	
Արժեթղթերի տեսակը՝	Անվանական, արժեկտրոնային պարտատոմս
Արժեթղթերի ձևը՝	Ոչ փաստաթղթային
Արժեթղթերի անվանական արժեքը՝	50,000 (Հիսուն հազար) ՀՀ դրամ
	100 (Հարյուր) ԱՄՆ դոլար
Արժեթղթերի թողարկման ընդհանուր քանակը՝	30,000 (Երեսուն հազար) հատ ՀՀ դրամով
	40,000 (Քառասուն հազար) հատ ԱՄՆ դոլարով
Արժեթղթերի թողարկման ընդհանուր ծավալը՝	1,500,000,000 (Մեկ միլիարդ հինգ հարյուր միլիոն) ՀՀ դրամ
	4,000,000 (Չորս միլիոն) ԱՄՆ դոլար

Արժեթղթերի յուրաքանչյուր տրանշի տեղաբաշխման ծավալը՝	Ենթակա է որոշման Ընկերության Խորհրդի կողմից՝ յուրաքանչյուր տրանշի համար
Արժեթղթերի յուրաքանչյուր տրանշի տեղաբաշխման քանակը՝	Համապատասխան յուրաքանչյուր տրանշի ծավալի և անվանական արժեքի
Արժեթղթերի արժեկտրոնի տարեկան եկամտաբերությունը՝	Ենթակա է որոշման՝ Ընկերության Խորհրդի կողմից՝ յուրաքանչյուր տրանշի համար
Արժեթղթերի շրջանառության ժամկետը՝	Ենթակա է որոշման Ընկերության Խորհրդի կողմից՝ յուրաքանչյուր տրանշի համար
Արժեկտրոնների վճարման հաճախականությունը՝	Ենթակա է որոշման Ընկերության Խորհրդի կողմից՝ յուրաքանչյուր տրանշի համար
Տեղաբաշխման ձևը՝	Չերաշխավորված

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ ԱՆՁԻՆՔ 7

ԲԱԺԻՆ 1. ԱՄՓՈՓԱԹԵՐԹ 8

- 1.1. Թողարկողի և թողարկողի գործունեության վերաբերյալ համառոտ տեղեկատվություն 8
 - 1.1.1. Թողարկողի տվյալները և կապի միջոցները 8
 - 1.1.2. Թողարկողի հիմնադրումը և համառոտ պատմությունը 9
 - 1.1.3. Թողարկողի ռազմավարությունը 11
 - 1.1.4. Թողարկողի կանոնադրական կապիտալը 12
 - 1.1.5. Բիզնեսի նկարագիրը 12
 - 1.1.6. Թողարկողի կազմակերպական կառուցվածքը 13
 - 1.1.7. Ակտիվների որակը 14
- 1.2. Թողարկողին և պարտատոմսերին առնչվող ռիսկերի համառոտ նկարագիրը 14
 - 1.2.1. Թողարկողին առնչվող ռիսկերի համառոտ նկարագիրը 14
 - 1.2.2. Պարտատոմսերին առնչվող ռիսկերի համառոտ նկարագիրը 15
- 1.3. Թողարկողի տնտեսական գործունեության զարգացման և ֆինանսական վիճակի փոփոխության միտումները 17
- 1.4. Համառոտ տեղեկություններ Թողարկողի աուդիտն իրականացնող անձանց մասին 18
- 1.5. Թողարկողի բաժնետերերի, կառավարման մարմինների կազմի և աշխատակիցների վերաբերյալ տեղեկատվություն 18
- 1.6. Առաջարկվող պարտատոմսերի հիմնական վիճակագրական տվյալները 19
- 1.7. Պարտատոմսերի առաջարկի ծրագրի համակողմանի նկարագիրը 20
- 1.8. Ամփոփ ֆինանսական տվյալներ 20

ԲԱԺԻՆ 2. ԱՌԱՋԱՐԿՎՈՂ ՊԱՐՏԱՏՈՄՍԵՐԻ ՄԱՍԻՆ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ 27

- 2.1. Ռիսկային գործոններ 27
- 2.2. Հիմնական տեղեկատվություն 29
- 2.3. Պարտատոմսերի վերաբերյալ տեղեկատվություն 30
 - 2.3.1. Արժեթղթերի տեսակը և դասը 30
 - 2.3.2. Երկիրը 30
 - 2.3.3. Արժեթղթերի ձևը 30
 - 2.3.4. Արժեթղթերի անվանական արժեքը և քանակը 30

2.3.5. Թողարկման արժույթը	31
2.3.6. Պարտատոմսերի դասակարգման մասին տեղեկատվություն	31
2.3.7. Արժեթղթերից բխող հիմնական իրավունքները, պարտականությունները և սահմանափակումները	33
2.3.8. Արժեկտրոնի տոկոսադրույքը և դրա վճարման պայմանները	33
2.3.9. Արժեթղթերի մարման ժամկետը և արժեքը	36
2.3.10. Արժեթղթի տարեկան եկամտաբերությունը	37
2.3.11. Նոր թողարկման մասին տեղեկատվություն	38
2.3.12. Արժեթղթերի ազատ շրջանառության հետ կապված սահմանափակումների նկարագրությունը	38
2.3.13. Պարտատոմսերից ստացվող եկամուտների հարկման կարգի նկարագիրը	39
2.4. Առաջարկի ժամկետները և պայմանները	41
2.4.1. Առաջարկի պայմաններ, առաջարկի վիճակագրություն	41
2.4.2. Տեղաբաշխման պլան	46
2.4.3. Առաջարկի գին	46
2.4.4. Տեղաբաշխումը	47
2.5. Առևտրին թույլտվությունը և առևտրի կազմակերպումը	48
2.5.1. Առևտրին թույլտվությունը	48
2.5.2. Շուկաները	48
2.5.3. Շուկա ստեղծողները	49
2.6. Լրացուցիչ տեղեկատվություն	49
2.6.1. Խորհրդատուներ	49
2.6.2. Աուդիտորական եզրակացությունը	49
2.7. Թողարկողի կովենանտները	49
2.7.1. Ֆինանսական կովենանտներ	49
2.7.2. Բացասական կովենանտներ	51
2.7.3. Ներդրողների համաձայնության ստացման ընթացակարգ	52
2.7.4. Կովենանտների խախտման դեպքերը և դրանց հետևանքները	53
ԲԱԺԻՆ 3. ԹՈՂԱՐԿՈՂԻ ՄԱՍԻՆ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ	55
3.1. Անկախ աուդիտորներ	55
3.2. Ռիսկային գործոններ	55
3.3. Տեղեկատվություն Թողարկողի մասին	57

3.3.1. Թողարկողի պատմությունը և զարգացումը	57
3.3.2. Ներդրումները	60
3.4. Բիզնեսի նկարագիրը	61
3.4.1. Հիմնական գործունեություն	61
3.4.2. Հիմնական շուկաները	62
3.5. Թողարկողի կառուցվածքը	63
3.6. Թողարկողի հիմնական միջոցները	64
3.7. Զարգացման վերջին միտումները	65
3.8. Թողարկողի կառավարման մարմինները և կառավարման մարմինների անդամները	65
3.8.1. Թողարկողի վարչակազմակերպական կառուցվածքը և յուրաքանչյուր մարմնի իրավասություններն ու պարտականությունները	65
3.8.2. Տեղեկություններ թողարկողի կառավարմանը մասնակցող յուրաքանչյուր անձի վերաբերյալ	67
3.8.3. Շահերի բախումը	68
3.9. Կառավարման մարմինների գործունեությունը	68
3.10. Հսկող անձինք	69
3.11. Թողարկողի ակտիվների և պարտավորությունների, ֆինանսական վիճակի, եկամուտների և ծախսի վերաբերյալ	69
3.11.1. Պատմական ֆինանսական տեղեկատվություն	69
3.11.2. Հարկային արտոնություններ	69
3.11.3. Դատական և իրավական ընթացակարգը	70
3.12. Լրացուցիչ տեղեկատվություն	70
3.12.1. Կանոնադրական կապիտալը	70
3.13.2. Կանոնադրությունը	70
3.13. Էական պայմանագրեր	70
3.14. Փորձագետի, գնահատողի, խորհրդատուի կամ հաշվապահի մասնագիտական կարծիքը և երրորդ անձանցից վերցված տեղեկատվությունը	70
3.15. Այլ տեղեկատվություն	71
Հավելված 1. «Գլոբալ Շիփինգ» ՍՊԸ-ի կազմակերպական կառուցվածքը	72
Հավելված 2. Ֆինանսական գործակիցների հաշվարկման բանաձևերը	73
Հավելված 3. «Գլոբալ Շիփինգ» ՍՊԸ թողարկած արժեկտրոնային պարտատոմսերի ձեռքբերման հայտ-հանձնարարական ֆիզիկական անձանց կամ անհատ ձեռնարկատերերի համար	74

Հավելված 4. «Գլոբալ Շիփինգ» ՍՊԸ թողարկած արժեկտրոնային պարտատոմսերի ձեռքբերման հայտ-հանձնարարական իրավաբանական անձանց համար	77
Հավելված 5. Ֆինանսական հաշվետվություններ	80

ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ ԱՆՁԻՆՔ

Մենք՝ ստորագրող անձինք, հավաստիացնում ենք, որ գործադրել ենք բոլոր ողջամիտ ջանքերը, որպեսզի պարզենք ներառված տեղեկությունների ճշգրիտ և լիարժեք լինելը: Ըստ այդմ, մենք հավաստիացնում ենք, որ մեր լավագույն տեղեկացվածության համաձայն ազդագրում ներառված տեղեկությունները ճշգրիտ և լիարժեք են, չեն պարունակում բացթողումներ, որոնք կարող են խեղաթյուրել ազդագրի բովանդակությունը:

Ստորագրող անձինք

Դավիթ Հարությունյան
Խորհրդի նախագահ


ստորագրություն

21.10.2025թ.

ամսաթիվ

Արամ Կայֆաջյան
Խորհրդի անդամ


ստորագրություն

21.10.2025թ.

ամսաթիվ

Գրիգոր Բեքմեզյան
Խորհրդի անդամ


ստորագրություն

21.10.2025թ.

ամսաթիվ

Շուշանիկ Հարությունյան
Տնօրեն


ստորագրություն

21.10.2025թ.

ամսաթիվ

Հայկ Կակոյան
Ֆինանսական տնօրեն


ստորագրություն

21.10.2025թ.

ամսաթիվ

Համեստ Գաբրիելյան
Գլխավոր հաշվապահ


ստորագրություն

21.10.2025թ.

ամսաթիվ

Տեղաբաշխող՝
«Կոնվերս Բանկ» ՓԲԸ՝
ի դեմս Գլխավոր գործադիր
տնօրեն, Տնօրինության
նախագահ
Անդրանիկ Գրիգորյանի


ստորագրություն

21.10.2025թ.

ամսաթիվ

ԲԱԺԻՆ 1. ԱՄՓՈՓԱԹԵՐԹ

Սույն ամփոփաթեթը դիտվում է որպես ազդագրի ներածական համառոտ նկարագրություն և առաջարկվող արժեթղթերում ներդրում անելու վերաբերյալ ներդրողի որոշումը պետք է հիմնված լինի ամբողջական ազդագրի վրա:

Ամփոփաթեթում պարունակվող տեղեկատվության ոչ ամբողջական կամ ապակողմնորոշիչ լինելու դեպքում (այդ թվում նաև թարգմանությանը վերաբերող մասով) ամփոփաթեթի կազմման համար պատասխանատու անձինք կրում են քաղաքացիական պատասխանատվություն, եթե այն ոչ ամբողջական կամ ապակողմնորոշիչ է ազդագրի մյուս մասերի հետ դիտարկելու դեպքում:

Ներդրողը կարող է ձեռք բերել սույն փաստաթուղթը և դրան կից փաստաթղթերը թղթային տարբերակով «Կոնվերս Բանկ» ՓԲԸ-ի (այսուհետ՝ Բանկ կամ Տեղաբաշխող) Գլխավոր գրասենյակում, իսկ էլեկտրոնային տարբերակով՝ թողարկողի ինտերնետային կայքում՝ www.globbing.com և Բանկի ինտերնետային կայքում՝ www.conversebank.am:

1.1. Թողարկողի և թողարկողի գործունեության վերաբերյալ համառոտ տեղեկատվություն

1.1.1. Թողարկողի տվյալները և կապի միջոցները

Թողարկողի լրիվ ֆիրմային անվանումն է՝

հայերեն՝ «Գլոբալ Շիփինգ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություն

ռուսերեն՝ “Глобал Шиппинг” Общество с ограниченной ответственностью

անգլերեն՝ “Global Shipping” Limited Liability Company

Թողարկողի կրճատ ֆիրմային անվանումն է՝

հայերեն՝ «Գլոբալ Շիփինգ» ՍՊԸ

ռուսերեն՝ ООО “Глобал Шиппинг”

անգլերեն՝ “Global Shipping” LLC

Թողարկողի պետական գրանցման վայրն է՝

ՀՀ, 0051, ք. Երևան, Հր.Քոչար 44/53

Թողարկողի պետական գրանցման համարն է՝

264.110.863832

Թողարկողի գտնվելու վայրն է՝

ՀՀ, 0051, ք. Երևան, Հր. Քոչար 44/53

Կապի միջոցները՝

հեռ.՝ (+374 60) 616-616

էլ. փոստ info@globbing.com

Ինտերնետային կայք՝ www.globbing.com

Թողարկողի հիմնադրման երկիրը՝

Հայաստանի Հանրապետություն

Ընկերության կազմակերպատիրական ձևը՝

սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություն

Թողարկողի ֆիրմային անվանումը պաշտպանված է ՀՀ նորմատիվ իրավական ակտերով և գրանցված է ՀՀ արտոնագրային վարչությունում:

Թողարկողի ապրանքային նշանն է՝

GLOBBING

Պարտատոմսերում ներդրումների հետ կապված հարցերի դեպքում ներդրողները կարող են կապ հաստատել «Կոնվերս Բանկ» ՓԲԸ-ի Ներդրումային դեպարտամենտի Կորպորատիվ ներդրումային բանկային ծառայությունների բաժնի համապատասխան աշխատակիցների հետ՝ հետևյալ հեռախոսահամարներով.

(+374 10) 511-211 (ներքին) 2449 կամ 2454, էլ հասցե. Elen.Karimyan@conversebank.am, Emilia.Yeghiazaryan@conversebank.am, corpinvest@conversebank.am:

1.1.2. Թողարկողի հիմնադրումը և համառոտ պատմությունը

«Գլոբալ Շիփինգ» ՍՊԸ-ն (այսուհետ՝ Թողարկող, Ընկերություն կամ Գլոբբինգ) հիմնադրվել է 2015 թվականին և արդեն 10 տարի է իր ծառայություններն է մատուցում ՀՀ շուկայում:

Ընկերությունն իր գործունեությունը սկսել է որպես փոքրիկ ստարտափ՝ նպատակ ունենալով փոխել և զարգացնել օնլայն գնումների մշակույթը Հայաստանում և միջազգային շուկաներում:

Այնուհետև Գլոբբինգը սկսել է ակտիվորեն ընդլայնվել՝ ավելացնելով նոր առաքման ուղղություններ, բացելով նորարարական սպասարկման սրահներ, ձևավորելով լոքերների լայն ցանց և մեկնարկելով ֆրանչայզինգի ծրագրեր: Գլոբբինգի նախաձեռնությամբ հազարավոր օգտատերեր առաջին անգամ հնարավորություն ստացան օգտվելու համաշխարհային զեղչերից և պատվիրելու ապրանքներ իրենց նախընտրած բրենդներից՝ առանց սահմանափակումների: Ընկերությունը նաև

ներգրավված է կրթական և բարեգործական նախաձեռնություններում՝ ամրապնդելով իր հասարակական դերը:

Ընկերության զարգացման տարեգրությունը ներկայացված է ստորև.

- 2015թ. բրենդի ստեղծում և Գլոբբինգի պաշտոնական բացում:
- 2016թ. Ընկերության կողմից նոր ուղղությունների բացումը դեպի Չինաստան և Գերմանիա հնարավորություն տվեց հաճախորդներին ընդլայնել օնլայն գնումների աշխարհագրությունը, իսկ Ընկերությանը՝ մեծացնել հասույթը:
- 2017թ. Ընկերությունը գործարկեց ռոբոտացված համակարգով աշխատող առաջին սպասարկման սրահը, որտեղ ծանրոց ստանալը տևում է միջինում 20 վայրկյան, որի արդյունքում զգալիորեն բարելավվեց սպասարկման որակը, ինչպես նաև հնարավորություն ստեղծվեց օրական սպասարկվող հաճախորդների թվաքանակը զգալիորեն ավելացնել՝ բացառելով հերթերը և կուտակումները:
- 2018թ. Ընկերությունը գործարկեց Հայաստանում առաջին ինովացիոն լոքերների ցանցը, որի արդյունքում ծանրոցների ստացման դասական եղանակին ավելացավ նոր եղանակ՝ հաճախորդին հնարավորություն ընձեռելով իրենց իրականացված գնումները ստանալ առանց սպասարկման սրահ այցելելու:
- Հաշվի առնելով կուտակված փորձը՝ Ընկերությունը 2019թ. մուտք գործեց Ղազախստանի շուկա և որպես առաջինը այս ոլորտում ներդրեց իր ողջ ենթակառուցվածքը՝ սպասարկման սրահներ և լոքերներ: Նորարարությունը ընդունվեց Ղազախստանի շուկայում և շատ արագ Գլոբբինգ Ղազախստանը դարձավ շահութաբեր ներդրում: Ընկերությունը Ղազախստանում գործունեություն է ծավալում դուստր ընկերության՝ Ղազախստանում գրանցված «Գլոբբինգ» ՍՊԸ-ի միջոցով:
- 2020թ. Ընկերությունը ընդլայնեց իր ինովացիոն լոքերների ցանցը՝ դարձնելով այն հասանելի ՀՀ ամբողջ տարածքում: 2021թ. Գլոբբինգը բացեց իր նոր՝ «Նաիրի» ինովացիոն սպասարկման սրահը, իսկ 2022թ.-ին սկսեց ընդլայնվել Ղազախստանում, որտեղ ևս բացվեցին նոր ինովացիոն սրահներ: Արդյունքում 2024թ.-ին Ընկերությունը սահմանեց նոր ռեկորդ տեղական շուկայում՝ հատելով 1 միլիոն գրանցված օգտատերերի շեմը, իսկ առաքումների քանակը հասցվեց 10,000,000+ ծանրոցի:
- 2023թ.-ին Ընկերությունը ԱՄՆ-ում համագործակցություն սկսեց գերժամանակակից գերմանական Vitronic համակարգով համալրված պահեստի հետ՝ համալրված, որը ավտոմատացրեց ծանրոցների ընդունման տեսակավորման և առաքման ժամկետը, և մաքսիմալ նվազեցրեց խոտանի ռիսկը:

- 2024թ.-ին ք. Երևանի Արաբկիր համայնքում գործարկվեց Ընկերության սեփական մաքսային կարգո տերմինալը՝ համալրված ծանրոցների ընդունման և տեսակավորման ավտոմատ հոսքագծով:
- 2025թ.-ին կատարվեց գլոբալ ընդլայնում և առաքման նոր եղանակի մեկնարկ Չինաստան՝ ցամաքային ճանապարհով, ինչպես նաև բացվեց առաքման նոր ուղղություն դեպի Իսպանիա:

1.1.3. Թողարկողի ռազմավարությունը

Գլոբբինգի ռազմավարական տեսլականը միտված է նոր շուկաների նվաճմանը, տեխնոլոգիական առաջընթացի ապահովմանը և կայուն աճին:

Թողարկողի հիմնական ռազմավարական ուղղություններն են՝

Գլոբալ ընդլայնում. Գլոբբինգը շարունակաբար ընդլայնում է իր աշխարհագրական ներկայությունը՝ մուտք գործելով նոր շուկաներ և ավելացնելով առաքման ուղղությունները: Ընկերությունն արդեն գործում է մի քանի երկրներում և պլանավորում է ընդլայնվել՝ ապահովելով հաճախորդների հասանելիություն միջազգային խոշոր բրենդերին և առցանց խանութներին: Նոր ուղղությունները նպատակ ունեն նվազեցնել առաքման ժամկետները և բարելավել ընդհանուր հաճախորդի փորձը:

Նորարար տեխնոլոգիաներ. Գլոբբինգը ներդնում է առաջադեմ տեխնոլոգիական լուծումներ՝ իր լոգիստիկ և սպասարկման գործընթացները առավել արդյունավետ դարձնելու համար: Ռոբոտացված սպասարկման սրահները և սմարթ լոքերների (smart lockers) ցանցը հնարավորություն են տալիս հաճախորդներին ստանալ իրենց պատվերները ավելի արագ, ինքնասպասարկման ձևաչափով և առանց հերթերի: Բացի այդ, ընկերությունը զարգացնում է սեփական ավտոմատացված համակարգեր՝ պատվերների մոնիտորինգի, բաշխման և հաճախորդների աջակցության օպտիմալ կառավարման համար:

Համայնքային ներգրավվածություն. Գլոբբինգը կարևորում է սոցիալական պատասխանատվությունը՝ իրականացնելով տարբեր բարեգործական, կրթական և համայնքային ծրագրեր: Ընկերությունը մշտապես աջակցում է տեղական նախաձեռնություններին, կրթական հաստատություններին և երիտասարդների զարգացման ծրագրերին՝ նպաստելով հասարակության առաջընթացին և թվային ներառման մակարդակի բարձրացմանը:

Աճող ծավալներ. Ընկերության գործունեության ծավալները կայուն աճ են գրանցում: Ամեն տարի ավելանում է ինչպես գրանցված օգտատերերի քանակը, այնպես էլ առաքվող ծանրոցների ընդհանուր թիվը: Այս դրական միտումը վկայում է Գլոբբինգի

ծառայությունների նկատմամբ վստահության, հաճախորդների հավատարմության և շուկայի ընդլայնման հաջողության մասին:

Բրենդի ճանաչելիություն. Ընկերությունը ձևավորում է ուժեղ և վստահելի բրենդ միջազգային հարթակներում՝ բարձրացնելով իր հեղինակությունն ու ճանաչելիությունը: Ընկերությունը մասնակցում է ոլորտային համաժողովների, ստարտափ միջոցառումների, որտեղ ներկայացվում է որպես տարածաշրջանային առաջատար էլեկտրոնային առևտրի գործարկման հարթակ և լոգիստիկ բիզնես մոդելի օրինակ: Այս ռազմավարությունը նպաստում է ոչ միայն բրենդի վարկանիշի բարձրացմանը, այլև նոր գործընկերությունների և ներդրումային հնարավորությունների ստեղծմանը:

1.1.4. Թողարկողի կանոնադրական կապիտալը

Ընկերության կանոնադրական կապիտալը Ծրագրային ազդագիրը գրանցման ներկայացնելու օրվա դրությամբ կազմել է 132,442,400 (հարյուր երեսուներկու միլիոն չորս հարյուր քառասուներկու հազար չորս հարյուր) ՀՀ դրամ, որը բաղկացած է 132,442,400 (հարյուր երեսուներկու միլիոն չորս հարյուր քառասուներկու հազար չորս հարյուր) ՀՀ դրամ արժեքով մեկ բաժնեմասից և ամբողջությամբ վճարված է:

1.1.5. Բիզնեսի նկարագիրը

Գյուրբինգը միջազգային օնլայն գնումների հեղափոխական հարթակ է, որը վերացնում է սահմանները գնորդի և համաշխարհային շուկայի միջև: Այն հնարավորություն է տալիս օգտատերերին առանց որևէ սահմանափակման ձեռք բերել ապրանքներ աշխարհի խոշորագույն օնլայն խանութներից՝ օգտագործելով 9 տարբեր երկրների անվճար հասցեներ և ստանալով ծանոցները Հայաստանում՝ արագ, անվտանգ և հարմար ձևաչափով:

Ընկերությունը ձևավորել է ամբողջական օնլայն գնումների և լոգիստիկ էկոհամակարգ, որն առաջարկում է հետևյալ ծառայություններն ու լուծումները.

- Օնլայն գնումներ համաշխարհային խանութներից. օգտատերերը կարող են պատվիրել ապրանքներ աշխարհի ամենահայտնի օնլայն հարթակներից՝ Amazon, eBay, Zara, Shein, Apple, iHerb և այլ խանութներից՝ օգտագործելով ԱՄՆ, Մեծ Բրիտանիա, Գերմանիա, Իտալիա, Իսպանիա, Չինաստան, Դուբայ, Հունաստան և Ռուսաստանի հասցեները: Սա թույլ է տալիս օգտատերերին ձեռք բերել ապրանքներ, որոնք տեղական շուկայում հասանելի չեն կամ թանկ են:
- Ավտոմատացված սպասարկման սրահներ. ընկերությունը ներդրել է նորարար տեխնոլոգիաներ, որոնք հնարավորություն են տալիս հաճախորդներին ստանալ

ծանրոցները միջինում 20 վայրկյանում, առանց սպասման և մարդկային միջամտության: Այս համակարգը բարձրացնում է սպասարկման արագությունն ու հարմարավետությունը:

- Լոքերների (Smart Lockers) ցանց. հաճախորդները կարող են ընտրել իրենց հարմար վայրում գտնվող լոքերը և ստանալ ծանրոցները իրենց նախընտրած ժամանակին՝ առանց սպասարկման սրահ այցելելու անհրաժեշտության:
- Ֆրանչայզինգի միջազգային ծրագիր. Ընկերությունը ձևավորել է գործընկերային մոդել, որը թույլ է տալիս ֆրանչայզիներին տարբեր երկրներում ներդնել և գործարկել իր ծառայությունները՝ պահպանելով նույն որակը, տեխնոլոգիաներն ու հաճախորդային փորձը:
- Ժամանակակից պահեստներ և մաքսային կարգո համալիր. ընկերությունը տնօրինում է սեփական լոգիստիկ ենթակառուցվածք, որը ներառում է միջազգային պահեստներ և ավտոմատացված մաքսային համակարգեր՝ ապահովելով ծանրոցների արագ մշակում և հուսալի առաքում:
- Համայնքային և սոցիալական նախաձեռնություններ. Գլոբբինգը ակտիվորեն մասնակցում է բարեգործական, կրթական և նորարարական ծրագրերին՝ աջակցելով երիտասարդների զարգացմանը, թվային կրթության տարածմանը և համայնքների սոցիալական բարելավմանը:

Այս ծառայությունների և նորարարական մոտեցումների շնորհիվ Ընկերությունը դարձել է տարածաշրջանի առաջատար էլեկտրոնային առևտրի գործարկման հարթակներից մեկը՝ միաժամանակ հանդես գալով որպես տեխնոլոգիական, լոգիստիկ և սոցիալական ազդեցություն ունեցող բրենդ:


Թողարկողի բիզնես նկարագիրը առավել մանրամասն ներկայացված է սույն Ծրագրային ազդագրի 3.4 կետում:

1.1.6. Թողարկողի կազմակերպական կառուցվածքը

Ընկերության կառավարման մարմիններն են Ընկերության մասնակիցների ընդհանուր ժողովը, Ընկերության խորհուրդը և Ընկերության գործադիր մարմինը՝ տնօրենը: Ընկերության բարձրագույն կառավարման մարմինն է Ընկերության մասնակիցների ընդհանուր ժողովը: Ընկերության ընթացիկ կառավարումն ու ղեկավարումն իրականացնում է Ընկերության գլխավոր տնօրենը: Ընկերության միակ մասնակիցն է Շուշանիկ Հարությունյանը:

Ընկերությունը վերջինիս հսկողության տակ գտնվող «Գլոբբինգ» ՍՊԸ (այսուհետ՝ Գլոբբինգ Ղազախստան) հետ միասին հանդիսանում է Խումբ: Խմբի իրական շահառուն է հանդիսանում Դավիթ Հարությունյանը:

Խմբի սխեմատիկ կառուցվածքը ներկայացված է ստորև.



1.1.7. Ակտիվների որակը

2025թ.-ի հունիս 30-ի դրությամբ Ընկերության ընդհանուր ակտիվների մեծությունը կազմել է 5.9 միլիարդ ՀՀ դրամ: Նույն պահի դրությամբ կապիտալի համարժեքության գործակիցը (ընդհանուր կապիտալի հարաբերությունն ընդհանուր ակտիվներին) կազմել է 46%:

1.2. Թողարկողին և պարտատոմսերին առնչվող ռիսկերի համառոտ նկարագիրը

1.2.1. Թողարկողին առնչվող ռիսկերի համառոտ նկարագիրը

Իրավական և կանոնակարգային ռիսկեր. Սուրհանդակային կապի և փոստային կապի ծառայությունները Հայաստանում հանդիսանում է լիցենզավորվող գործունեություն և ենթարկվում է օրենսդրական կարգավորման: Այս խմբի ռիսկերը առնչվում են օրենսդրական այնպիսի փոփոխությունների հետ, որոնք կարող են կասեցնել կամ սահմանափակել որոշ ծառայությունների մատուցումը, ինչպես նաև նորմատիվ ակտերին անհամապատասխանության հետ և առաջացնել լիցենզավորման կամ հաշվետվողականության խախտումներ:

Ֆինանսական կամ մակրոտնտեսական ռիսկեր. Ընկերության գործունեությունը սերտորեն կապված է երկրի մակրոտնտեսական իրավիճակի հետ: Տնտեսական անկայունության, արժույթի արժեզրկման և շուկայական անկման արդյունքում ավելանում են օպերացիոն ծախսերը առաջանում են վճարունակության խնդիրներ, որոնք պայմանավորված են վճարումների ուշացմամբ կամ պարտքերի կուտակմամբ:

Մրցակցային ռիսկեր. Այս խմբի ռիսկերը առնչվում են ոլորտում գործունեություն ծավալող բազմաթիվ այլ մրցակից ընկերությունների թվաքանակի աճի հետ:

Տեխնոլոգիական ռիսկեր. Այս խմբի ռիսկերը առնչվում են դանդաղ, անկայուն, անարդյունավետ ծրագրային ապահովման, սերվերների խափանման, ցանցային վթարների, տվյալների արտահոսքերի, համակարգերի վրա հարձակումների հետ:

Լոգիստիկ ռիսկեր. Այս խմբի ռիսկերը առնչվում են այնպիսի տրանսպորտային խնդիրների հետ, որոնք կապված են չնախատեսված լոգիստիկ խնդիրների, մեքենաների խափանումների հետ: Առաքման սխալները նույնպես այս ռիսկային խմբում են, որոնք կապված են հասցեների սխալ նշմամբ, փաթեթների կորուստով:

Մարդկային ռիսկեր. Այս խմբի ռիսկերը առնչվում են աշխատակիցների անբավարար պատրաստվածություն հետ, որի արդյունքում տեղի է ունենում սխալ փաթեթավորում, սխալ առաքում, անհարկի ուշացումներ: Այս խմբին են պատկանում նաև աշխատուժի պակասը և հաճախորդների վատ սպասարկումը՝ դժգոհություններ, բողոքների աճ:

Իրացվելիության ռիսկ. Շուկայական իրավիճակի կտրուկ փոփոխության կամ Թողարկողի ֆինանսական վիճակի վատթարացման արդյունքում կարող է առաջանալ իրացվելիության ռիսկ: Հաշվի առնելով Թողարկողի գործունեության ոլորտը՝ իրացվելիության ռիսկեր կարող են առաջացնել Ընկերության հաճախորդների քանակային տատանումները: Այնուամենայնիվ, այդ տատանումները հակված չեն լինել սեզոնային:

Դեֆոլտի ռիսկ. Ներդրողն իր վրա է վերցնում ապագայում թողարկողի ֆինանսական վիճակի հնարավոր վատթարացման, պարտատոմսերի մայր գումարի կամ արժեկտրոնների վճարման անհնարինության, հավանական սնանկացման ռիսկը:

Աշխարհաքաղաքական ռիսկ. Աշխարհաքաղաքական, տարածաշրջանային եւ ներքաղաքական իրավիճակի անբարենպաստ փոփոխությունների արդյունքում հնարավոր է առաջ գան այնպիսի բացասական գործոններ, որոնք կարող են անբարենպաստ ազդեցություն ունենալ ընդհանուր մակրոտնտեսական իրավիճակի եւ թողարկողի ֆինանսական վիճակի վրա:

Թողարկողին առնչվող ռիսկերի մանրամասն նկարագրությունը կարող եք տեսնել Ծրագրային ազդագրի 3.2 կետում:

1.2.2. Պարտատոմսերին առնչվող ռիսկերի համառոտ նկարագիրը

Պարտատոմսերին առնչվող ռիսկերի մանրամասն նկարագրին կարող եք ծանոթանալ սույն Ծրագրային ազդագրի 2.1 կետում:

Շուկայական ռիսկ. շուկայական փոփոխականների (տոկոսադրույքներ, արտարժույթային փոխարժեքներ կամ տոկոսադրույքներ) տատանման հետևանքով ֆինանսական գործիքների ապագա դրամական հոսքերի կամ իրական արժեքի տատանման և դրա հետևանքով վնաս կրելու հավանականությունն է: Այն կարող է ի

հայտ գալ տնտեսությունում պարտատոմսերի գնի վրա ազդող գործոնների փոփոխության արդյունքում:

Տոկոսադրույքի ռիսկ. Հայաստանի ֆինանսական շուկայում առկա տոկոսադրույքների տատանումը կարող է բացասաբար ազդել պարտատոմսերի եկամտաբերության և իրացվելիության ցուցանիշների վրա:

Արտարժույթային ռիսկ. Առաջանում է ազգային արժույթի փոխարժեքի տատանումների արդյունքում և կարող է բացասական ազդեցություն ունենալ ներդրողի՝ պարտատոմսերից ստացված եկամուտի վրա, երբ ներդրողը եկամուտը գնահատում է դրամով:

Իրացվելիության ռիսկ. Շուկայական իրավիճակի կտրուկ փոփոխության կամ ընկերության ֆինանսական վիճակի վատթարացման արդյունքում կարող է առաջանալ իրացվելիության ռիսկ: Թողարկողը պարտատոմսերի իրացվելիությունը ապահովելու համար նախատեսում է գործողությունների պլան, սակայն չի կարող երաշխավորել, որ դրանք երկրորդային շուկայում ցանկացած պահին հնարավոր կլինի վաճառել կամ գնել ցանկալի գնով:

Կենտրոնացվածության ռիսկ. Սույն Ազդագրի հիման վրա թողարկված պարտատոմսերի 50%-ից ավել մասնաբաժինը մեկ կամ փոխկապակցված ներդրողների խմբի կողմից ձեռքբերման դեպքում կարող է առաջանալ Թողարկողի որոշումների վրա էական ազդեցություն ունենալու ռիսկ՝ սույն Ազդագրի 2.7 կետով սահմանված կովենանտների խախտման դեպքում համաձայնություն տալու հիմքով:

Գնաճի ռիսկ. Այն կորստի հավանականությունն է, որն առաջանում է ակտիվի կամ եկամտի նվազմամբ ներքին արժույթի արժեզրկման, ապա նաև գնաճի կտրուկ աճի արդյունքում:

Վերաներդրման ռիսկ. Այն ներդրողները, ովքեր պարտատոմսերը ձեռք են բերում դրանք մինչև մարումը պահելու նպատակով, պետք է հաշվի առնեն, որ իրենց վրա են վերցնում վերաներդրման ռիսկը, որը պայմանավորված է թողարկողի պարտատոմսերից պարբերաբար ստացվող արժեկտրոնային եկամուտների առնվազն համարժեք եկամտաբերությամբ ներդրում կատարելու հնարավորության հավանական բացակայությամբ:

Վարկային/դեֆոլտի ռիսկ. Ներդրողները կորպորատիվ պարտատոմս ձեռք բերելիս իրենց վրա են վերցնում Թողարկողի վարկային ռիսկը, որը կապված է ապագայում Թողարկողի ֆինանսական վիճակի հնարավոր վատթարացման, արժեկտրոնների վճարման կամ պարտատոմսերի մարման անհնարինության և հավանական սնանկացման հետ:

1.3. Թողարկողի տնտեսական գործունեության զարգացման և ֆինանսական վիճակի փոփոխության միտումները

Հիմնադրման պահից մինչ օրս Ընկերությունը գտնվում է ակտիվ աճի փուլում՝ պայմանավորված թե՛ նոր սպասարկման սրահների և առաքման այլ եղանակների ավելացմամբ (տուն առաքում, լոքերներ) և թե՛ նոր ուղղությունների բացմամբ, նոր ծառայությունների ներդրմամբ, հավատարմության բարձրացման նոր ծրագրերի ներդրմամբ, ինչպես նաև 1 հաճախորդի միջին չեկի ավելացմամբ:

Գործող ենթակառուցվածքների ծանրաբեռնվածության աճին և թիրախային հասույթին հասնելուն զուգահեռ EBITDA-ի աճի տեմպերը որոշակիորեն դանդաղել են, իսկ եկամտաբերությունը՝ կայունացել: EBITDA-ի աճի նոր աղբյուր կհանդիսանան նոր սպասարկման սրահները, նոր ծառայությունները և նոր մոտեցումները:

Այս զարգացման ընթացքում ընկերությունը կենտրոնացած է ներդրումային արդյունավետության բարձրացման վրա՝ օգտագործելով ներհոսող կապիտալը ոչ միայն ենթակառուցվածքների ընդլայնման, այլև գործառնությունների օպտիմալացման ուղղությամբ՝ ներդնելով թվային լուծումներ, արհեստական բանականություն և որակի բարձրացմանն ուղղված միջոցառումներ: Ակնկալվում է, որ հիմնական ծախսային ուղղություններում իրականացված բարելավումները կօգնեն պահպանել շահույթի մասնաբաժնի բարձր մակարդակը:

Առկա ռազմավարությունը ներառում է եկամուտների դիվերսիֆիկացման նոր միջոցներ՝ ավելացնելով եկամտի աղբյուրների բազմազանությունը: Այս քաղաքականությունը ներառում է նորարարական ծառայությունների ներդրում, որոնք կարող են ապահովել եկամտի լրացուցիչ հոսքեր:

Բացի այդ, կանխատեսվում է գործառնական ծախսերի իջեցում տեխնոլոգիաների և ավտոմատացման ներդրման շնորհիվ, ինչը կնվազեցնի ծախսերի բեռնվածությունը և կխթանի շահութաբերությունը: Նոր սպասարկման սրահների բացումը միջնաժամկետ հեռանկարում կնպաստի մատակարարման շղթայի արդյունավետության բարձրացմանը և ծախսերի օպտիմալացմանը:

Ներդրումային որոշումների ճկուն պլանավորումը կերաշխավորի ֆինանսական ռեսուրսների արդյունավետ բաշխումը՝ համապատասխան շուկայի պահանջներին և մրցակցային պայմաններին, ինչը թույլ կտա պահպանել ներդրումային կայունություն և ֆինանսական առողջություն նույնիսկ եկամուտների աճի տեմպերի դանդաղման պայմաններում:

Կառավարման գործող ծրագրերի շրջանակում կանխատեսվում է, որ առաջիկա 2-3 տարիների ընթացքում Ընկերությունը կմարի իր ընթացիկ վարկային պարտավորությունները՝ ֆինանսապես բեռնաթափվելով և ազատ դրամական միջոցները ավելացնելով: Վարկերի մարումը կնվազեցնի ֆինանսական ծախսերը,

ինչը թույլ կտա ուղղել ազատված միջոցները ընկերության ռազմավարական նպատակների իրագործմանը:

Պարտքային բեռի նվազեցման շնորհիվ ընկերությունը հնարավորություն կունենա խթանելու իր շահութաբերությունը՝ նույնիսկ եկամուտների աճի կայունացման և հարաբերական դանդաղման պայմաններում: Սա կտրուկ կբարձրացնի Ընկերության ֆինանսական ճկունությունը, ինչը թույլ կտա արագ արձագանքել շուկայի փոփոխություններին և ավելի արդյունավետ պլանավորել նոր ներդրումները:

1.4. Համառոտ տեղեկություններ Թողարկողի աուդիտն իրականացնող անձանց մասին

Թողարկողի ֆինանսական հաշվետվությունների 2023-2024թթ.-ի աուդիտն իրականացրել է «ԳՐԱՆԹ ԹՈՐՆԹՈՆ» ՓԲԸ կողմից՝ ինտերնետային կայք՝ <https://www.grantthornton.am/> :

1.5. Թողարկողի բաժնետերերի, կառավարման մարմինների կազմի և աշխատակիցների վերաբերյալ տեղեկատվություն

Ընկերության կառավարման մարմիններն են Ընկերության մասնակիցների Ընդհանուր ժողովը (այսուհետ՝ Ընդհանուր ժողով), Ընկերության խորհուրդը և Ընկերության գործադիր մարմինը՝ տնօրենը: Ընկերության բարձրագույն կառավարման մարմինն է Ընկերության մասնակիցների ընդհանուր ժողովը: Ընկերության միակ մասնակիցն է Շուշանիկ Հարությունյանը, ում պատկանում է Ընկերության բաժնեմասերի 100%-ը: Ընկերության ընթացիկ կառավարումն ու ղեկավարումն իրականացնում է Ընկերության գլխավոր տնօրենը:

Թողարկողի գործադիր մարմնի կառուցվածքը ներկայացված է ստորև.

Անուն Ազգանուն	Պաշտոն	Փորձառությունը ոլորտում
Շուշանիկ Հարությունյան	Տնօրեն	10 տարի

Թողարկողի խորհուրդը բաղկացած է 3 անդամից: Խորհրդի կառուցվածքը ներկայացված է ստորև.

Անուն Ազգանուն	Պաշտոն	Փորձառությունը ոլորտում
Դավիթ Հարությունյան	Խորհրդի նախագահ	11 տարի
Արամ Կալֆաջյան	Խորհրդի անդամ	4 տարի
Գրիգոր Բեքմեզյան	Խորհրդի անդամ	9 տարի

Թողարկողի աշխատակիցների ընդհանուր թիվը Ազդագիրը գրանցման ներկայացնելու օրվա դրությամբ կազմել է 289:

1.6. Առաջարկվող պարտատոմսերի հիմնական վիճակագրական տվյալները

Ընկերության կողմից թողարկվող պարտատոմսերը անվանական, ոչ փաստաթղթային, արժեկտրոնային, միջնաժամկետ պարտատոմսեր են և պետք է տեղաբաշխվեն 1 կամ ավելի տրանշով: Պարտատոմսերի վերջին տրանշի տեղաբաշխումն ավարտվում է ոչ ուշ, քան պարտատոմսերի ազդագիրը հրապարակելուց հետո 12 ամսվա ընթացքում:

Թողարկվող պարտատոմսերը տեղաբաշխվում և մարվում են այն արժույթով, որով թողարկվել են: Պարտատոմսերի դիմաց արժեկտրոնների վճարումը ևս կտարվում է պարտատոմսերի թողարկման արժույթով:

Արժեթղթերի տեսակը՝	Անվանական, արժեկտրոնային պարտատոմս
Արժեթղթերի ձևը՝	Ոչ փաստաթղթային
Արժեթղթերի անվանական արժեքը՝	50,000 (Հիսուն հազար) ՀՀ դրամ 100 (Հարյուր) ԱՄՆ դոլար
Արժեթղթերի թողարկման ընդհանուր քանակը՝	30,000 (Երեսուն հազար) հատ ՀՀ դրամով 40,000 (Քառասուն հազար) հատ ԱՄՆ դոլարով
Արժեթղթերի թողարկման ընդհանուր ծավալը՝	1,500,000,000 (Մեկ միլիարդ հինգ հարյուր միլիոն) ՀՀ դրամ 4,000,000 (Չորս միլիոն) ԱՄՆ դոլար,
Արժեթղթերի յուրաքանչյուր տրանշի տեղաբաշխման ծավալը՝	Ենթակա է որոշման Ընկերության Խորհրդի կողմից՝ յուրաքանչյուր տրանշի համար
Արժեթղթերի յուրաքանչյուր տրանշի տեղաբաշխման քանակը՝	Յուրաքանչյուր տրանշի ծավալին և անվանական արժեքին համապատասխան
Արժեթղթերի արժեկտրոնի տարեկան եկամտաբերությունը՝	Ենթակա է որոշման Ընկերության Խորհրդի կողմից՝ յուրաքանչյուր տրանշի համար

Արժեթղթերի շրջանառության ժամկետը՝	Ենթակա է որոշման Ընկերության Խորհրդի կողմից՝ յուրաքանչյուր տրանշի համար
Արժեկտրոնների վճարման հաճախականությունը՝	Ենթակա է որոշման Ընկերության Խորհրդի կողմից՝ յուրաքանչյուր տրանշի համար
Տեղաբաշխման ձևը՝	Չերաշխավորված

Տեղաբաշխված պարտատոմսերից ներգրավված միջոցներն օգտագործվելու են նոր ծառայությունների ներդրման, թվային լուծումների կիրառման, Հայաստանում լոքերային ծառայություններ մատուցող «Օնլայն շոփփինգ նեթվորք» ՍՊԸ-ում մասնաբաժնի ձեռքբերման, գործող վարկերի մասնակի վերաֆինանսավորման, ինչպես նաև Ղազախստանում նոր սպասարկման սրահների և լոքերային ցանցի ստեղծման ուղղությամբ:

1.7. Պարտատոմսերի առաջարկի ծրագրի համակողմանի նկարագիրը

Պարտատոմսերի թողարկման, տեղաբաշխման, շրջանառության ու մարման վերջնական պայմանները ենթակա են որոշման Թողարկողի կողմից պարտատոմսերի տեղաբաշխման սկիզբը որոշող ամսաթվից առնվազն 5 աշխատանքային օր առաջ: Արժեթղթերի յուրաքանչյուր թողարկման համար կազմվող թողարկման վերջնական պայմանները ՀՀ ԿԲ են ներկայացվում և հրապարակվում հրապարակային տեղաբաշխումը սկսելուց առնվազն 2 աշխատանքային օր առաջ:

Արժեթղթերի յուրաքանչյուր թողարկման վերջնական պայմանները Տեղաբաշխողը պարտավորվում է հրապարակել առնվազն իր ինտերնետային կայքում՝ www.conversebank.am :

1.8. Ամփոփ ֆինանսական տվյալներ

Թողարկողի ամփոփ ֆինանսական գործակիցների հաշվարկման բանաձևերը ներկայացված են Հավելված 2-ում:

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ ԱՄՓՈՓ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

հազար ՀՀ դրամ

Ցուցանիշի անվանումը	30/06/25	31/12/24	31/12/23
	աուդիտ չանցած	աուդիտ անցած	աուդիտ անցած

Արտադրանքի, ապրանքների, աշխատանքների, ծառայությունների իրացումից հասույթ	10,641,552.00	10,505,443.00	5,106,271
Իրացված արտադրանքի, ապրանքների, աշխատանքների, ծառայությունների ինքնարժեք	(6,006,394.00)	(6,146,152.00)	(2,862,357)
Համախառն շահույթ (վնաս)	4,635,158	4,359,291	2,243,914
Իրացման ծախսեր	(1,339,557.00)	(1,616,486.00)	(823,380)
Վարչական ծախսեր	(1,089,680.00)	(1,531,272.00)	(723,382)
Արտադրանքի, ապրանքների, աշխատանքների, ծառայությունների իրացումից շահույթ (վնաս)	2,205,921.00	1,211,533.00	697,152
Գործառնական այլ եկամուտներ	11,080.00	4,738.00	12,505
Գործառնական այլ ծախսեր	(238,969.00)	(91,867.00)	(46,847)
Գործառնական շահույթ (վնաս)	1,978,032.00	1,124,404.00	662,810
Ֆինանսական ծախսեր	(72,766.00)	(178,827.00)	(34,629)
Բաժնեմասնակցության մեթոդով հաշվառվող ներդրումների գծով շահույթ (վնաս)			
Ընդհատվող գործառնականը վերագրելի ակտիվների վաճառքներից և պարտավորությունների մարումներից շահույթ (վնաս)			
Այլ ոչ գործառնական շահույթ (վնաս)			1,293
Սովորական գործունեությունից շահույթ (վնաս)	1,905,266.00	945,577.00	629,473
Արտասովոր դեպքերից շահույթ (վնաս)			

Զուտ շահույթ (վնաս) նախքան շահութահարկի գծով	1,905,266	945,577	629,473
Շահութահարկի գծով ծախս (փոխհատուցում)	(360,998.00)	(218,991.00)	
Զուտ շահույթ (վնաս) շահութահարկի գծով ծախսի	1,544,268	726,586	629,473

ԱՄՓՈՓ ՀԱՇՎԱՊԱՀԱԿԱՆ ՀԱՇՎԵԿՇԻՌ

հազար ՀՀ դրամ

Ցուցանիշի անվանումը	30/06/25 աուդիտ չանցած	31/12/24 աուդիտ անցած	31/12/23 աուդիտ անցած
Հիմնական միջոցներ	497,852	526,023	373,737
Անավարտ ոչ ընթացիկ նյութական ակտիվներ	-	-	-
Ոչ նյութական ակտիվներ	211,929	226,636	190,298
Բաժնեմասնակցության մեթոդով հաշվառվող ներդրումներ	-	-	-
Այլ ոչ ընթացիկ ֆինանսական ակտիվներ	143,966	81,206	195,447
Այլ ոչ ընթացիկ ակտիվներ	723,129	859,006	851,630
Ընդամենը ոչ ընթացիկ ակտիվներ	1,576,876	1,692,871	1,611,112
Պաշարներ	49,564	28,319	10,220
Տրված ընթացիկ կանխավճարներ	1,517,308	1,290,940	776,647
Դեբիտորական պարտքեր վաճառքների գծով	2,403,565	1,920,376	1,521,336

Այլ դերհտորական պարտքեր	-	-	-
Ընթացիկ ֆինանսական ներդրումներ	-	-	-
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	50,324	77,102	273,841
Այլ ընթացիկ ակտիվներ	377,013	-	-
Ընդամենը ընթացիկ ակտիվներ	4,397,774	3,316,737	2,582,044
Ընդամենը ակտիվներ	5,974,650	5,009,608	4,193,156
Կանոնադրական (բաժնեհավաք) կապիտալի զուտ գումար	132,443	40,443	40,443
Էմիսիոն եկամուտ	-	-	-
Կուտակված շահույթ	2,688,356	2,359,417	1,566,601
Պահուստային կապիտալ	-	-	-
Սեփական կապիտալի այլ տարրեր	(77,201)	(77,201)	(10,971)
Ընդամենը սեփական կապիտալ	2,743,598	2,322,659	1,596,073
Երկարաժամկետ բանկային վարկեր և փոխառություններ	711,312	316,638	552,612
Այլ ոչ ընթացիկ պարտավորություններ	799,842	799,842	813,696
Ընդամենը ոչ ընթացիկ պարտավորություններ	1,511,154	1,116,480	1,366,308
Կարճաժամկետ բանկային վարկեր և փոխառություններ	222,665	347,946	221,003
Կրեդիտորական պարտքեր գնումների գծով	1,392,637	1,063,786	504,315
Ստացված ընթացիկ կանխավճարներ	-	-	-

Այլ կրեդիտորական պարտքեր	30,273	10,088	393,497
Այլ ընթացիկ պարտավորություններ	74,323	148,649	111,960
Ընդամենը ընթացիկ պարտավորություններ	1,719,898	1,570,469	1,230,775
Ընդամենը պարտավորություններ	3,231,052	2,686,949	2,597,083
Ընդամենը սեփական կապիտալ և պարտավորություններ	5,974,650	5,009,608	4,193,156

ԴՐԱՄԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՀՈՍՔԵՐԻ ՄԱՍԻՆ ԱՄՓՈՓ ՏՎՅԱԼՆԵՐ

հազար ՀՀ դրամ

Ցուցանիշի անվանումը	30/06/25 <i>աուդիտ չանցած</i>	31/12/24 <i>աուդիտ անցած</i>	31/12/23 <i>աուդիտ անցած</i>
Դրամական միջոցների մնացորդը հաշվետու ժամանակաշրջանի սկզբին	77,102	273,841	85,701
Գործառնական գործունեությունից դրամական միջոցների զուտ հոսքեր	(63,361)	962,022	1,298,027
Ներդրումային գործունեությունից դրամական միջոցների զուտ հոսքեր	(121,079)	(769,010)	(557,971)
Ֆինանսական գործունեությունից դրամական միջոցների զուտ հոսքեր	157,662	(389,751)	(551,916)

Դրամական միջոցների մնացորդը հաշվետու ժամանակաշրջանի վերջին	50,324	77,102	273,841
--	--------	--------	---------

ԱՄՓՈՓ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԳՈՐԾԱԿԻՑՆԵՐ

Ցուցանիշի անվանումը	30/06/25 <i>աուդիտ չանցած</i>	31/12/24 <i>աուդիտ անցած</i>	31/12/23 <i>աուդիտ անցած</i>
Զուտ շահույթը մեկ բաժնետոմսի հաշվով (EPS)	N/A	N/A	N/A
Սեփական կապիտալի շահութաբերություն (ROE)	23%	31%	97%
Ակտիվների շահութաբերություն (ROA)	11%	15%	37%
Զուտ շահույթի մարժա (NPM)	12%	7%	15%
Կապիտալի համարժեքության գործակից	0.46	0.46	0.38
Ֆինանսական կախվածության գործակից	1.18	1.16	1.63
Բացարձակ իրացվելիության գործակից	0.03	0.05	0.22
Ընթացիկ իրացվելիության գործակից	2.31	2.09	2.09
Ընդհանուր իրացվելիության գործակից	2.56	2.11	2.10
Դեբիտորական պարտքերի շրջանառելիության գործակից	2.12	5.47	6.99
Դեբիտորական պարտքերի շրջապտույտի տևողությունն օրերով	172	67	52
Պաշարների շրջանառելիության գործակից	57.75	217.03	587.71

Պաշարների շրջապտույտի տևողությունն օրերով	6	2	0.6
Կրեդիտորական պարտքերի շրջանառելիության գործակից	95	609	15
Կրեդիտորական պարտքերի շրջապտույտի տևողությունն օրերով	4	1	24

ԾԱՆՈՒՑՈՒՄ ՆԵՐԴՐՈՂԻՆ

ԱՄՓՈՓԱԹԵՐԹԸ ՊԵՏՔ Է ԴԻՏՎԻ ՈՐՊԵՍ ԾՐԱԳՐԱՅԻՆ ԱԶԴԱԳՐԻ ՆԵՐԱԾԱԿԱՆ ՀԱՄԱՌՈՏ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ: ԱՌԱՋԱՐԿՎՈՂ ԱՐԺԵԹՂԹԵՐՈՒՄ ՆԵՐԴՐՈՒՄ ԱՆԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՆԵՐԴՐՈՂԻ ՈՐՈՇՈՒՄԸ ՊԵՏՔ Է ՀԻՄՆՎԱԾ ԼԻՆԻ ԱՄԲՈՂՋԱԿԱՆ ԾՐԱԳՐԱՅԻՆ ԱԶԴԱԳՐԻ ՎՐԱ: ԱՄՓՈՓԱԹԵՐԹԻ ԿԱԶՄՄԱՆ ՀԱՄԱՐ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ ԱՆՁՆ ԱՄՓՈՓԱԹԵՐԹՈՒՄ ՊԱՐՈՒՆԱԿՎՈՂ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ՈՉ ԱՄԲՈՂՋԱԿԱՆ ԿԱՄ ԱՊԱԿՈՂՄՆՈՐՈՇԻՉ ԼԻՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ (ԱՅԴ ԹՎՈՒՄ՝ ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅԱՆԸ ՎԵՐԱԲԵՐՈՂ ՄԱՍՈՎ) ԿՐՈՒՄ Է ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆ, ԵԹԵ ԱՅՆ ՈՉ ԱՄԲՈՂՋԱԿԱՆ ԿԱՄ ԱՊԱԿՈՂՄՆՈՐՈՇԻՉ Է ԾՐԱԳՐԱՅԻՆ ԱԶԴԱԳՐԻ ՄՅՈՒՄ ՄԱՍԵՐԻ ՀԵՏ ԴԻՏԱՐԿԵԼՈՒ ԴԵՊՔՈՒՄ:

ԲԱԺԻՆ 2. ԱՌԱՋԱՐԿՎՈՂ ՊԱՐՏԱՏՈՄՍԵՐԻ ՄԱՍԻՆ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ

2.1. Ռիսկային գործոններ

Սույն Ծրագրային ազդագրով առաջարկվող պարտատոմսերում ներդրումը կապված է որոշակի ռիսկերի հետ: Պոտենցիալ ներդրողը, մինչև պարտատոմսերում ներդրում կատարելու մասին որոշում ընդունելը, պետք է շրջահայաց լինի և հաշվի առնի ստորև բերված ռիսկերը և սույն Ծրագրային ազդագրում ներառված այլ տեղեկատվությունը, ինչպես նաև իր փորձը, նպատակները, ֆինանսական ռեսուրսները, ռիսկի ակտիվակցությունը և եկամուտի սպասումները: Ներկայացված ռիսկերից յուրաքանչյուրը կամ դրանցից մի քանիսը կարող են բացասաբար անդրադառնալ շուկայում տիրող իրավիճակի վրա և բերել պարտատոմսերի գնի կամ իրացվելիության անկման: Նշվածի արդյունքում ներդրողը կարող է կորցնել ներդրված գումարը կամ դրա մի մասը:

Ռիսկի ստանձնումը ֆինանսական գործունեության անբաժանելի մասն է ու հետևանքը և ներդրողը պետք է հաշվի առնի, որ պարտատոմսերում ներդրումները ենթակա են որոշակի ռիսկերի, որոնք կապված են ոչ միայն Թողարկողի ֆինանսատնտեսական վիճակից և գործունեության արդյունքից, այլ նաև ֆինանսական շուկայում տիրող իրավիճակից (շուկայական ռիսկ): Պոտենցիալ ներդրողը պետք է գիտակցի, որ ստորև բերված ռիսկերը ոչ բոլոր ռիսկերն են, որ երբևէ կարող են ի հայտ գալ: Թողարկողը բացահայտել է միայն այն ռիսկերը, որոնք ազդագրի կազմման ընթացքում հայտնի են եղել իրեն և նա համարել է էական: Ենթադրաբար, կարող են լինել լրացուցիչ ռիսկեր, որոնք թողարկողն այժմ չի համարում էական կամ որոնք ներկայումս հայտնի չեն, և ցանկացած այդպիսի ռիսկ կարող է թողնել վերևում նշված ազդեցությունն ու հետևանքը:

Ներդրողը ներդրում կատարելու մասին որոշում ընդունելու համար պետք է մանրամասն ուսումնասիրի սույն փաստաթղթում ներկայացված ռիսկերն ու այլ տեղեկատվությունը:

Ներդրողները նաև պետք է խորհրդակցեն իրենց իրավաբանների հետ՝ պարզելու համար, թե արդյո՞ք պարտատոմսերում ներդրումը հանդիսանում է իրավաբանորեն թույլատրելի ներդրում, և ինչպես ու ինչ ձևով պարտատոմսերը կարող են օգտագործվել որպես գրավի առարկա զանազան փոխառությունների համար:

Շուկայական ռիսկը շուկայական փոփոխականների (տոկոսադրույքներ, արտարժույթային փոխարժեքներ կամ տոկոսադրույքներ) տատանման հետևանքով ֆինանսական գործիքների ապագա դրամական հոսքերի կամ իրական արժեքի տատանման և դրա հետևանքով վնաս կրելու հավանականությունն է: Այն կարող է ի հայտ գալ տնտեսությունում պարտատոմսերի գնի վրա ազդող գործոնների փոփոխության արդյունքում: Երկրորդային շուկայում Թողարկողի պարտատոմսերի գինը և դրանց նկատմամբ պահանջարկը կարող է փոխվել ներքին և արտաքին շուկաների տնտեսական

ցուցանիշների փոփոխության արդյունքում, ինչը կարող է հանգեցնել ներդրողի կորուստներին: Շուկայական ռիսկը ներառում է տոկոսադրույքների, գնային, արտարժույթի և կապիտալի գործիքների գնային ռիսկերը: Շուկայական ռիսկի հիմնական տարատեսակներն են տոկոսադրույքի ռիսկը և արտարժույթային ռիսկը:

Տոկոսադրույքի ռիսկ. Հայաստանի ֆինանսական շուկայում առկա տոկոսադրույքների տատանումը կարող է բացասաբար ազդել պարտատոմսերի եկամտաբերության և իրացվելիության ցուցանիշների վրա: Շուկայում տոկոսադրույքների բարձրացումը կարող է բերել նաև Թողարկողի պարտատոմսերի եկամտաբերության վերանայման (բարձրացման), ինչն իր հերթին կբերի գնի անկման: Այս պարագայում պարտատոմսերը մինչև մարումը վաճառելու դեպքում ներդրողը կունենա կորուստներ կամ չի ստանա նախատեսված եկամուտը:

Արտարժույթային ռիսկ. Առաջանում է ազգային արժույթի փոխարժեքի տատանումների արդյունքում և կարող է բացասական ազդեցություն ունենալ ներդրողի՝ պարտատոմսերից ստացված եկամուտի վրա, երբ ներդրողը եկամուտը գնահատում է դրամով: Այս ռիսկը կարող է առաջանալ փոխարժեքի կտրուկ տատանումների, արտարժույթով արտահայտված ակտիվների և պարտավորությունների ոչ ճիշտ կառավարման արդյունքում՝ հանգեցնելով կորուստների: Մասնավորապես, ազգային արժույթի արժևորման դեպքում, արտարժույթով արտահայտված պարտատոմսերի մարումից ստացված գումարները փոխարկելու դեպքում, ՀՀ դրամով հաշվարկված եկամուտը կարող է նախատեսվածից քիչ (բացասական) լինել:

Իրացվելիության ռիսկ. Շուկայական իրավիճակի կտրուկ փոփոխության կամ թողարկողի ֆինանսական վիճակի վատթարացման արդյունքում կարող է առաջանալ իրացվելիության ռիսկ: Թողարկողը պարտատոմսերի իրացվելիությունը ապահովելու համար նախատեսում է գործողությունների պլան (արժեկտրոնների պարբերական վճարում, մրցակցային եկամտաբերություն, ցուցակում և կարգավորվող շուկայում առևտրին թույլտվություն, շուկա ստեղծողի պայմանագրի կնքում համապատասխան ընկերությունների հետ), սակայն չի կարող երաշխավորել, որ դրանք երկրորդային շուկայում ցանկացած պահին հնարավոր կլինի վաճառել կամ գնել ցանկալի գնով: Հնարավոր է, որ պարտատոմսերի սեփականատերը չկարողանա նախընտրած պահին վաճառել պարտատոմսերի ցանկալի քանակը կամ ստիպված լինի այն վաճառել ցածր գնով՝ կրելով վնասներ:

Կենտրոնացվածության ռիսկ. Սույն Ազդագրի հիման վրա թողարկված պարտատոմսերի 50%-ից ավել մասնաբաժինը մեկ կամ փոխկապակցված ներդրողների խմբի կողմից ձեռքբերման դեպքում կարող է առաջանալ Թողարկողի որոշումների վրա էական ազդեցություն ունենալու ռիսկ՝ սույն Ազդագրի 2.7 կետով սահմանված կովենանտների խախտման դեպքում համաձայնություն տալու հիմքով:

Գնաճի ռիսկ. Այն կորստի հավանականությունն է, որն առաջանում է ակտիվի կամ եկամտի նվազմամբ ներքին արժույթի արժեզրկման, ապա նաև գնաճի կտրուկ աճի արդյունքում: Այլ կերպ ասած՝ ապագա գնաճը կբերի դրամական հոսքերի գնողունակության անկման: Գնաճի առկայության պայմաններում ներդրողները պետք է հաշվի առնեն, որ իրենց կողմից ստացվելիք իրական եկամտաբերությունը կարող է ավելի ցածր լինել (գնաճի չափով), քան Թողարկողի կողմից առաջարկվող անվանական արժեկտրոնային եկամտաբերությունը:

Վերաներդրման ռիսկ. Այն ներդրողները, ովքեր պարտատոմսերը ձեռք են բերում դրանք մինչև մարումը պահելու նպատակով, պետք է հաշվի առնեն, որ իրենց վրա են վերցնում վերաներդրման ռիսկը, որը պայմանավորված է թողարկողի պարտատոմսերից պարբերաբար ստացվող արժեկտրոնային եկամուտների առնվազն համարժեք եկամտաբերությամբ ներդրում կատարելու հնարավորության հավանական բացակայությամբ: Այսինքն՝ նրանք իրենց վրա են վերցնում պարբերաբար ստացվող արժեկտրոնները կամ մարումից առաջացած գումարը առնվազն նույն եկամտաբերությամբ վերաներդնելու հնարավորության բացակայության ռիսկը: Հավանական է, որ այս ռիսկը որոշում կայացնելու համար էական դեր չի խաղում ընթացիկ կամ կարճաժամկետ ներդրումային հորիզոն ունեցող ներդրողների համար:

Վարկային/դեֆոլտի ռիսկ. Ներդրողները կորպորատիվ պարտատոմս ձեռք բերելիս իրենց վրա են վերցնում Թողարկողի վարկային ռիսկը, որը կապված է ապագայում Թողարկողի ֆինանսական վիճակի հնարավոր վատթարացման, արժեկտրոնների վճարման կամ պարտատոմսերի մարման անհնարինության և հավանական սնանկացման հետ:

2.2. Հիմնական տեղեկատվություն

Ընկերության կողմից պարտատոմսերի տեղաբաշխման արդյունքում ներգրավված միջոցները բաշխվելու են հետևյալ համամասնությամբ՝

- Մոտավորապես 1 մլն ԱՄՆ դոլար ուղղվելու է Ընկերության առկա դոլարային վարկի վերաֆինանսավորմանը,
- մոտ 2,7 մլն դոլար (կամ համարժեք այլ արժույթ) նախատեսվում է ներդնել Ղազախստանում, որոնց շնորհիվ կկառուցվեն թվով 13 նոր սպասարկման սրահներ ու նոր լոքերային ցանց, որը կներառի 222 հատ լոքեր,
- մոտ 4,3 մլն ԱՄՆ դոլար (կամ համարժեք այլ արժույթ) նախատեսվում է ուղղել լոքերային ծառայություններ մատուցող «Օնլայն Շոփփինգ Նեթվորք» ՍՊԸ 100% բաժնեմասի ձեռքբերմանը:

2.3. Պարտատոմսերի վերաբերյալ տեղեկատվություն

2.3.1. Արժեթղթերի տեսակը և դասը

Թողարկվող պարտատոմսերն անվանական, ոչ փաստաթղթային, արժեկտրոնային, միջնաժամկետ և ոչ փոխարկելի պարտատոմսեր են:

2.3.2. Երկիրը

Պարտատոմսերը թողարկվելու են ՀՀ տարածքում՝ համաձայն Կիրառելի օրենսդրության և իրավակարգավորումների: Պարտատոմսերին առնչվող վեճերի և դատական գործընթացների դեպքում դրանք կկարգավորվեն Կիրառելի օրենսդրության համաձայն՝ բացառությամբ այն դեպքերից, երբ թողարկողը առանձին ներդրողների հետ կկնքի այլ պայմանագիր/համաձայնագիր:

Կիրառելի Օրենսդրություն – Հայաստանի Հանրապետության բոլոր կիրառելի օրենքները, օրենքի ուժ ունեցող իրավական ակտերը, ենթաօրենսդրական ակտերը, կանոնակարգերը, կարգավորումները, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության կողմից վավերացված և ուժ ունեցող միջազգային պայմանագրերը, դատական ակտերը, սովորույթային կամ ընդհանուր իրավունքը, ինչպես նաև ցանկացած պետական սահմանափակում կամ ընդհանուր բնույթի հրահանգ, դիրեկտիվ, որը տրվել է Հայաստանի Հանրապետության ցանկացած լիազոր պետական մարմնի կողմից՝ յուրաքանչյուր դեպքում՝ փոփոխված, վերաշարադրված կամ փոխարինված, վերանայված ձևով:

2.3.3. Արժեթղթերի ձևը

Թողարկվող պարտատոմսերը ոչ փաստաթղթային են, իսկ պարտատոմսերի ռեեստրը վարելու է «Հայաստանի Կենտրոնական դեպոզիտարիա» ԲԲԸ (ՀՀ, ք.Երևան, 0010, Վազգեն Սարգսյան 26/1, Էրեբունի Պլազա 5-րդ հարկ, հեռ (+374) 60 615555՝ ըստ «Հայաստանի Կենտրոնական դեպոզիտարիա» ԲԲԸ-ի համապատասխան կանոնների, ընթացակարգերի: Հաշվի օպերատորն է «Կոնվերս Բանկ» ՓԲԸ-ն:

2.3.4. Արժեթղթերի անվանական արժեքը և քանակը

Թողարկվող և տեղաբաշխվող պարտատոմսերից յուրաքանչյուրի անվանական արժեքը 50,000 (Հիսուն հազար) ՀՀ դրամ է ՀՀ դրամով թողարկվող պարտատոմսերի համար և 100 (Հարյուր) ԱՄՆ դոլար՝ ԱՄՆ դոլարով թողարկվող պարտատոմսերի համար: Ընկերության կողմից թողարկվող պարտատոմսերի ընդհանուր ծավալը կազմում է 1,500,000,000 (Մեկ միլիարդ հինգ հարյուր միլիոն) ՀՀ դրամ և 4,000,000 (Չորս միլիոն) ԱՄՆ դոլար: Թողարկվող և տեղաբաշխվող պարտատոմսերի քանակը 30,000 (Երեսուն հազար) հատ ՀՀ դրամով և 40,000 (Քառասուն հազար) հատ ԱՄՆ դոլարով: Յուրաքանչյուր տրանշով տեղաբաշխվող պարտատոմսերի ծավալը ենթակա է որոշման

Ընկերության Խորհրդի կողմից: Յուրաքանչյուր տրանշով տեղաբաշխվող պարտատոմսերի քանակը կորոշվի տվյալ տեղաբաշխման ծավալին և անվանական արժեքին համապատասխան:

2.3.5. Թողարկման արժույթը

Պարտատոմսերը թողարկվելու են ՀՀ դրամով և ԱՄՆ դոլարով:

2.3.6. Պարտատոմսերի դասակարգման մասին տեղեկատվություն

Համաձայն ՀՀ Քաղաքացիական օրենսգրքի՝ Թողարկողի լուծարման դեպքում նրա պարտատերերի պահանջները բավարարվում են հետևյալ հերթականությամբ՝

1. առաջին հերթին բավարարվում են լուծարվող իրավաբանական անձի գույքի գրավով ապահովված պարտավորություններով պարտատերերի պահանջները,
2. երկրորդ հերթին բավարարվում են այն քաղաքացիների պահանջները, որոնց առջև լուծարվող իրավաբանական անձը պատասխանատվություն է կրում նրանց կյանքին կամ առողջությանը վնաս պատճառելու համար՝ համապատասխան պարբերական վճարումների կապիտալացման միջոցով.
3. երրորդ հերթին վճարվում է աշխատանքային պայմանագրով աշխատող անձանց արձակման նպաստների, աշխատավարձի և հեղինակային պայմանագրերով վարձատրությունը
4. չորրորդ հերթին մարվում է բյուջե, շրջակա միջավայրի պահպանության դրամագլխին կատարվող պարտադիր վճարների պարտքը.
5. հինգերորդ հերթին հաշվարկներ են կատարվում մնացած պարտատերերի հետ՝ բացառությամբ ստորադաս փոխառություններով պարտատերերի.
6. վեցերորդ հերթին հաշվարկներ են կատարվում ստորադաս փոխառություններով պարտատերերի հետ:

Միևնույն հերթի պարտատերերն/սեփականատերերն ունեն իրենց պահանջների բավարարման հավասար իրավունքներ:

Թողարկողի կողմից առաջարկվող պարտատոմսերի սեփականատերերի պահանջները բավարարվում են հինգերորդ հերթին:

Թողարկողի կողմից առաջարկվող պարտատոմսերի միևնույն հերթի պարտատերերի/սեփականատերերի պահանջները բավարարվում են նախորդ հերթի պահանջները լրիվ բավարարվելուց հետո:

Եթե լուծարումը պայմանավորված է Թողարկողի սնանկությամբ, ապա համաձայն «Սնանկության մասին» ՀՀ օրենքի՝ պարտատերերի պահանջները բավարարվում են հետևյալ հերթականությամբ՝

1. Առաջին հերթին բավարարվում են լուծարվող իրավաբանական անձի գույքի գրավով ապահովված պարտավորությունների մասով պարտատերերի պահանջները,
2. Երկրորդ հերթին վճարվում են կառավարչի վարձատրությունը և վարչական ծախսերը,
3. Երրորդ հերթին բավարարվում են քաղաքացիների՝ կյանքի կամ առողջության հետ կապված պահանջները,
4. Չորրորդ հերթին բավարարվում են աշխատանքային պայմանագրերից բխող պահանջները, և կատարվում են հեղինակային պայմանագրերով վարձատրությունների վճարումները,
5. Հինգերորդ հերթին կատարվում են դատական ծախսերը,
6. Վեցերորդ հերթին բավարարվում են պարտապանին սնանկ ճանաչելու մասին դատարանի վճիռն օրինական ուժի մեջ մտնելուց հետո պարտապանի գույքի իրացումից ծագող հարկային պարտավորությունները,
7. Յոթերորդ հերթին բավարարվում են այն չապահովված պահանջները, որոնք առաջացել են պարտապանի կողմից ստանձնած պարտավորությունների նկատմամբ՝ թույլատրված դատարանի կողմից մինչև պարտատերերի պահանջների վերջնական ցուցակի հաստատումը,
8. Ութերորդ հերթին բավարարվում են այն չապահովված պահանջները, որոնք առաջացել են պարտապանին սնանկ ճանաչելու մասին վճիռն օրինական ուժի մեջ մտնելու պահից՝ «Սնանկության մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգով իրականացված գործառնությունների հետևանքով,
9. Իններորդ հերթին բավարարվում են չապահովված պարտատերերի պահանջները, ներառյալ՝ պարտադիր սոցիալական վճարները, հարկային պարտավորությունները և դատական ծախսերի գումարը, բացառությամբ ստորադաս չապահովված պարտատերերի պահանջների,
10. Տասներորդ հերթին բավարարվում են ստորադաս չապահովված պարտատերերի պահանջները, ներառյալ՝ պարտապանին իր հիմնադիրների (մասնակիցների, բաժնետերերի, անդամների կամ գործընկերների) կողմից տրամադրված վարկերից, փոխառություններից կամ այլ ներդրումներից առաջացած չապահովված պահանջները, պարտապանի կողմից տեղաբաշխված տասը տարի և ավելի ժամկետ ունեցող պարտատոմսերով, ինչպես նաև արտոնյալ արժեթղթերով ներկայացված պահանջները և ստորադաս փոխառություններից բխող պահանջները,
11. Այնուհետև բավարարվում են «Սնանկության մասին» ՀՀ օրենքով սահմանված մյուս պահանջները:

Յուրաքանչյուր հերթի պարտատերերի պահանջները բավարարվում են նախորդ հերթի պարտատերերի պահանջները լրիվ բավարարվելուց հետո: Թողարկողի կողմից

առաջարկվող Պարտատոմսերի սեփականատերերի պահանջները բավարարվում են իններորդ հերթին:

Պարտատոմսերի վերադասակարգման պայմաններ չեն նախատեսվում:

2.3.7. Արժեթղթերից բխող հիմնական իրավունքները, պարտականությունները և սահմանափակումները

Պարտատոմսերի ձեռք բերմամբ պարտատոմսերի սեփականատերերը ստանում են հետևյալ **իրավունքները**.

- Ստանալ պարտատոմսով նախատեսված արժեկտրոնները և պարտատոմսի մարման գումարը՝ համաձայն սույն Ծրագրային ազդագրով սահմանված կարգի:
- Պարտատոմսերի արժեկտրոնները և/կամ մարման գումարը սույն Ծրագրային ազդագրով սահմանված ժամկետից ուշացնելու դեպքում օգտվել օրենքով իրեն վերապահված պարտատիրոջ իրավունքներից:
- Իր ցանկությամբ օտարել պարտատոմսերը ֆոնդային բորսայում (ցուցակված և առևտրին թույլատրված լինելու դեպքում) կամ արտաբորսայում՝ օրենքով սահմանված կարգով. Ընդ որում ներդրողները պետք է հաշվի առնեն, որ ՀՀ օրենսդրությամբ չի թույլատրվում կարգավորվող շուկայից (ֆոնդային բորսա) դուրս վաճառել կարգավորվող շուկայում առևտրի թույլատրված կորպորատիվ արժեթղթեր: Բացառություն են կազմում.
 - ՀՀ ԿԲ կողմից կնքվող գործարքները: Դրանք ՀՀ ԿԲ և Ֆինանսական շուկայի մասնագիտացված ընկերությունների միջև հնարավոր գործարքներն են,
 - Թողարկողի կողմից իր թողարկած արժեթղթերի հետգնման կամ ձեռքբերման գործարքները:
- Օրենքով սահմանված կարգով գրավադրել պարտատոմսերը:
- Օրենքով նախատեսված այլ իրավունքներ:

Պարտատոմսերի ձեռք բերմամբ սեփականատերերը **պարտավորվում են** պարտատոմսերի թողարկման պայմաններում սահմանված ժամկետներում իրականացնել պարտատոմսերի ձեռքբերման համար անհրաժեշտ գումարների փոխանցում համապատասխան բանկային հաշվին:

2.3.8. Արժեկտրոնի տոկոսադրույքը և դրա վճարման պայմանները

Պարտատոմսերի յուրաքանչյուր տրանշի վճարվող արժեկտրոնի տարեկան տոկոսադրույքն ենթակա է որոշման Ընկերության խորհրդի կողմից:

Արժեկտրոնները (տոկոսագումարները) ստանալու իրավունք ունեն պարտատոմսերի արժեկտրոնների հաշվարկման օրվան նախորդող օրը պարտատոմսերի սեփականատերերի/անվանատերերի ռեեստրի փակման դրությամբ պարտատոմսերի սեփականատերերի/անվանատերերի ռեեստրում գրանցված անձինք (սեփականատերերը կամ անվանատերերը):

Պարտատոմսերի սեփականատերերի/անվանատերերի ռեեստրը փակվելու է պարտատոմսերի հերթական արժեկտրոնների հաշվարկման օրվան նախորդող օրվա ժամը 18:00-ին, այսինքն՝ նշված ժամից հետո ռեեստրում գրանցված սեփականատերերը/անվանատերերը չեն կարող օգտվել նախորդող արժեկտրոնային ժամանակաշրջանի համար վճարվող արժեկտրոնի ստացման իրավունքից:

Թողարկողն արժեկտրոնների հաշվարկման օրվան նախորդող օրվա ժամը 18:00-ի դրությամբ Ռեեստրավարից վերցնում է պարտատոմսերի սեփականատերերի/անվանատերերի ռեեստրից քաղվածք, որի հիման վրա պարտատոմսերի սեփականատերերին՝ նրանց բանկային հաշիվներին անկանխիկ փոխանցման միջոցով, վճարում է համապատասխան գումարները:

Թողարկողը արժեկտրոնների հաշվարկման (վճարման) օրը պարտատոմսերի սեփականատերերի և/կամ անվանատերերի ռեեստրի հիման վրա պատրաստում է տեղեկանք պարտատոմսերի արժեկտրոնների գումարներ ստանալու իրավունք ունեցող անձանց (սեփականատերեր կամ անվանատերեր) վերաբերյալ՝ ներառյալ արժեկտրոնների գումարի փոխանցման համար անհրաժեշտ տվյալները:

ՀՀ դրամով և ԱՄՆ դոլարով պարտատոմսերի դիմաց արժեկտրոնային վճարումները հաշվարկվելու և վճարվելու են համապատասխանաբար ՀՀ դրամով և ԱՄՆ դոլարով: ԱՄՆ դոլարով պարտատոմսերի արժեկտրոնային վճարումների համար նախատեսվող գումարները հաշվարկվում են ստորակետից հետո երկու նիշի ճշտությամբ, ՀՀ դրամով պարտատոմսերի արժեկտրոնային վճարումների համար նախատեսվող գումարները հաշվարկվում են ստորակետից հետո մեկ նիշի ճշտությամբ: Կլորացումը կատարվում է թվաբանական կլորացման կանոնների համաձայն:

Թվաբանական կլորացման կանոնի ներքո հարկ է հասկանալ կլորացման այն մեթոդը, որի դեպքում միավորի ամբողջ թիվը չի փոխվում, եթե կլորացման ենթակա տասնորդական միավորը հավասար է 0-ից 4-ի, և փոխվում է՝ մեծանալով մեկ միավորով, եթե կլորացման ենթակա տասնորդական միավորը հավասար է 5-ից 9-ի:

Պարտատոմսերի սեփականատերերի և/կամ անվանատերերի ռեեստրում նշված բանկային հաշվեհամարների կամ պարտատոմսերի ձեռքբերման հայտ-հանձնարարականներում արժեկտրոնային եկամտի ստացման հաշվեհամարի բացակայության կամ ճիշտ չլինելու դեպքում, Հաշվարկային բանկը գումարը կփոխանցի/կսառեցնի իր մոտ այդ նպատակով բացված հաշվեհամարին, այնուհետև

կգործադրի բոլոր ողջամիտ ջանքերը ներդրողի հայտնաբերման ու գումարի փոխանցման համար:

Արժեկտրոնի գումարը Ընկերությունը վճարում է պարտատոմսերի սեփականատերերին արժեկտրոնի հաշվարկման (մարման) օրը: Եթե արժեկտրոնի հաշվարկման օրը ոչ աշխատանքային է, ապա վճարման օր է համարվում դրան հաջորդող առաջին աշխատանքային օրը:

Ոչ ռեզիդենտ անձանց համար վճարումների առանձնահատկություններ սահմանված չեն:

Պարտատոմսերի դիմաց վճարվող արժեկտրոնը հաշվարկում է յուրաքանչյուր տեղաբաշխման համար Ընկերության խորհրդի կողմից որոշված պարբերականությամբ՝ տեղաբաշխման սկզբի օրվան հաջորդող յուրաքանչյուր *n*-րդ պարբերական ամսվա համապատասխան օրը:

Պարտատոմսերի դիմաց վճարվող արժեկտրոնի կուտակումն իրականացվում է հետևյալ բանաձևով.

$$AI = FV * \frac{C}{k} * \frac{DCS}{DCC}$$

որտեղ՝

AI – կուտակված արժեկտրոնային եկամուտն է,

FV – մեկ պարտատոմսի անվանական արժեքն է,

C – տարեկան արժեկտրոնային անվանական տոկոսադրույքն է՝ արտահայտված տոկոսներով,

k – մեկ տարում վճարվող արժեկտրոնների թիվն է, հաճախականությունը,

Օրերի հաշվարկման պայմանականությունը Թողարկողի պարտատոմսերի համար համարվում է Actual/Actual, ընդ որում

DCS – գործարքի կատարման օրվան նախորդող արժեկտրոնի մարման/արժեկտրոնի կուտակման սկզբի ամսաթվի և գործարքի կատարման օրվա միջև եղած օրերի քանակն է համապատասխան պայմանականության դեպքում [D2M2Y2-D1M1Y1],

DCC – արժեկտրոնային փուլի օրերի քանակն է համապատասխան պայմանականության դեպքում [D3M3Y3-D1M1Y1],

D1M1Y1 – գործարքի կատարման օրվան նախորդող արժեկտրոնի մարման/ արժեկտրոնի կուտակման սկզբի ամսաթիվն է,

D2M2Y2 – գործարքի կատարման ամսաթիվն է,

D3M3Y3 – գործարքի կատարման օրվան հաջորդող արժեկտրոնի մարման/անվանական արժեքի մարման ամսաթիվն է:

Վճարվող արժեկտրոնների հաշվարկում օրերի հաշվարկման կարգը Actual/Actual է:

2.3.9. Արժեթղթերի մարման ժամկետը և արժեքը

Թողարկվող պարտատոմսերի մարման օրը ենթակա է որոշման Ընկերության Խորհրդի կողմից՝ յուրաքանչյուր տրանշի համար:

Մեկ դրամային պարտատոմսի մարման արժեքը կազմում է 50,000 (հիսուն հազար) ՀՀ դրամ, իսկ մեկ դոլարային պարտատոմսի մարման արժեքը՝ 100 (հարյուր) ԱՄՆ դոլար:

Պարտատոմսերի սեփականատերերի/անվանատերերի ռեեստրը փակվում է պարտատոմսերի մարման օրվան նախորդող օրը՝ ժամը 18:00-ին, այսինքն՝ պարտատոմսերի մարման գումարն իրավունք ունեն ստանալ ռեեստրի փակման պահի դրությամբ պարտատոմսերի սեփականատերերի և/կամ անվանատերերի ռեեստրում գրանցված անձինք:

Պարտատոմսերի մարման գումարները պարտատոմսերի սեփականատերերին/անվանատերերին վճարվում են պարտատոմսերի մարման օրը, այսինքն՝ պարտատոմսերի սեփականատերերի/անվանատերերի ռեեստրի փակման օրվան հաջորդող առաջին աշխատանքային օրվա ընթացքում: Եթե մարման օրը ոչ աշխատանքային է, ապա վճարման օր է համարվում դրան հաջորդող առաջին աշխատանքային օրը:

Թողարկողը պարտավոր է մինչև պարտատոմսերի մարման օրը Տեղաբաշխողի մոտ (այսուհետ նաև՝ Հաշվարկային բանկ) բացված հաշվի վրա ապահովել և կուտակել պարտատոմսերի մարման համար անհրաժեշտ դրամական միջոցները:

Պարտատոմսերի մարման օրը թողարկողը Հաշվարկային բանկ է ներկայացնում պարտատոմսերի սեփականատերերի (անվանատերերի) ռեեստրից տեղեկանք՝ պարտատոմսերի մարման գումարներ ստանալու իրավունք ունեցող անձանց (սեփականատերերի կամ անվանատերերի) վերաբերյալ՝ ներառյալ մարման գումարի փոխանցման համար անհրաժեշտ տվյալները: Թողարկողը կարող է նաև լիազորել կամ հանձնարարել Հաշվարկային բանկին՝ իր անունից Ռեեստրավարից կատարել հարցումներ և ստանալ համապատասխան տեղեկատվությունը:

Ռեեստրից տեղեկանքը պետք է արտացոլի արժեկտրոնների հաշվարկման օրվան նախորդող օրվա ժամը 18:00-ի դրությամբ տվյալները:

Միաժամանակ Թողարկողը (կամ Հաշվարկային բանկը, եթե ունի համապատասխան իրավասությունը) հանձնարարական է տալիս Ռեեստրավարին՝ պարտատոմսերի սեփականատերերի ռեեստրից տրված քաղվածքում նշված քանակության պարտատոմսերը մարելու համար:

Հաշվարկային բանկը պարտատոմսերի մարման գումարները վճարում է անկանխիկ ձևով՝ պարտատոմսերի սեփականատերերի/անվանատերերի ռեեստրում նշված բանկային հաշիվներին փոխանցելու միջոցով: Պարտատոմսերի սեփականատերերի և/կամ անվանատերերի ռեեստրում նշված բանկային հաշվեհամարների բացակայության կամ ճիշտ չլինելու դեպքում, Հաշվարկային բանկը գումարը կփոխանցի/կսառնեցնի իր մոտ այդ նպատակով բացված հաշվեհամարին, այնուհետև կգործադրի բոլոր ողջամիտ ջանքերը ներդրողի հայտնաբերման ու գումարի փոխանցման համար:

Պարտատոմսերի վաղաժամկետ մարում չի նախատեսվում:

Պարտատոմսերով նախատեսված պարտավորությունների կատարումն ապահովող միջոցներ նախատեսված չեն, քանի որ վերջիններս առանց ապահովման են:

ՀՀ դրամով թողարկված պարտատոմսերի մարման դիմաց վճարումները կատարվելու են ՀՀ դրամով, իսկ ԱՄՆ դոլարով թողարկվածների դիմաց՝ ԱՄՆ դոլարով:

Հաշվի առնելով պարտատոմսերի անվանական արժեքի արժույթը և պարտատոմսերի մարման հետ կապված հնարավոր միջբանկային փոխանցումների անհրաժեշտությունը (եթե ներդրողի ԱՄՆ դոլարով հաշիվը չի գտնվում Տեղաբաշխողի մոտ), ներդրողները պետք է նկատի ունենան, որ մարման գումարների փոխանցման (միջբանկային փոխանցումներ) հետ կապված միջնորդավճարների ծախսերը պետք է կատարվեն ներդրողի հաշվին, հետևաբար նման ներդրողները մարման գումարները կստանան պահումներով՝ համապատասխանաբար Հաշվարկային բանկում և այլ միջնորդ բանկերում (եթե այդպիսիք կլինեն) գործող սակագների:

2.3.10. Արժեթղթի տարեկան եկամտաբերությունը

Պարտատոմսերի տարեկան եկամտաբերությունը հաշվարկվում է համաձայն ազդագրի 2.4 կետի 2.4.3 ենթակետում բերված բանաձևի: Տարեկան եկամտաբերությունը բանաձևում նշված է y (yield to maturity) տառով: Տեղաբաշխման ընթացքում տարեկան եկամտաբերության տոկոսադրույքը հավասար է լինելու հայտարարված արժեկտրոնի

եկամտաբերությանը: Առաջնային տեղաբաշխման ավարտից հետո տարեկան եկամտաբերությունը որոշվելու է երկրորդային շուկայում՝ համաձայն տվյալ պահին շուկայում ձևավորված տոկոսադրույքների:

2.3.11. Նոր թողարկման մասին տեղեկատվություն

«Գլոբալ Շիփինգ» ՍՊԸ թողարկվող միջնաժամկետ արժեկտրոնային պարտատոմսերի առաջարկի ծրագիրը հաստատվել է Ընկերության Միակ մասնակցի 09/10/2025թ թիվ 02 որոշմամբ, որով սահմանվել է թողարկել և տեղաբաշխել միջնաժամկետ արժեկտրոնային պարտատոմսեր հետևյալ վավերապայմաններով՝

- թողարկման ծավալը՝ 1,500,000,000 ՀՀ դրամ, 4,000,000 ԱՄՆ դոլար
- մեկ պարտատոմսի անվանական արժեքը՝ 50,000 ՀՀ դրամ, 100 ԱՄՆ դոլար
- տեղաբաշխվող պարտատոմսերի ընդհանուր քանակը՝ 30,000 հատ ՀՀ դրամով, 40,000 հատ ԱՄՆ դոլարով
- տեղաբաշխումը 1 կամ ավելի տրանշով
- տեղաբաշխող՝ «Կոնվերս Բանկ» ՓԲԸ
- տեղաբաշխման իրականացման ձևը՝ չերաշխավորված:

Տեղաբաշխվող յուրաքանչյուր տրանշի համար արժեկտրոնային պարտատոմսերի տեղաբաշխման կարգն ու պայմանները, արժեկտրոնային պարտատոմսերի յուրաքանչյուր տեղաբաշխման սկզբի և ավարտի ժամկետները, արժեկտրոնի տարեկան եկամտաբերությունը, տեղաբաշխման ծավալը, արժեկտրոնների վճարման պարբերականությունը, պարտատոմսի շրջանառության ժամկետները, տեղաբաշխման ընթացքում մեկ ներդրողի կողմից ձեռք բերվող պարտատոմսերի նվազագույն ծավալը որոշվում են «Գլոբալ Շիփինգ» ՍՊԸ Խորհրդի կողմից:

2.3.12. Արժեթղթերի ազատ շրջանառության հետ կապված սահմանափակումների նկարագրությունը

Պարտատոմսերի ազատ շրջանառության հետ կապված պարտատոմսերի թողարկման մասին որոշմամբ սահմանափակումներ չեն սահմանվում, բացի տեղաբաշխման ընթացքում մեկ ներդրողի կողմից ձեռք բերվող պարտատոմսերի նվազագույն ծավալի սահմանափակումից, եթե նման որոշում կայացվի Ընկերության խորհրդի կողմից: Պարտատոմսերը կարգավորվող շուկայում առևտրի թույլտվություն ստանալուց հետո, կարգավորվող շուկայից դուրս գործարքներ արգելվում են, բացառությամբ ՀՀ ԿԲ խորհրդի 27.11.2012թ. թիվ 331Ն որոշմամբ սահմանված դեպքերի:

2.3.13. Պարտատոմսերից ստացվող եկամուտների հարկման կարգի նկարագիրը

Պարտատոմսերից ստացվող եկամուտը ենթակա է հարկման շահութահարկով (իրավաբանական անձանց համար) և եկամտային հարկով (ֆիզիկական անձանց համար):

Պարտատոմսերից ստացվող եկամտի շահութահարկով հարկման կարգը

Հայաստանի Հանրապետությունում շահութահարկ են վճարում ռեզիդենտ և ոչ ռեզիդենտ կազմակերպությունները՝ բացառությամբ Հայաստանի Հանրապետության՝ ի դեմս պետական մարմինների, Հայաստանի Հանրապետության համայնքների՝ ի դեմս համայնքային կառավարչական հիմնարկների, ՀՀ Կենտրոնական բանկի և ՀՀ-ում հավատարմագրված դիվանագիտական ներկայացուցչությունների և հյուպատոսական հիմնարկների ու դրանց հավասարեցված միջազգային կազմակերպությունների:

Ռեզիդենտ կազմակերպությունների համար հարկվող օբյեկտ է համարվում ՀՀ աղբյուրներից և(կամ) ՀՀ-ից դուրս գտնվող աղբյուրներից ստացվող հարկվող շահույթը:

Ոչ ռեզիդենտ կազմակերպությունների համար հարկվող օբյեկտ է համարվում հայաստանյան աղբյուրներից ստացվող հարկվող շահույթը:

Հարկվող շահույթը հարկատուի համախառն եկամտի և ՀՀ հարկային օրենսգրքով սահմանված նվազեցումների դրական տարբերությունն է:

Ռեզիդենտ շահութահարկ վճարողի և մշտական հաստատության միջոցով ՀՀ-ում գործունեություն իրականացնող ոչ ռեզիդենտ շահութահարկ վճարողի պարտատոմսերի դիմաց ստացվող եկամուտից շահութահարկի գումարը սույն Ծրագրային ազդագրի հրապարակման պահին հաշվարկվում է հարկվող շահույթի նկատմամբ՝ 18 % դրույքաչափով:

Առանց մշտական հաստատության ՀՀ-ում գործունեություն իրականացնող ոչ ռեզիդենտ շահութահարկ վճարողի պարտատոմսերի դիմաց ստացվող տոկոսների մասով շահութահարկը հաշվարկվում է 10 % դրույքաչափով, իսկ պարտատոմսերի կապիտալի հավելածից (մինչև մարումը վաճառքի և գնման գների դրական տարբերությունը) ստացված եկամուտները ենթակա չեն հարկման:

Ոչ ռեզիդենտ իրավաբանական անձանց համար հարկային գործակալ հանդես է գալու «Գլոբալ Շիֆֆինգ» ՍՊԸ-ն:

Համաձայն ՀՀ Հարկային օրենսգրքի Հոդված 126-ի 5.1 մասի 6-րդ կետի՝ ոչ ռեզիդենտ շահութահարկ վճարողները ազատվում են շահութահարկի վճարումից Հայաստանի Հանրապետությունում գործող ֆոնդային բորսայում (կարգավորվող շուկայում) 2025 թվականի հունվարի 1-ից մինչև 2027 թվականի դեկտեմբերի 31-ը ներառյալ ցուցակված (առևտրին թույլատրված) պարտատոմսերից մինչև 2027 թվականի

դեկտեմբերի 31-ը ներառյալ՝ ստացված տոկոսների կամ մարելիս զեղչի ձևով ստացված եկամուտների մասով, ինչպես նաև մինչև 2027 թվականի դեկտեմբերի 31-ը ներառյալ ազատվում են արժեթղթերի օտարումից, այլ արժեթղթերով փոխանակումից կամ նման այլ գործարքներից ստացված եկամուտների մասով:

Հաշվի առնելով, որ սույն Ազդագրի հիման վրա թողարկվող պարտատոմսերը նախատեսվում է ցուցակել ՀՀ ֆոնդային բորսայում, պարտատոմսերի ցուցակման դեպքում դրանից ստացվող եկամուտները չեն հարկվի ոչ ռեզիդենտ իրավաբանական անձանց համար:

Պարտատոմսերից ստացվող եկամտի եկամտային հարկով հարկման կարգը

ՀՀ-ում եկամտային հարկ են վճարում ՀՀ ռեզիդենտ և ոչ ռեզիդենտ ֆիզիկական անձինք: Ընդ որում՝ ռեզիդենտ է համարվում այն ֆիզիկական անձը, որը հարկային տարում սկսվող կամ ավարտվող տասներկուամսյա ժամանակահատվածում փաստացի գտնվել է Հայաստանի Հանրապետությունում ընդհանուր առմամբ 183 օր և ավելի, կամ ում կենսական շահերի կենտրոնը գտնվում է Հայաստանի Հանրապետությունում: Հարկվող եկամուտը հարկատուի համախառն եկամտի և ՀՀ հարկային օրենսգրքի դրույթներին համաձայն իրականացված նվազեցումների դրական տարբերությունն է:

Ռեզիդենտի համար հարկվող օբյեկտ է համարվում ՀՀ տարածքում և նրա սահմաններից դուրս ստացվող եկամուտը:

Ոչ ռեզիդենտների համար հարկվող օբյեկտ է համարվում հայաստանյան աղբյուրներից ստացվող հարկվող եկամուտը:

Ռեզիդենտների և ոչ ռեզիդենտների պարտատոմսերի դիմաց ստացվող տոկոսների մասով եկամտային հարկը հաշվարկվում է 10 % դրույքաչափով:

Ռեզիդենտ և ոչ ռեզիդենտ ֆիզիկական անձանց համար հարկային գործակալ հանդես է գալու «Գլոբալ Շիփֆինգ» ՍՊԸ-ն:

Հարկային օրենսգրքի Հոդված 149-ի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ եկամտային հարկ վճարող ֆիզիկական անձանց համար հարկման բազայում նվազեցվող եկամուտ է համարվում Հայաստանի Հանրապետությունում գործող ֆոնդային բորսայում (կարգավորվող շուկայում) 2025 թվականի հունվարի 1-ից մինչև 2027 թվականի դեկտեմբերի 31-ը ներառյալ ցուցակված պարտատոմսերից մինչև 2027 թվականի դեկտեմբերի 31-ը ներառյալ ստացված տոկոսները կամ մարելիս զեղչի ձևով ստացվող եկամուտները:

Հաշվի առնելով, որ սույն Ազդագրի հիման վրա թողարկվող պարտատոմսերը նախատեսվում են ցուցակել Հայաստանի ֆոնդային բորսայում, պարտատոմսերի

ցուցակման դեպքում դրանցից ստացվող եկամուտները մինչև 2027 թվականի դեկտեմբերի 31-ը ներառյալ՝ չեն հարկվի ՀՀ ռեզիդենտ և ոչ ռեզիդենտ ֆիզիկական անձանց համար:

Ծանուցում: Չնայած այն հանգամանքին, որ Թողարկողը գործադրելով լավագույն ջանքերը և կիրառելով առկա գիտելիքները, սույն բաժնում ներկայացրել է արժեթղթերից ստացվող եկամուտների հարկման մոտեցումները ՀՀ-ում, այնուամենայնիվ Թողարկողը ցանկանում է հայտարարել, որ ներդրողներն այն չպետք է համարեն հարկային խորհրդավորություն և ներդրումներ անելիս հիմնվեն միայն այս բաժնում ներկայացված նյութի վրա: Թողարկողը չի երաշխավորում, որ ներդրողի կողմից Ազդագրի ստացման և ծանոթացման պահին հարկային օրենսդրությունը կհամապատասխանի ներկայացվածին, կամ համարժեքորեն կիրառություն կունենա ՀՀ հարկային մարմինների կողմից և ցանկացած պարագայում խորհուրդ է տալիս օգտվել մասնագիտացված հարկային խորհրդավորական ծառայություններից: Թողարկողը ցանկանում է հայտարարել, որ սույնով զերծ է մնում ցանկացած ներդրողի հնարավոր պահանջներից կապված հարկային օրենսդրության և հարկման մեխանիզմների կիրառման և/կամ փոփոխության արդյունքում առաջացած ֆինանսական պահանջների նկատմամբ պատասխանավորությունից:

2.4. Առաջարկի ժամկետները և պայմանները

2.4.1. Առաջարկի պայմաններ, առաջարկի վիճակագրություն

Առաջարկի ընդհանուր ծավալը

Թողարկվող պարտատոմսերի ընդհանուր անվանական ծավալը կազմում է 1,500,000,000 ՀՀ դրամ, 4,000,000 ԱՄՆ դոլար: Թողարկվող և տեղաբաշխվող պարտատոմսերի ընդհանուր քանակը՝ 30,000 հատ ՀՀ դրամով և 40,000 հատ ԱՄՆ դոլարով:

Առաջարկի իրականացման սկիզբը և ավարտը

Պարտատոմսերի յուրաքանչյուր տրանշի տեղաբաշխման սկիզբը ենթակա է որոշման Ընկերության Խորհրդի կողմից:

Պարտատոմսերի յուրաքանչյուր տեղաբաշխման համար կազմվող թողարկման վերջնական պայմանները ՀՀ ԿԲ են ներկայացվում և հրապարակվում Տեղաբաշխողի ինտերնետային կայքում՝ www.conversebank.am հրապարակային առաջարկի վերաբերյալ հայտարարության հրապարակումից առնվազն 2 (երկու) օր առաջ:

Պարտատոմսերի յուրաքանչյուր տրանշի տեղաբաշխման ավարտը ենթակա է որոշման Ընկերության Խորհրդի կողմից:

Պարտատոմսերի վերջին տրանշի տեղաբաշխումն ավարտվում է ոչ ուշ, քան Ընկերության և/կամ Տեղաբաշխողի կողմից պարտատոմսերի ազդագիրը հրապարակելուց հետո մեկ տարվա ընթացքում:

Որոշված ժամկետների փոփոխությունը Ընկերությունը չի նախատեսում:

Պարտատոմսերի առաջարկի և տեղաբաշխման հետաձգման կամ չեղյալ ճանաչման հանգամանքներ կարող են հանդիսանալ «Արժեթղթերի շուկայի մասին» ՀՀ օրենքի 20-րդ և 21-րդ հոդվածով սահմանված հիմքերի առկայությունը: Մասնավորապես՝

1. Եթե Ընկերությունը տեղաբաշխման ընթացքում ներկայացնում է ազդագրի լրացում, որը կապված է ազդագրում ներառված տեղեկատվության էական փոփոխության, նոր էական հանգամանքի կամ փաստի ի հայտ գալու հետ, ապա նա ներդրողի պահանջով պարտավորվում է չեղյալ համարել ներդրողի տված ակցեպտը և հետ վերադարձնել հայտ-հանձնարարականի հիման վրա նրանից ստացված միջոցները և ձեռքբերման պահից մինչև տեղաբաշխման կասեցումն ընկած օրերի համար կուտակված տոկոսագումարը՝ համաձայն արժեկտրոնի հաշվարկման բանաձևի (կետ 2.3.8): Հետգնման պահանջը կարող է ներկայացվել ազդագրի լրացման հրապարակումից հետո 5 աշխատանքային օրվա ընթացքում, ընդ որում՝ հետգնման պահանջը պետք է տեղաբաշխողին ներկայացվի գրավոր:

2. Տեղաբաշխման ընթացքը կարող է կասեցվել ՀՀ ԿԲ որոշմամբ այն դեպքերում, եթե՝

- տեղաբաշխման ընթացքում խախտվել են «Արժեթղթերի շուկայի մասին» ՀՀ օրենքի և հրապարակային առաջարկը կարգավորող այլ իրավական ակտերի պահանջները.
- տեղաբաշխման ընթացքում չեն պահպանվել ազդագրում սահմանված հրապարակային առաջարկի պայմանները.
- ազդագիրը պարունակում է էական սխալներ և ապակողմնորոշիչ տեղեկություններ, կամ նրանում էական փաստ է բաց թողնված կամ խեղաթյուրված:

Այս դեպքում տեղաբաշխումը կարող է շարունակվել ՀՀ ԿԲ-ի թույլտվությամբ՝ հայտնաբերված խախտումներն ու բացթողումները վերացնելու դեպքում:

3. Տեղաբաշխողի նախաձեռնությամբ տեղաբաշխման ընթացքը կարող է կասեցվել միայն ՀՀ ԿԲ համաձայնությամբ՝ առավելագույնը 10 (տասը) աշխատանքային օրով:

Կասեցման ժամկետի ավարտի պահից 1 աշխատանքային օրվա ընթացքում տեղաբաշխումը չշարունակվելու դեպքում, տեղաբաշխողը պարտավոր է դադարեցնել տեղաբաշխումը և ներդրողներին վերադարձնել տեղաբաշխման ընթացքում ստացված

միջոցները և հաշվեգրված տոկոսները՝ կասեցման ժամկետի ավարտից 10 աշխատանքային օրվա ընթացքում:

Ներդրողներին գումարները վերադարձվում են անկանխիկ եղանակով՝ պարտատոմսերի ձեռքբերման հայտ-հանձնարարականներում ներդրողների կողմից նշված բանկային հաշիվների վրա փոխանցելու միջոցով: Բանկային հաշվեհամարի բացակայության կամ ճիշտ չլինելու դեպքում, տեղաբաշխողը կգործադրի բոլոր ողջամիտ ջանքերը ներդրողի հայտնաբերման ու գումարի վերադարձման համար:

Տեղաբաշխողը պարտավորվում է տեղաբաշխումը կասեցնելու և շարունակելու, տեղաբաշխումը դադարեցնելու և դրա ընթացքում ստացված միջոցները վերադարձնելու մասին տեղեկատվությունը հրապարակել իր ինտերնետային կայքում՝ www.conversebank.am:

Առաջարկից օգտվելու համար դիմելու գործընթացը

Պարտատոմսերը տեղաբաշխվելու են հրապարակային առաջարկի՝ ուղիղ վաճառքի միջոցով:

Պարտատոմսերում ներդրում կատարելու ցանկություն հայտնող անձինք (ֆիզիկական կամ իրավաբանական) սահմանված կարգով պետք է լրացնեն համապատասխան պարտատոմսերի ձեռքբերման հայտ-հանձնարարականը (ֆիզիկական անձինք՝ համաձայն Հավելված 3-ի, իրավաբանական անձինք՝ համաձայն Հավելված 4-ի), պատշաճ կերպով ներկայացնեն Բանկ և կատարեն համապատասխան վճարում, որով կհավաստեն պարտատոմսերի թողարկման պայմանների ընդունելը:

Պարտատոմսերի ձեռքբերման հայտ-հանձնարարականը համարվում է պատշաճ կերպով ներկայացված, եթե ներկայացվել է ստորև նշված տարբերակներից մեկով՝

- այն առաքվել է Տեղաբաշխողին ներքոնշյալ էլեկտրոնային կապի միջոցների միջոցով և ստացվել է հասցեատիրոջ կողմից առաքման ստացման հաստատում.

Էլեկտրոնային փոստ. bonds@conversebank.am

CBAnet հաւցե. Investments Converse Bank/Converse/CBAnet@CBAnet

- ներկայացվել է Տեղաբաշխողին առձեռն՝ Տեղաբաշխողի Գլխամասային գրասենյակում կամ մասնաճյուղերում, որոնց ցանկը և գործառնական ժամերը ներկայացված են հետևյալ հղումում՝ www.conversebank.am/hy/branches/:

- ներկայացվել է Տեղաբաշխողի մոբայլ հավելվածի՝ Converse Mobile-ի միջոցով՝ հետևելով հավելվածի համապատասխան հրահանգներին:

Վճարումը կատարվում է պարտատոմսերի ձեռքբերման հայտ-հանձնարարականի պատշաճ կերպով Տեղաբաշխողին ներկայացման օրը, ոչ ուշ, քան մինչև ժամը 16:30-ը, հատուկ թողարկման նպատակով Բանկում բացված թիվ **19300637882578** (ԱՄՆ

դոլարով թողարկված պարտատոմսերի համար), **19300927663876** (<< դրամով թողարկված պարտատոմսերի համար) տարանցիկ հաշվին կանխիկ մուտքագրման կամ փոխանցման միջոցով: Պարտատոմսերի դիմաց վճարվող գումարը հաշվարկվում է Ծրագրային ազդագրի 2.4 կետի 2.4.3 ենթակետում ներկայացված բանաձևով հաշվարկված մեկ պարտատոմսի գինը բազմապատկելով ձեռք բերվող պարտատոմսերի քանակով: Ձեռք բերվող պարտատոմսերի դիմաց վճարվելիք ընդհանուր գումարը հաշվարկվում է ստորակետից հետո երկու նիշի ճշտությամբ ԱՄՆ դոլարով արտահայտված պարտատոմսերի դեպքում և մեկ նիշի ճշտությամբ << դրամով արտահայտված պարտատոմսերի դեպքում՝ կլորացումը կատարելով թվաբանական կլորացման կանոնների համաձայն:

Եթե հայտ-հանձնարարականը ներկայացվել և համապատասխան գումարի վճարումը կատարվել է մինչև տվյալ օրվա 16:30-ն ներառյալ, ապա պարտատոմսի գինը հաշվարկվում է տվյալ օրով: Ժամը 16:30-ից հետո ներկայացված և/կամ վճարված հայտի համար վճարվող գումարի չափը հաշվարկվում է տվյալ օրվան հաջորդող աշխատանքային օրվա պարտատոմսի գնով:

Յուրաքանչյուր տրանշի պարտատոմսերի տվյալ օրվա գինը տեղաբաշխման ողջ ընթացքի համար Տեղաբաշխողը պարտավորվում է հրապարակել իր ինտերնետային կայքում՝ www.conversebank.am :

Պարտատոմսերի ձեռքբերմանը մասնակցել ցանկացող ֆիզիկական և/կամ իրավաբանական անձինք կարող են ներկայացնել մեկից ավելի հայտ-հանձնարարականներ:

Պարտատոմսերի տեղաբաշխման նախատեսված վերջնաժամկետից հետո տեղաբաշխման նպատակով բացված թիվ **19300927663876** (<< դրամով թողարկված պարտատոմսերի համար), **19300637882578** (ԱՄՆ դոլարով թողարկված պարտատոմսերի համար) տարանցիկ հաշիվներին ստացված գումարները ենթակա են հետ վերադարձման, իսկ դրանց համապատասխան հայտ-հանձնարարականները չեն կարող բավարարվել անկախ դրանց առաքման և/կամ Տեղաբաշխողի կողմից ստացման ժամկետից:

Առաջարկի ընդհանուր ծավալի նվազեցման հնարավորություն չի նախատեսվում:

Տեղաբաշխման կարգով պայմանավորված հնարավոր է պարտատոմսերի ձեռքբերման որևէ հայտ-հանձնարարականի մասնակի բավարարում, եթե հայտում նշված ծավալը գերազանցում է հայտ-հանձնարարականի ներկայացման պահին չտեղաբաշխված ծավալը: Այս դեպքում հայտ-հանձնարարականը բավարարվում է չտեղաբաշխված ծավալի չափով:

Հայտ-հանձնարարականի մասնակի բավարարման դեպքում, ներդրողին հետ վերադարձման ենթակա գումարը տեղաբաշխման ավարտից հետո 3 (երեք) աշխատանքային օրվա ընթացքում անկանխիկ եղանակով փոխանցվում է ներդրողի

համապատասխան բանկային հաշվին: Բանկային հաշվեհամարի բացակայության կամ ճիշտ չլինելու դեպքում, Տեղաբաշխողի կգործադրի բոլոր ողջամիտ ջանքերը ներդրողի հայտնաբերման ու գումարի վերադարձման համար:

Նվազագույն և առավելագույն գումարները

Թողարկման ընթացքում կարող են սահմանվել պարտատոմսերի ձեռքբերման նվազագույն և առավելագույն գումարներ, եթե նման որոշում կայացվի Թողարկողի կողմից տեղաբաշխման սկիզբը որոշող ամսաթվից առնվազն 5 աշխատանքային օր առաջ:

Հայտի հետ կանչելը

Գնորդի կողմից ներկայացված հայտը ենթակա չէ հետ կանչման պարտատոմսերի դիմաց վճարվող գումարի փոխանցումից հետո:

Հայտ-հանձնարարականի ներկայացումից հետո՝ մինչև հայտ-հանձնարարականում պարտատոմսերի ձեռքբերման գնին համապատասխան օրվա ժամը 16:30-ը համապատասխան վճարում չիրականացրած ներդրողների հայտ-հանձնարարականները համարվում են անվավեր և չեն մասնակցում տեղաբաշխմանը:

Արժեթղթերի դիմաց վճարներ կատարելու մեթոդները, սեփականության վերաբերյալ քաղվածք ստանալու ձևը

Ներդրողների կողմից պարտատոմսերի դիմաց վճարները կատարվում են «Կոնվերս Բանկ» ՓԲԸ-ում տեղաբաշխման նպատակով բացված **19300927663876** (<< դրամով թողարկված պարտատոմսերի համար) և **19300637882578** (ԱՄՆ դոլարով թողարկված պարտատոմսերի համար) հաշվեհամարներին: Վճարումը համարվում է պատշաճ կերպով կատարված նշված հաշիվներում դրամական միջոցների մուտքագրման պահից:

Ներդրողի հաշվին պարտատոմսերը փոխանցվում են վերջինիս ներկայացրած պարտատոմսերի ձեռքբերման հայտ-հանձնարարականի բավարարումից հետո՝ 1 (մեկ) աշխատանքային օրվա ընթացքում:

Ներդրողները արժեթղթերի սեփականության վերաբերյալ քաղվածք կարող են ստանալ իրենց արժեթղթերի հաշիվը սպասարկող պահառուից կամ հաշվի օպերատորից:

Առաջարկի արդյունքների հրապարակումը

Յուրաքանչյուր տրանշի տեղաբաշխման ավարտից հետո տեղաբաշխման արդյունքները 1 (մեկ) աշխատանքային օրվա ընթացքում կհրապարակվեն Տեղաբաշխողի և/կամ Թողարկողի ինտերնետային կայքում::

Նախապատվության իրավունքից օգտվելը

Թողարկվող պարտատոմսերը ձեռք բերելու նախապատվության իրավունք ունեցող անձինք չկան: Պարտատոմսերի բավարարման ենթակա ձեռքբերման հայտ-հանձնարարականները բավարարվում են ըստ հայտ-հանձնարարականների ներկայացման հերթականության և դրանց դիմաց կատարված վճարման առկայության:

2.4.2. Տեղաբաշխման պլան

Ներդրողների շրջանակը

Առաջարկն ուղղված է ՀՀ ռեզիդենտ և ոչ ռեզիդենտ ֆիզիկական և իրավաբանական անձանց, որակավորված և ինստիտուցիոնալ ներդրողների, ինչպես նաև անհատ ձեռնարկատերերին: Պարտատոմսերի առաջարկն իրականացվելու է ազատ վաճառքի սկզբունքով՝ Տեղաբաշխողի մոբայլ հավելվածի, գլխավոր գրասենյակի և մասնաճյուղերի միջոցով:

Հայտերի բավարարման մասին տեղեկացումը

Հայտ-հանձնարարականների մասնակի բավարարման կամ մերժման մասին Թողարկողը տեղեկացնում է Ներդրողներին մինչև հայտի ներկայացման օրվան հաջորդող աշխատանքային օրվա ավարտը: Հայտ-հանձնարարականների մասնակի բավարարման կամ մերժման մասին ներդրողին տեղեկացումը տրամադրվում է այն կապի միջոցով, որով ներդրողը Տեղաբաշխողին է ներկայացրել պարտատոմսերի ձեռքբերման հայտ-հանձնարարականը/ները: Եթե ներդրողը մինչև հայտի ներկայացման հաջորդ աշխատանքային օրվա ավարտը չի ստանում հայտ-հանձնարարականի մասնակի բավարարման կամ մերժման մասին ծանուցում, ապա հայտ-հանձնարարականը համարվում է բավարարված:

2.4.3. Առաջարկի գին

Պարտատոմսի տեղաբաշխման գինը յուրաքանչյուր 100 միավոր անվանական արժեքի դիմաց որոշվելու է համաձայն հետևյալ բանաձևի.

$$DP = \frac{C}{f} \sum_{t=1}^N \frac{1}{\left(1 + \frac{y}{100 * f}\right)^{t-1+\tau}} + \frac{100}{\left(1 + \frac{y}{100 * f}\right)^{N-1+\tau}}$$

Որտեղ՝

$$\tau = \frac{DSN}{DCC}$$

DP - պարտատոմսի գինն է,

DSN – գործարքի կատարման օրից մինչև հաջորդ արժեկտրոնի վճարումը մնացած օրերի քանակ համապատասխան պայմանականության դեպքում,

DCC- գործարքին նախորդող արժեկտրոնի վճարման օրից մինչև գործարքին հաջորդող արժեկտրոնի վճարման օրերի քանակ համապատասխան պայմանականության դեպքում,

f – արժեկտրոնի վճարման հաճախականությունն է,

N – հաշվարկման պահին մնացած արժեկտրոնների վճարումների թիվը,

C – տարեկան արժեկտրոնը 100 միավոր անվանական արժեքի դիմաց,

y – մինչև մարում եկամտաբերություն:

Յուրաքանչյուր տրանշի պարտատոմսերի գինը տեղաբաշխման ողջ ընթացքի համար Տեղաբաշխողը պարտավորվում է հրապարակել իր ինտերնետային կայքում՝ <https://conversebank.am/> :

Հաշվի առնելով թողարկվող պարտատոմսերի արժույթը, պարտատոմսերի ձեռքբերման համար անհրաժեշտ և պարտատոմսերի և/կամ արժեկտրոնի մարումից գոյացած միջոցները այլ բանկեր/ից փոխանցելու դեպքում, ներդրողները պարտավոր են իրենց հաշվին հոգալ հնարավոր բանկային միջնորդավճարների հետ կապված ծախսերը:

Ներդրողները պարտավոր են նաև Հայաստանի կենտրոնական դեպոզիտարիայում կամ լիցենզավորված որևէ այլ ենթապահառուի մոտ ունենալ արժեթղթերի հաշիվ ու կրել դրանց հետ կապված ծախսերը:

2.4.4. Տեղաբաշխումը

Երաշխավորված Տեղաբաշխումը

Երաշխավորված տեղաբաշխում իրականացնողներ առկա չեն: Երաշխավորված տեղաբաշխման պայմանագիր չի կնքվել:

Չերաշխավորված տեղաբաշխում իրականացնողները

«Կոնվերս Բանկ» ՓԲԸ-ի հետ Թողարկողի միջև կնքվել է «Ծառայությունների մատուցման պայմանագիր», որի համաձայն «Կոնվերս Բանկ» ՓԲԸ-ն չերաշխավորված եղանակով տեղաբաշխելու է Թողարկողի կողմից թողարկվող անվանական արժեկտրոնային ոչ փաստաթղթային անվանական պարտատոմսերը:

Տեղաբաշխման պայմանները

Համաձայն Թողարկողի հետ կնքած «Ծառայությունների մատուցման պայմանագրի» Թողարկողը պարտավոր է Տեղաբաշխողին վճարել թողարկման ծավալի 0.25%-ի, իսկ

տեղաբաշխման և ցուցական կազմակերպման համար տեղաբաշխվող ծավալի 0.25%-ի չափով միջնորդավճար:

Վճարում ընդունող բանկերը և պահառուները

Պարտատոմսերի դիմաց անհրաժեշտ է վճարում կատարել թողարկման նպատակով «Կոնվերս Բանկ» ՓԲԸ-ում բացված **19300927663876** (<< դրամով թողարկված պարտատոմսերի համար), **19300637882578** (ԱՄՆ դոլարով թողարկված պարտատոմսերի համար) տարանցիկ հաշվեհամարին: Եթե ներդրողը պարտատոմսերի ձեռք բերումը իրականացնելու է իր բրոքերային ընկերության միջոցով, ապա հարկավոր է վճարման գործընթացի մանրամասները հստակեցնել ներդրողի բրոքերային ընկերության հետ:

Պարտատոմսերի հաշվառումը կատարվում է Հայաստանի կենտրոնական դեպոզիտարիայի (ՀԿԴ) կամ ենթապահառուների կողմից վարվող սեփականատիրոջ/անվանատիրոջ արժեթղթերի հաշիվների միջոցով: ՀԿԴ հասցեն է՝ ՀՀ, ք. Երևան, Վազգեն Սարգսյան 26/1, 5-րդ հարկ (հեռ.՝ (+374) 60 615555):

Մինչև պարտատոմսերի ձեռքբերումը ներդրողները պարտավոր են ՀԿԴ-ում կամ վերջինիս ենթապահառուի մոտ ունենալ արժեթղթերի հաշիվ:

2.5. Առևտրին թույլտվությունը և առևտրի կազմակերպումը

2.5.1. Առևտրին թույլտվությունը

Սույն Ծրագրային ազդագիրը ՀՀ ԿԲ կողմից գրանցելուց և պարտատոմսերը տեղաբաշխելուց հետո, Թողարկողը պարտադիր դիմելու է «Հայաստանի ֆոնդային բորսա» ԲԲԸ-ին տեղաբաշխված պարտատոմսերը կարգավորվող շուկայում ցուցակելու և առևտրին թույլատրելու համար: Առևտրին թույլտվության հայտը կարող է չբավարարվել: Պարտատոմսերի առևտրի թույլտվություն չստանալու դեպքում, պարտատոմսերի տեղաբաշխումը կհամարվի չեղյալ: Հայտը չբավարարվելու մասին որոշումից հետո 10 աշխատանքային օրվա ընթացքում համապատասխան գումարները Թողարկողը հետ է վերադարձնելու ներդրողներին՝ ներառյալ մինչև չեղյալ համարելու որոշման ուժի մեջ մտնելու օրը հաշվեգրված տոկոսագումարները:

2.5.2. Շուկաները

Այս պահին Թողարկողի կողմից սույն Ծրագրային ազդագրով գրանցվող պարտատոմսերը թույլատրված չեն որևէ շուկայում հրապարակային առևտրի:

2.5.3. Շուկա ստեղծողները

Թողարկողը մասնագիտացված անձանց հետ դեռ չի կնքել երկրորդային շուկայում շուկա ստեղծողի (մարքեթ մեյքերի) ծառայություններից օգտվելու վերաբերյալ պայմանագիր:

Տեղաբաշխված պարտատոմսերը «Հայաստանի ֆոնդային բորսա» ԲԲԸ կարգավորվող շուկայում ցուցակելու և առևտրին թույլատրելու դեպքում, Թողարկողը պարտադիր կնքելու է մասնագիտացված անձի/անձանց հետ երկրորդային շուկա ստեղծողի պայմանագիր:

Ներդրողները կարող են Թողարկողի կողմից թողարկված պարտատոմսերի շուկա ստեղծողների մասին տեղեկատվությունը տեսնել Հայաստանի ֆոնդային բորսայի կայքում՝ www.amx.am:

2.6. Լրացուցիչ տեղեկատվություն

2.6.1. Խորհրդատուներ

Սույն Ծրագրային ազդագրի պատրաստման ընթացքում Թողարկողը օգտվել է «ԷՄ ԲԻ ՔՆՍԱԼԹԻՆԳ» ՓԲԸ (պետական գրանցման համար՝ 264.120.1161751, գրանցման ամսաթիվ՝ 05.02.2021թ., ՀՎՀՀ՝ 00182311) խորհրդատվական ընկերության ծառայություններից, որի շրջանակում խորհրդատվական ընկերությունը կատարել է «Օնլայն Շոփինգ Նեթվորք» ՍՊԸ-ի բիզնեսի արժեքի գնահատում:

2.6.2. Աուդիտորական եզրակացությունը

Բացի սույն Ծրագրային ազդագրում ներկայացված Թողարկողի պատմական ֆինանսական հաշվետվություններից, որոնք ենթարկվել են աուդիտի անկախ աուդիտորական ընկերությունների կողմից, սույն Ծրագրային ազդագրում ներկայացված այլ տեղեկատվություն չի ենթարկվել աուդիտի անկախ աուդիտորական ընկերությունների կողմից: Հաշվետվությունների և դրանց վերաբերյալ անկախ աուդիտորական կազմակերպությունների կողմից տրված եզրակացությունները ներկայացված են սույն Ծրագրային ազդագրին կից Հավելված 5-ում:

2.7. Թողարկողի կովենանտները

2.7.1. Ֆինանսական կովենանտներ

Թողարկողը պարտավորվում է պարտատոմսերի գործողության ամբողջ ժամանակահատվածում պահպանել հետևյալ ֆինանսական ցուցանիշների սահմանաչափերը՝

- Զուտ պարտք/EBIDTA հարաբերակցությունը և Պարտավորություններ/Սեփական Կապիտալ հարաբերակցությունը չպետք է գերազանցեն ստորև ներկայացված հաշվարկման ժամանակահատվածի համար սահմանված առավելագույն սահմանաչափերը՝

Ցուցանիշ	Թույլատրելի առավելագույն մակարդակ	Հաշվարկման ժամանակահատված
Զուտ պարտք/EBIDTA	$\leq 4.5x$	Դեկտեմբերի 31, 2025թ Հունիսի 30, 2026թ Դեկտեմբերի 31, 2026թ.
Պարտավորություններ/Սեփական կապիտալ հարաբերակցություն	$\leq 5.0x$	Հունիսի 30, 2027թ. Դեկտեմբերի 31, 2027թ Հունիսի 30, 2028թ. Դեկտեմբերի 31, 2028թ.

Հաշվարկների հիմքեր

Հաշվարկման ժամանակահատվածի համար ֆինանսական կովենանտների նպատակով հաշվարկվող ցուցանիշները ձևավորվում են՝

- Դեկտեմբերի 31-ի դրությամբ՝ Ֆինանսական Հաշվետվության Միջազգային Ստանդարտների (ՖՀՄՍ) պահանջներին համապատասխան Խմբի կոնսոլիդացված և աուդիտ անցած ֆինանսական հաշվետվությունների հիման վրա, որոնք Թողարկողի կողմից ենթակա են պարտադիր հրապարակման:
- Հունիսի 30-ի դրությամբ՝ Ֆինանսական Հաշվետվության Միջազգային Ստանդարտների (ՖՀՄՍ) պահանջներին համապատասխան Խմբի կոնսոլիդացված ֆինանսական հաշվետվությունների հիման վրա՝ առանց աուդիտորական եզրակացության, որոնք Թողարկողի կողմից ենթակա են պարտադիր հրապարակման:

Հաշվարկների մեթոդաբանությունը

Ֆինանսական կովենանտների հաշվարկի համար օգտագործվող ցուցանիշները հաշվարկվում են հետևյալ մեթոդաբանությամբ.

Զուտ պարտք. Զուտ պարտքը ներկայացնում է Թողարկողի և նրա դուստր ընկերությունների համախմբված ֆինանսական պարտավորությունների ընդհանուր գումարը՝ ներառյալ կարճաժամկետ և երկարաժամկետ վարկերը, փոխառությունները, ինչպես նաև լիզինգային պարտավորությունները,

երաշխավորությունները, ֆինանսական լիզինգային և պարտատոմսերով ստանձնած պարտավորությունները:

Ձուտ պարտքի հաշվարկից հանվում են դրամական միջոցները և դրանց համարժեքները, այդ թվում՝ բանկային ավանդները:

EBIDTA-ն սահմանվում է որպես Թողարկողի և նրա դուստր ընկերությունների հաշվետու ժամանակաշրջանի զուտ շահույթը, որը ճշգրտվում է հետևյալ տարրերով՝

- նվազեցվում են՝
 - պատահական օգուտները,
 - ոչ դրամական բնույթի եկամուտները,
 - ակտիվների (բացառությամբ բնականոն գործունեության շրջանակում իրացվող պաշարների) վաճառքից առաջացած օգուտը կամ վնասը՝ համապատասխան չափով,
- ավելացվում են՝
 - տվյալ ժամանակաշրջանի տոկոսային ծախսերը,
 - կատարված բոլոր հարկային ծախսերը,
 - մաշվածության և արժեզրկման գծով ծախսերը՝ բացառելով կրկնակի հաշվառման դեպքերը:

Պարտավորությունները ներառում են Թողարկողի Խմբի բոլոր պարտավորությունները՝ ինչպես կարճաժամկետ, այնպես էլ երկարաժամկետ, որոնք հաշվառվում են համախմբված հաշվեկշռում՝ համաձայն գործող հաշվապահական չափանիշների:

Սեփական կապիտալը ձևավորվում է որպես Թողարկողի համախմբված հաշվեկշռում ներկայացված բոլոր սեփական միջոցների գումարը, ներառյալ՝ հիմնական և հավելյալ ներդրված կապիտալը, պահուստները, չբաշխված շահույթը կամ կուտակված կորուստները, ինչպես նաև այլ համապարփակ եկամուտների բաղադրիչները:

2.7.2. Բացասական կովենանտներ

Քանի դեռ Թողարկողը չի ստացել սույն Ազդագրի 2.7.3 կետով նախատեսված պարտատոմսերի թողարկման ընդհանուր ծավալի առնվազն 50% (հիսուն տոկոսը) ներկայացնող սեփականատերերի համաձայնությունը՝

Իրավունք չունի՝

1. **Շահույթի բաշխում.** կատարել Խմբում ընդգրկված ընկերությունների տարեկան շահույթի ավելի քան 50% (հիսուն տոկոսի) բաշխում շահաբաժինների տեսքով:
2. **Վերակազմակերպման/հսկողության փոփոխություն.** իրականացնել գործող մասնակիցների կազմի էական փոփոխություն, որի դեպքում Խմբում ընդգրկվող ընկերությունների բաժնետիրական կապիտալի 50% և ավելի բաժնեմասը կամ դրա վերահսկողությունը կարող է փոխանցվել այլ անձի, քան ներկայիս հիմնական շահառուն է,
3. **Անկախ և հավասար պայմաններով գործարքի պարտավորության պահպանում (Arm's Length Basis Covenant).** կնքել ցանկացած գործարք, որը հակասում է «պարզած ձեռքի սկզբունքով» գործարքների տրամաբանությանը, ինչպես նաև կնքել այնպիսի գործարքներ, որոնք կարող են վնասել պարտատոմսերի սեփականատերերի շահերը կամ հանգեցնել շահերի բախման:

2.7.3. Ներդրողների համաձայնության ստացման ընթացակարգ

Թողարկողի կողմից պարտատոմսի սեփականատերերի համաձայնության ստացման գործընթացը հետևյալն է.

1. **Ծանուցում.** Թողարկողը պարտավորվում է գրավոր (պարտատոմսերի սեփականատերերի/անվանատերերի ռեեստրում գրանցված էլ-հասցեներով) ծանուցել պարտատոմսի սեփականատերերին (կամ նրանց ներկայացուցիչին) նախատեսվող գործողության, փոփոխության կամ կովենանտի խախտման մտադրության մասին.
2. **Տեղեկատվության տրամադրում.** Ծանուցմանը պետք է կցվի համապատասխան հիմնավորում և փաստաթղթային տեղեկություններ, որոնք հնարավորություն կտան պարտատոմսի սեփականատերերին գնահատել առաջարկվող գործողության, փոփոխության կամ կովենանտի խախտման ազդեցությունը.
3. **Քվեարկություն / Համաձայնության հաստատում.** Պարտատոմսի սեփականատերերի համաձայնությունը համարվում է տրված, եթե սույն կետի 1-ին ենթակետում նշված ծանուցումը ստանալուց հետո 10 աշխատանքային օրվա ընթացքում պարտատոմսերի սեփականատերերի առնվազն 50% (հիսուն տոկոսը) տվել են իրենց գրավոր համաձայնությունը:
4. **Ապացույցի պահպանում.** Թողարկողը պարտավորվում է պահպանել ստացված համաձայնությունների պատճենները և անհրաժեշտության դեպքում ներկայացնել դրանք համապատասխան շահառուներին մինչև սույն Ազդագրի շրջանակում թողարկված պարտատոմսերի մարման ժամկետը:

Առանց սույն կետում նշված գործընթացի պահպանման և պարտատոմսի սեփականատերի պահանջվող մեծամասնության նախնական համաձայնության

առկայության՝ համապատասխան գործողությունների իրականացումը կհամարվի կովենանտի խախտում:

2.7.4. Կովենանտների խախտման դեպքերը և դրանց հետևանքները

Կովենանտների խախտման դեպքերը

Թողարկողը պարտավորվում է պահպանել սույն Ազդագրով սահմանված բոլոր կովենանտները (բացասական և ֆինանսական):

Կովենանտի խախտում է համարվում ցանկացած գործողություն կամ անգործություն, որը հանգեցնում է սույն Ազդագրով սահմանված որևէ կովենանտի խախտմանը:

Կովենանտների խախտման հետևանքները

Թողարկողի կողմից սույն Ազդագրով սահմանված որևէ կովենանտ խախտելու դեպքում գործընթացը հետևյալն է.

1. **Խախտման մասին հրապարակում.** Թողարկողը պարտավորվում է խախտումը ի հայտ գալուց հետո 3 աշխատանքային օրվա ընթացքում իր կայքում հրապարակել տեղեկատվություն կովենանտի խախտման մասին:
2. **Շտկման ժամկետ.** Խախտման մասին հրապարակելուց հետո Թողարկողն ունի մինչև 20 (քսան) աշխատանքային օր խախտումը վերացնելու կամ բացատրություն ներկայացնելու համար:
3. **Վաղաժամկետ մարում.** Թողարկողի կողմից խախտման մասին հրապարակելուց հետո 20 (քսան) աշխատանքային օրվա ընթացքում պարտատոմսի սեփականատերերը, կարող են պահանջել իրենց պատկանող պարտատոմսերի ամբողջական կամ մասնակի վաղաժամկետ մարում՝ Թողարկողին գրավոր պահանջ ներկայացնելով:
Սույն կետով նախատեսված ժամկետը լրանալուց հետո Թողարկողը պարտավորվում է 1 (մեկ) աշխատանքային օրվա ընթացքում իր ինտերնետային կայքում հրապարակել տեղեկատվություն սույն Ազդագրի շրջանակում թողարկված և չմարված պարտատոմսերի ամբողջական կամ մասնակի վաղաժամկետ մարման պահանջ ներկայացրած պարտատոմսերի սեփականատերերի մասնաբաժնի մասին:
Եթե պարտատոմսերի մասնակի կամ վաղաժամկետ մարման պահանջ ներկայացրել են սույն Ազդագրի շրջանակում թողարկված և չմարված պարտատոմսերի ընդհանուր անվանական արժեքի 10%-ից պակաս տիրապետող սեփականատերերը (միասին կամ առանձին-առանձին), պարտատոմսերի մասնակի կամ վաղաժամկետ մարում տեղի չի ունենում:
Թողարկողը պարտավոր է հետ գնել պարտատոմսի սեփականատերերի կողմից մասնակի կամ վաղաժամկետ մարման պահանջ ներկայացրած պարտատոմսերը՝ դրանց դիմաց վճարելով անվանական արժեքի և մինչև հետգնման օրը

հաշվեգրված տոկոսագումարները, եթե նման պահանջ են ներկայացրել սույն Ազդագրի շրջանակում թողարկված և չմարված պարտատոմսերի ընդհանուր անվանական արժեքի 10% և ավել տիրապետող սեփականատերերը (միասին կամ առանձին-առանձին) և Թողարկողը շտկման ժամկետի ընթացքում չի հրապարակել կովենանտների խախտման դեպքը վերացնելու մասին հայտարարություն:

4. **Հետգնման ժամկետները.** Պարտատոմսերի հետգնումը տեղի է ունենում սույն կետի 3-րդ ենթակետով սահմանված 20-օրյա ժամկետի ավարտից հետո՝ առավելագույնը 10 (տասը) աշխատանքային օրվա ընթացքում:
5. **Տոկոսագումարների և վճարումների դադարեցում.** Թողարկողը չի կարող կատարել շահույթի բաշխում կամ այլ ոչ պարտադիր վճարումներ, մինչև խախտման պատճառները լիովին վերացված չլինեն:

ԲԱԺԻՆ 3. ԹՈՂԱՐԿՈՂԻ ՄԱՍԻՆ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ

3.1. Անկախ աուդիտորներ

Թողարկողի ֆինանսական հաշվետվությունների 2023-2024թ.-ի աուդիտն իրականացրվել է «ԳՐԱՆԹ ԹՈՐՆԹՈՆ» ՓԲԸ կողմից.

Հասցե՝ Երևան Պլազա բիզնես կենտրոն, ՀՀ ք. Երևան, Գր. Լուսավորիչ 9

հեռ.՝ + 374 (10) 500964/61

կայք՝ <https://www.grantthornton.am/>:

«ԳՐԱՆԹ ԹՈՐՆԹՈՆ» ՓԲԸ-ն անդամակցում է հետևյալ մասնագիտական կառույցներին՝

- Հայաստանի աուդիտորների և փորձագետ հաշվապահների պալատ,
- Հայաստանի արդյունաբերողների և գործարարների միություն,
- Ամերիկայի առևտրի պալատը Հայաստանում:

Աուդիտի նպատակն է ձեռք բերել բավարար երաշխիքներ՝ համոզվելու համար, որ ֆինանսական հաշվետվությունները զերծ են էական անճշտություններից:

3.2. Ռիսկային գործոններ

Սույն Ծրագրային ազդագրով առաջարկվող պարտատոմսերում ներդրումը կապված է որոշակի ռիսկերի հետ: Պոտենցիալ ներդրողը, մինչև պարտատոմսերում ներդրում կատարելու մասին որոշում ընդունելը, պետք է շրջահայաց լինի և հաշվի առնի ստորև բերված ռիսկերը:

Պոտենցիալ ներդրողը պետք է գիտակցի, որ ստորև բերված ռիսկերը ոչ բոլոր ռիսկերն են, որ երբևէ կարող են ի հայտ գալ: Թողարկողը բացահայտել է միայն այն ռիսկերը, որոնք ազդագրի կազմման ընթացքում հայտնի են եղել իրեն և նա համարել է էական: Ենթադրաբար, կարող են լինել լրացուցիչ ռիսկեր, որոնք թողարկողն այժմ չի համարում էական կամ որոնք ներկայումս հայտնի չեն:

Ներդրողը ներդրում կատարելու մասին որոշում ընդունելու համար պետք է մանրամասն ուսումնասիրի սույն փաստաթղթում ներկայացված ռիսկերն ու այլ տեղեկատվությունը:

Իրավական և կանոնակարգային ռիսկեր. Սուրհանդակային կապի և փոստային կապի ծառայությունները Հայաստանում հանդիսանում է լիցենզավորվող գործունեություն և ենթարկվում է օրենսդրական կարգավորման: Այս խմբի ռիսկերը առնչվում են

օրենսդրական այնպիսի փոփոխությունների հետ, որոնք կարող են կասեցնել կամ սահմանափակել որոշ ծառայությունների մատուցումը, ինչպես նաև նորմատիվ ակտերին անհամապատասխանության հետ և առաջացնել լիցենզավորման կամ հաշվետվողականության խախտումներ:

Ընկերությունը վստահորեն կառավարում է այս ռիսկը մասնագիտացված անձնակազմի շնորհիվ, թվային տեխնոլոգիաների կիրառման և կարգավորման առաջանցիկ սկզբունքների ներդրմամբ, ինչպես նաև իրականացնում է օրենսդրական դաշտի մշտադիտարկում:

Ֆինանսական կամ մակրոտնտեսական ռիսկեր. Ընկերության գործունեությունը սերտորեն կապված է երկրի մակրոտնտեսական իրավիճակի հետ: Տնտեսական անկայունության, արժույթի արժեզրկման և շուկայական անկման արդյունքում ավելանում են օպերացիոն ծախսերը առաջանում են վճարունակության խնդիրներ, որոնք պայմանավորված են վճարումների ուշացմամբ կամ պարտքերի կուտակմամբ:

Արտարժույթային ռիսկ. Թողարկողը ենթարկված է արտարժույթային ռիսկին արտարժույթային փոխառությունների և արտարժույթային դրամական մնացորդների գծով:

Իրացվելիության ռիսկ. Շուկայական իրավիճակի կտրուկ փոփոխության կամ Թողարկողի ֆինանսական վիճակի վատթարացման արդյունքում կարող է առաջանալ իրացվելիության ռիսկ: Հաշվի առնելով Թողարկողի գործունեության ոլորտը՝ իրացվելիության ռիսկեր կարող են առաջացնել Ընկերության հաճախորդների քանակային տատանումները: Այնուամենայնիվ, այդ տատանումները հակված չեն լինել սեզոնային:

Դեֆոլտի ռիսկ. Ներդրողն իր վրա է վերցնում ապագայում թողարկողի ֆինանսական վիճակի հնարավոր վատթարացման, պարտատոմսերի մայր գումարի կամ արժեկտրոնների վճարման անհնարինության, հավանական սնանկացման ռիսկը:

Մրցակցային ռիսկեր. Այս խմբի ռիսկերը առնչվում են ոլորտում գործունեություն ծավալող բազմաթիվ այլ մրցակից ընկերությունների թվաքանակի աճի հետ:

Թողարկողը այս ռիսկերը զսպելու համար իրականացնում է նորարարական ծառայությունների պարբերական ներդրում, մշտապես ներդրումներ է կատարում թվային և գործառնական տեխնոլոգիաների մեջ, ներդրված են բջջային հավելված, առցանց հետևում, օնլայն վճարումներ, ինչպես նաև ներդրված է արդյունավետ մարկետինգային ռազմավարություն՝ հաճախորդների նկատմամբ վստահության ամրապնդելու համար:

Տեխնոլոգիական ռիսկեր. Այս խմբի ռիսկերը առնչվում են դանդաղ, անկայուն, անարդյունավետ ծրագրային ապահովման, սերվերների խափանման, ցանցային վթարների, տվյալների արտահոսքերի, համակարգերի վրա հարձակումների հետ:

Թողարկողը այս ռիսկերը զսպելու համար իրականացնում է տեխնոլոգիական համակարգերի պարբերական արդիականացում, ներդրված են տեղեկատվական անվտանգության միջոցներ, անձնակազմը պարբերաբար անցնում է

կիրենոանվտանգության վերապատրաստումներ, ինչպես նաև կատարվում են բազաների պարբերական կրկնօրինակում (backup):

Լոգիստիկ ռիսկեր. Այս խմբի ռիսկերը առնչվում են այնպիսի տրանսպորտային խնդիրների հետ, որոնք կապված են չնախատեսված լոգիստիկ խնդիրների, մեքենաների խափանումների հետ: Առաքման սխալները նույնպես այս ռիսկային խմբում են, որոնք կապված են հասցեների սխալ նշմամբ, փաթեթների կորուստով:

Թողարկողը այս ռիսկերը զսպելու համար իրականացնում է լոգիստիկ համակարգերի ավտոմատացում՝ GPS, պահեստային կառավարման ծրագրեր, ներդրված են կողավորման և հետևման (tracking) համակարգեր, իրականացվում է տրանսպորտային միջոցների պարբերական տեխնիկական սպասարկում:

Մարդկային ռիսկեր. Այս խմբի ռիսկերը առնչվում են աշխատակիցների անբավարար պատրաստվածության հետ, որի արդյունքում տեղի է սխալ փաթեթավորում, սխալ առաքում, անհարկի ուշացումներ: Այս խմբին են պատկանում նաև աշխատուժի պակասը և հաճախորդների վատ սպասարկումը՝ դժգոհություններ, բողոքների աճ:

Թողարկողը այս ռիսկերը զսպելու համար իրականացնում է անձնակազմի պարբերական վերապատրաստումներ իրականացվում է մշտական ծառայողական վերահսկողություն, գործընթացների ստանդարտացում և որակի հսկողություն, ներդրված են բողոքների կառավարման մեխանիզմներ (call center, chatbot, feedback system), ինչպես նաև լավագույն աշխատակիցների համար խրախուսման ծրագրեր:

3.3. Տեղեկատվություն Թողարկողի մասին

3.3.1. Թողարկողի պատմությունը և զարգացումը

Հիմնադրում և առաջին քայլեր (2015–2016 թթ.). Գլոբբինգը հիմնադրվել է 2015 թվականին՝ որպես փոքրիկ ստարտափ, որի նպատակ էր փոխել օնլայն գնումների մշակույթը Հայաստանում և ստեղծել կամուրջ հայ սպառողների ու համաշխարհային շուկայի միջև: Նույն տարում գործարկվեց ընկերության առաջին սպասարկման սրահը Երևանում, ինչպես նաև մեկնարկեց առաջին «Սև Ուրբաթ»-ը Հայաստանում, որի արդյունքում հազարավոր օգտատերեր հնարավորություն ստացան օգտվելու միջազգային զեղչերից և պատվիրելու ապրանքներ համաշխարհային բրենդներից՝ առանց միջնորդների:

Առաջին ընդլայնում և միջազգային ուղղությունների ավելացում (2017–2019 թթ.). Գլոբբինգը սկսեց արագ աճել՝ ընդլայնելով թե՛ իր ծառայությունների ծավալը, թե՛ աշխարհագրությունը: Այս շրջանում ավելացվեցին նոր առաքման ուղղություններ՝ ԱՄՆ, Մեծ Բրիտանիա, Գերմանիա և Չինաստան, ինչպես նաև բացվեցին նոր

սպասարկման սրահներ Երևանում և մարզերում՝ ապահովելով ավելի լայն հասանելիություն:

Այդ տարիներին ձևավորվեց նաև Ընկերության սեփական ավտոմատացված համակարգը, որը թույլ էր տալիս վերահսկել ծանրոցների ամբողջ շարժը՝ պատվերից մինչև առաքում:

Տեխնոլոգիական թռիչք և ենթակառուցվածքների զարգացում (2020–2022 թթ.).

Գլոբբինգը դարձավ տարածաշրջանի առաջին ընկերությունը, որը ներդրեց ողբոտացված սպասարկման սրահների և սմարթ լոքերների ցանց: Այս նորարարությունը վերափոխեց ծանրոցների ստացման մշակույթը՝ ապահովելով ինքնասպասարկման մոդել, որտեղ հաճախորդները կարող էին ստանալ իրենց ծանրոցները միջինում 20 վայրկյանում:

Լոքերների ցանցը տարածվեց Հայաստանի ամենաթիրախային վայրերում՝ առևտրային կենտրոններում, բիզնես թաղամասերում և բնակելի վայրերում, որտեղ Ընկերությունն ունի էքսկլյուզիվ իրավունքով ներկայացվածություն:

2022թ. Գլոբբինգը իր դուստր ընկերության՝ Ղազախստանում հիմնադրված «Գլոբբինգ» ՍՊԸ-ի միջոցով մուտք գործեք Ղազախստանի շուկա՝ ամրապնդելով իր տարածաշրջանային դիրքերը:

Միջազգային գործընկերություն և ԱՄՆ պահեստային հարթակ (2022–2023 թթ.).

Ընկերությունը հաստատեց գործընկերային համագործակցություն ԱՄՆ-ում՝ գործարկելով պահեստ, որտեղ բոլոր բեռները ենթարկվում են ավտոմատացված տեսակալորման և որակի ստուգման գործընթացի: Սա թույլ տվեց բարձրացնել առաքման արագությունը և նվազեցնել մարդկային գործոնի ազդեցությունը:

Կարգո տերմինալի գործարկում և մրցակցային առավելություն (2025թ.)

Գլոբբինգը իրականացրեց իր ամենամեծ ենթակառուցվածքային ներդրումը՝ գործարկելով սեփական մաքսային կարգո տերմինալը, որը բացառիկ թողունակությամբ ապահովում է հազարավոր ծանրոցների մշակում ամեն օր: Այս քայլը վերացրեց արտաքին օպերատորներից կախվածությունը և դարձավ ընկերության հիմնական մրցակցային առավելություններից մեկը՝ ապահովելով արագ առաքում, ավելի ցածր ինքնարժեք և բարձր որակ:

Ժամանակակից փուլ. միջազգային ընդլայնում և նորարարական աճ (2024 թ.-ից սկսած). 2024թ.-ին թվականին Գլոբբինգը հատեց նոր պատմական սահմանագիծ՝ առաքելով ավելի քան 10 միլիոն ծանրոց: Այսօր Գլոբբինգը ներկայացված է Հայաստանում և Ղազախստանում, ինչպես նաև պատրաստվում է մուտք գործել նոր շուկաներ Եվրոպայում և Մերձավոր Արևելքում: Ընկերությունը զարգացնում է իր

Ֆրանչայզինգի միջազգային ծրագիրը, որն ուղղված է ծառայությունների արտահանմանը և տեղական գործընկերների միջոցով նոր շուկաներ մուտք գործելուն:

Բացի տեխնոլոգիական և լոգիստիկ առաջընթացից, Ընկերությունը շարունակում է կարևորել իր սոցիալական առաքելությունը՝ իրականացնելով բարեգործական, կրթական և համայնքային ծրագրեր, խթանելով նորարարությունը և երիտասարդական ձեռնարկատիրությունը:

Թողարկողի լրիվ ֆիրմային անվանումն է՝

հայերեն՝ «Գլոբալ Շիփինգ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություն

ռուսերեն՝ “Глобал Шиппинг” Общество с ограниченной ответственностью

անգլերեն՝ “Global Shipping” Limited Liability Company

Թողարկողի կրճատ ֆիրմային անվանումն է՝

հայերեն՝ «Գլոբալ Շիփինգ» ՍՊԸ

ռուսերեն՝ ООО “Глобал Шиппинг”

անգլերեն՝ “Global Shipping” LLC

Թողարկողի պետական գրանցման վայրն է՝

ՀՀ, 0051, ք. Երևան, Հր.Քոչար 44/53

Թողարկողի պետական գրանցման համարն է՝ 264.110.863832

Թողարկողի գտնվելու վայրն է՝

ՀՀ, 0051, ք. Երևան, Հր. Քոչար 44/53

Կապի միջոցները՝

հեռ.՝ (+374 60) 616-616

Էլ. փոստ info@globbing.com

Ինտերնետային կայք՝ www.globbing.com

Թողարկողի հիմնադրման երկիրը՝

Հայաստանի Հանրապետություն

Ընկերության կազմակերպչաիրավական ձևը՝

Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություն:

Պարտատոմսերում ներդրումների հետ կապված հարցերի դեպքում ներդրողները կարող են կապ հաստատել «Կոնվերս Բանկ» ՓԲԸ-ի Ներդրումային դեպարտամենտի Կորպորատիվ ներդրումային բանկային ծառայությունների բաժնի համապատասխան աշխատակիցների հետ՝ հետևյալ հեռախոսահամարներով.

(+374 10) 511-211 (ներքին) 2449 կամ 2454, էլ հասցե. Elen.Karimyan@conversebank.am, Emilia.Yeghiazaryan@conversebank.am, corpinvest@conversebank.am:

Թողարկողի ֆիրմային անվանումը պաշտպանված է ՀՀ նորմատիվ իրավական ակտերով և գրանցված է ՀՀ արտոնագրային վարչությունում:

Թողարկողի ապրանքային նշանն է՝

GLOBBING

Թողարկողի հիմնադիր և միակ բաժնետեր է հանդիսանում ՀՀ քաղաքացի Շուշանիկ Հարությունյանը:

3.3.2. Ներդրումները

Թողարկողը 2022-2025թթ. Հայաստանում բացել է 8 սպասարկման սրահ, որից 6-ը Երևան քաղաքում և մեկական սպասարկման սրահներ Գյումրիում և Վանաձորում: 2025թ.-ին գործարկվել է Ընկերության սեփական մաքսային կարգո տերմինալ՝ հազեցած ժամանակակից տեսակավորման հոսքագծով:

Ստեղծվել և ընդլայնվել է նորարարական լոքերների ամենամեծ ցանցը Հայաստանում, որը բաղկացած է 157 լոքերներից, որոնք տեղակայված են Երևանում և մարզերում: Ընկերությունն այս ընթացքում իրականացրել է նաև ծրագրային ապահովման, տեխնիկական ու տրանսպորտային միջոցների արդիականացում:

Ընդհանուր առմամբ այս գործողությունները կատարելու համար սեփական միջոցների հաշվին ներդրվել է մոտ 3.3 մլն. ԱՄՆ դոլար:

Ներկայումս ընկերությունը Երևանում և Ղազախստանի Շիմկենտ քաղաքներում նախաձեռնել է նոր սպասարկման սրահների կառուցման աշխատանքները: Տարածքները վարձակալվել են, ներկայումս գտնվում են նախագծա-հաշվարկային փաստաթղթերի կազմման և շինարարական թույլտվությունների ստացման փուլում: Նախատեսվում է ծախսել մոտ 200 հազար ԱՄՆ դոլար, որի ֆինանսավորումը կիրականացվի սեփական միջոցների հաշվին:

Բացի այդ, Ընկերության կողմից հաստատվել է նախագիծ, համաձայն որի նախատեսվում է Դուստր ընկերության ծավալների աճը խրախուսող միջոցառումներ, որի արդյունքում Ղազախստանում կկառուցվեն 13 հատ նոր սպասարկման սրահներ և կտեղադրվեն 222 հատ լոքերներ: Այս նախագծով ընկերությունը հնարավորություն կունենա ավելացնել Դուստր ընկերության հասույթը մոտ 2 անգամ: Ամբողջ նախագծի արժեքը գնահատվել է մոտ 2.7 մլն. ԱՄՆ դոլար: Այս աշխատանքները ֆինանսավորվելու են այս պարտատոմսերի թողարկումից ստացվող միջոցներով:

Անկնկալվում է, որ նախագծի մեկնարկը կտրվի 2026թ. առաջին կիսամյակում և կավարտվի նույն թվականի տարեվերջին:

Այս նախաձեռնությունները միտված են երկարաժամկետ զարգացման և ընկերության շուկայական դիրքերի ամրապնդմանը՝ ապահովելով ֆինանսական կայունություն և հետագա աճի հնարավորություններ:

Այս նախաձեռնությունները միտված են երկարաժամկետ զարգացման և ընկերության շուկայական դիրքերի ամրապնդմանը՝ ապահովելով ֆինանսական կայունություն և հետագա աճի հնարավորություններ:

3.4. Բիզնեսի նկարագիրը

3.4.1. Հիմնական գործունեություն

Գլոբբինգը միջազգային օնլայն գնումների հեղափոխական հարթակ է, որը վերացնում է սահմանները գնորդի և համաշխարհային շուկայի միջև: Այն հնարավորություն է տալիս օգտատերերին առանց որևէ սահմանափակման ձեռք բերել ապրանքներ աշխարհի խոշորագույն օնլայն խանութներից՝ օգտագործելով ինը տարբեր երկրների անվճար հասցեներ և ստանալով ծանրոցները Հայաստանում:

Բիզնեսի էկոհամակարգը ներառում է գերժամանակակից սպասարկման սրահներ, հզոր և անընդհատ աճող լոքերների ցանց, սեփական տեխնոլոգիապես հագեցած պահեստներ ԱՄՆ-ում, ինչպես նաև մաքսային կարգո համալիր Երևանում: Բացի այդ, Գլոբբինգը հաջողությամբ զարգացնում է ֆրանչայզինգ ծրագիր, որը հնարավորություն է տալիս իր բիզնես մոդելը տարածել միջազգային մասշտաբով:

Թողարկողը ունի Փոստային կապի բնագավառում փոստային կապի գործունեություն լիցենզիա ՓԿՈ34 տրված՝ 29.09.2015թ-ին. /ներդիր 01՝ սուրհանդակային կապի ծառայությունների գործունեություն, ներդիր 02՝ փոստային կապի ծառայությունների գործունեություն/:

Հիմնական գործունեության նկարագրությունը

Գլոբբինգը հանդիսանում է օնլայն գնումների միջազգային հարթակ, որն առաջարկում է հետևյալ ծառայություններն ու ապրանքներն՝

- Օնլայն գնումներ համաշխարհային խանութներից՝ օգտագործելով 9 երկրների անվճար հասցեներ, ինչը հնարավորություն է տալիս պատվիրել ապրանքներ աշխարհի ցանկացած կետից և ստանալ ծանրոցները Հայաստանում:
- Ինովացիոն սպասարկման սրահներ՝ ծանրոցների արագ և արդյունավետ ստացման համար (միջինում 20 վայրկյան):

- Լոքերների ցանց՝ ծանրոցների հարմարավետ ստացման տարբերակների ապահովման համար:
- Ֆրանչայզինգ ծրագիր՝ միջազգային գործընկերների միջոցով ծառայությունների ընդլայնման համար:
- Սեփական պահեստներ և մաքսային կարգո համալիր՝ ժամանակակից լոգիստիկայի ապահովման համար:
- Բարեգործական և կրթական ծրագրեր, համայնքային աջակցության նախաձեռնություններ, նորարարության խթանում:

Լրացուցիչ ծառայություններ

- **Առաքում (ներպետական և միջազգային).**

Ընկերությունը տրամադրում է ինչպես ներպետական, այնպես էլ միջազգային առաքման ծառայություններ՝ ապահովելով ծանրոցների արագ և անվտանգ փոխադրում: Ընկերությունը համագործակցում է առաջատար միջազգային փոխադրող ընկերությունների հետ և օգտագործում է սեփական լոգիստիկ լուծումներ՝ նվազեցնելով առաքման ժամկետները և ապահովելով ծանրոցների ամբողջական վերահսկում մինչև վերջնական հասցեն:

- **«Դռնից դուռ» առաքում (Door-to-Door Delivery).**

Հաճախորդները կարող են ստանալ իրենց պատվերները առանց սպասարկման սրահ այցելելու: Գլոբբինգի «դռնից դուռ» ծառայությունը ապահովում է ծանրոցի առաքում անմիջապես հաճախորդի տան, աշխատանքի կամ այլ նշված վայրի հասցեով: Ծառայությունը գործում է Հայաստանի ամբողջ տարածքում և թույլ է տալիս օգտատերերին խնայել ժամանակ՝ ստանալով առավել հարմարավետ փորձ:

- **«Գնել իմ փոխարեն» (Buy For Me).**

Այս ծառայությունը նախատեսված է նրանց համար, ովքեր չեն կարողանում կատարել օնլայն գնում՝ վճարման միջոցների սահմանափակման կամ տեխնիկական դժվարությունների պատճառով: Գլոբբինգի թիմը կատարում է գնումը հաճախորդի անունից՝ ապահովելով վճարման, պատվերի գրանցման և առաքման ամբողջ գործընթացը: Այս կերպ յուրաքանչյուր օգտատեր կարող է օգտվել համաշխարհային խանութների առաջարկներից՝ անկախ իր գտնվելու վայրից կամ քարտային սահմանափակումներից:

3.4.2. Հիմնական շուկաները

Ընկերությունը առաքումներ է կատարում աշխարհի 9 երկրներից ամեն ինչ, ինչը հնարավոր է գնել օնլայն խանութներից՝ ուղարկելով ծանրոցներ Հայաստան, Ղազախստան: Դեպի Ղազախստան առաքումներն իրականացվում են թողարկողի դուստր ընկերության՝ Գլոբբինգ Ղազախստանի միջոցով:

Հարթակը թույլ է տալիս հաճախորդներին օգտվել միջազգային առաքման և օնլայն գնումների ծառայություններից՝ առանց սահմանափակումների:

Գլոբբինգը գործունեության հենց առաջին տարում Հայաստանում և Ղազախստանում կարողացավ դառնալ շուկայի առաջատար՝ ձևավորելով վստահելի բրենդ և ապահովելով կարևոր մրցակցային առավելություններ: Ընկերությունը առանձնանում է իր նորարարական լուծումներով՝ ինտեգրելով տեխնոլոգիապես զարգացած լոգիստիկ համակարգերի, ինովացիոն սպասարկման սրահների, լոքերների ցանցի և ԱՄՆ-ի պահեստային հզորությունները:

Հայաստանում շուկան բարձր մրցակցային է. այստեղ գործում են տասնյակ ծառայություններ մատուցող կազմակերպություններ, որոնք փորձել են գտնել իրենց տեղը միջազգային առաքումների ոլորտում: Գլոբբինգի հիմնական մրցակիցներն են.


- Onex
- Shipex
- RobBot
- Ber-Ber
- Shipme.am
- One Way Logistic:

Զնայած մրցակիցների մեծ թվին, Գլոբբինգը շարունակել է ամրապնդել իր առաջատար դիրքը շուկայում՝ շնորհիվ հետևյալ ռազմավարական առավելությունների՝

- Առաջադեմ տեխնոլոգիական լուծումների մշտական ներդրում,
- Մատակարարման շղթայի արդյունավետ կառավարում,
- Միջազգային ուղղությունների և ծառայությունների շարունակական ընդլայնում,
- Հաճախորդամետ մոտեցում և սպասարկման որակի կատարելագործում:

3.5. Թողարկողի կառուցվածքը

Թողարկողին է պատկանում Ղազախստանում գրանցված «Գլոբբինգ» ՍՊԸ-ի բաժնեմասի 100%-ը, հետևաբար «Գլոբալ Շիփինգ» ՍՊԸ-ն և «Գլոբբինգ» ՍՊԸ-ն հանդիսանում են նույն խմբի անդամ: Ստորև ներկայացված է խմբի կառուցվածքը՝



3.6. Թողարկողի հիմնական միջոցները

Թողարկողի հիմնական միջոցների մնացորդը 2025թ. հունիսի 30-ի դրությամբ ներկայացված է ստորև աղյուսակով.

Հիմնական միջոցներ (30/16/2025 դրությամբ)	Հաշվեկշռային արժեք (հազար դրամ)
Օգտագործման իրավունքի ձևով ակտիվներ	775,392
Տրանսպորտային միջոցներ	117,929
Մեքենա սարքավորումներ	75,402
Արտադրական և տնտեսական գույք	49,489
Այլ	59,348
Ընդամենը	1,077,560

Թողարկողի կողմից օգտագործման իրավունքի ձևով ակտիվների տիրապետումը կարգավորվում է վարձակալության պայմանագրերով: Այսինքն, Ընկերությանը պատկանող բոլոր սպասարկման սրահների տարածքները անժամկետ պայմանով վարձակալված են և այդ շինությունների վերանորոգման աշխատանքները կապիտալացվում են:

Թողարկողի հիմնական միջոցների հաշվեկշռային արժեքի 10 և ավելի տոկոսը գերազանցում է միայն Տրանսպորտային միջոցները, որոնք սեփականության իրավունքով պատկանում են թողարկողին:

Ներկա պահին, Ընկերության ղեկավարությունը չի նախատեսում այնպիսի փոփոխություններ, որոնք կարող են սահմանափակել հիմնական միջոցների օգտագործումը:

3.7. Զարգացման վերջին միտումները

Գլոբբինգը պարբերաբար ընդլայնում է իր ծառայությունների շրջանակը՝ նոր առաքման ուղղությունների (Չինաստան, Իսպանիա և այլն) և նոր տեխնոլոգիական լուծումների ներդրմամբ: Լրացուցիչ նախատեսվում է նոր ծառայությունների առաջարկ՝ օգտագործելով առաջադեմ լոգիստիկ համակարգեր, ինովացիոն գործիքներ և թվային լուծումներ հաճախորդների համար, ինչպես նաև իրականացնում է նոր համագործակցություններ միջազգային խանութների հետ:

Թողարկողի նպատակն է հնարավորություն տալ գնումներ կատարել առանց սահմանների՝ ապահովելով անխափան հասանելիություն համաշխարհային ապրանքներին՝ անկախ աշխարհագրական դիրքից: Մենք մեր հաճախորդներին տրամադրում ենք հարմարավետ, վստահելի և նորարարական լոգիստիկ լուծումներ, որոնք խնայում են ժամանակն ու գումարը:

3.8. Թողարկողի կառավարման մարմինները և կառավարման մարմինների անդամները

3.8.1. Թողարկողի վարչակազմակերպական կառուցվածքը և յուրաքանչյուր մարմնի իրավասություններն ու պարտականությունները

Ընկերության կառավարման մարմիններն են Ընկերության մասնակիցների ընդհանուր ժողովը (այսուհետ՝ Ժողով), Ընկերության խորհուրդը և Ընկերության գործադիր մարմինը՝ տնօրենը: Թողարկողի կազմակերպական կառուցվածքը ներկայացված է Հավելված 1-ում:

Ընկերության Ժողովը

Ընդհանուր ժողովի բացառիկ լիազորություններն են՝

- 1) Ընկերության գործունեության հիմնական ուղղությունների որոշումը, ինչպես նաև կազմակերպություններ հիմնադրելու կամ նրանց մասնակցելու հարցերը՝ Հայաստանի Հանրապետությունում և այլ երկրներում.
- 2) Ընկերության կանոնադրության և ընկերության կանոնադրական կապիտալի չափի փոփոխումը.

- 3) Ընկերության խորհրդի ձևավորումը, Ընկերության տնօրենի նշանակումը և լիազորությունների վաղաժամկետ դադարեցումը, ինչպես նաև Ընկերության գործադիր մարմնի լիազորություններն առևտրային կազմակերպությանը կամ անհատ ձեռնարկատիրոջը (այսուհետ՝ կառավարիչ) տալու հարցերը.
- 4) վերստուգողի ընտրությունը և լիազորությունների վաղաժամկետ դադարումը.
- 5) տարեկան հաշվետվությունների և տարեկան հաշվեկշռի հաստատումը.
- 6) Ընկերության շահույթն ընկերության մասնակիցների միջև բաշխելու մասին որոշումն ընդունելը.
- 7) Ընկերության ներքին գործունեությունը կարգավորող փաստաթղթերի (ընկերության ներքին փաստաթղթեր) ընդունումը (հաստատումը).
- 8) Ընկերության կողմից արժեթղթերի թողարկման մասին որոշումն ընդունելը.
- 9) Ընկերության աուդիտի իրականացման որոշումն ընդունելը.
- 10) Ընկերության վերակազմակերպման և լուծարման մասին որոշումն ընդունելը. լուծարման հանձնաժողովի նշանակումը և լուծարման հաշվեկշռի ընդունումը.
- 11) Օրենքով և (կամ) Ընկերության կանոնադրությամբ նախատեսված այլ հարցերի լուծումը:

Ընկերության խորհուրդը

Խորհուրդն իրականացնում է հետևյալ իրավասությունները՝

- 1) Գործադիր մարմնի գործունեության գնահատումը,
- 2) Ընկերության պարտատոմսերի և այլ արժեթղթերի տեղաբաշխման վերաբերյալ որոշման կայացումը,
- 3) Ընկերության տարեկան հաշվետվությունների նախնական հաստատումը,
- 4) Վերստուգողի (ներքին աուդիտորի) և արտաքին աուդիտորի վարձատրության և ծախսերի փոխհատուցումների վճարման կարգի և պայմանների վերաբերյալ
- 5) Ժողովի համար առաջարկությունների նախապատրաստումը:

Ընկերության տնօրենը

Ընկերության ընթացիկ գործունեության ղեկավարումն իրականացնում է տնօրենը, որն ընտրվում է ժողովի կողմից: Ընկերության տնօրենը՝

- 1) տնօրինում է Ընկերության գույքը, այդ թվում՝ ֆինանսական միջոցները, Ընկերության անունից կնքում է պայմանագրեր, կատարում համապատասխան գործարքներ,
- 2) ներկայացնում է Ընկերությունը Հայաստանի Հանրապետությունում և օտարերկրյա պետություններում, Ընկերության անունից ստորագրում է Հայաստանի Հանրապետությունում և այլ երկրներում Ընկերության դուստր ընկերությունների հիմնադրման որոշումները,

- 3) գործում է առանց լիազորագրի, տալիս է լիազորագրեր.
- 4) Հայաստանի Հանրապետության և օտարերկրյա բանկերում բացում է Ընկերության բանկային հաշիվներ՝ ինչպես դրամով, այնպես էլ արտարժույթով.
- 5) Աշխատանքի ընդունում և աշխատանքից ազատում է Ընկերության աշխատողներին, որոնց նկատմամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով կիրառում է խրախուսման և կարգապահական պատասխանատվության միջոցներ,
- 6) Իր իրավասության սահմաններում ընդունում է որոշումներ, արձակում հրամաններ, կարգադրություններ, տալիս պարտադիր կատարման ենթակա հրահանգներ, ցուցումներ և վերահսկում դրանց կատարումը,
- 7) Ընկերության իրավասու կառավարման մարմնի քննարկմանն ու հաստատմանն է ներկայացնում Ընկերության կառուցվածքը, աշխատանքի վարձատրության տարեկան ֆոնդը, ընթացիկ գործունեության իրականացման համար անհրաժեշտ կանոնակարգերը, ամենամյա նախահաշիվները, Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ և սույն կանոնադրությամբ նախատեսված այլ փաստաթղթեր ու միջոցառումների նախագծեր,
- 8) մշակում և Ընկերության մասնակիցների ընդհանուր ժողովի քննարկմանն ու հաստատմանն է ներկայացնում Ընկերության գույքի տնօրինման և օգտագործման, հետագա գործունեության արդյունավետության բարձրացման վերաբերյալ առաջարկություններ ու Ընկերության սոցիալ-տնտեսական զարգացման կարճաժամկետ և երկարաժամկետ ծրագրերը:

3.8.2. Տեղեկություններ թողարկողի կառավարմանը մասնակցող յուրաքանչյուր անձի վերաբերյալ

Թողարկողի կառավարմանը մասնակցող յուրաքանչյուր անձի վերաբերյալ տեղեկությունները ներկայացված են ստորև բերված աղյուսակում՝

Թողարկողի խորհրդի կազմը

Անուն ազգանուն	Պաշտոնը	Թողարկողի կազմից դուրս գործունեությունը
Դավիթ Հարությունյան	Խորհրդի նախագահ	«GLOBBING» LLC /ԱՄՆ/ միակ սեփականատեր և տնօրեն

Արամ Կայֆաջյան	Խորհրդի անդամ	«Արմբրոկ» ԲԲԸ գլխավոր տնօրեն և բաժնետեր «ԳԼՈՔԱԼ» ՓԲԸ /Global Asset Management/բաժնետեր և խորհրդի անդամ «ԷՄ ԲԻ ԼԵԳԱԼ» ՓԲԸ բաժնետեր, «ԷՄ ԲԻ ՔՆՍԱԼԹԻՆԳ» ՓԲԸ բաժնետեր, «ԻՆՎԵՍՏ ԻՆ ԷՅԷՄ» ՓԲԸ բաժնետեր
Գրիգոր Բեքմեզյան	Խորհրդի անդամ	«Բեքմեզյան Իրավաբանական Գրասենյակներ» ընկերության հիմնադիր ու կառավարիչ գործընկեր, ԵՊՀ-ի դոցենտ

Թողարկողի գործադիր մարմնի կազմը

Անուն ազգանուն	Պաշտոնը	Թողարկողի կազմից դուրս գործունեությունը
Շուշանիկ Հարությունյան	Տնօրեն, Ընկերության 100% բաժնեմասի սեփականատեր	«Հատուկ կոնստրուկտորական տեխնոլոգիական ինֆորմացիոն ձեռնարկություն» ԲԲԸ-ի փոխտնօրեն

3.8.3. Շահերի բախումը

Թողարկողի և Թողարկողի կառավարմանը մասնակցող անձանց միջև Ծրագրային Ազդագրի գրանցման ներկայացնելու պահի դրությամբ շահերի բախումը բացակայում է:

3.9. Կառավարման մարմինների գործունեությունը

Ընկերությունում առկա չէ աուդիտի կոմիտե:

Ընկերության կառավարման քաղաքականությունը միտված է հետևելու ՀՀ-ում ընդունված կորպորատիվ կառավարման սկզբունքներին:

3.10. Հսկող անձինք

Թողարկողի հսկող անձինք են.

Կանոնադրական կապիտալում մասնակցության ուժով	Թողարկողի նկատմամբ իրական (փաստացի) այլ միջոցներով վերահսկողության ուժով
Շուշանիկ Մուշեղի Հարությունյան	Դավիթ Հարությունյան

3.11. Թողարկողի ակտիվների և պարտավորությունների, ֆինանսական վիճակի, եկամուտների և ծախսի վերաբերյալ

3.11.1. Պատմական ֆինանսական տեղեկատվություն

Սույն ազդագրում ներկայացված Թողարկողի ֆինանսական հաշվետվությունները կազմված են ՖՀՄՍ ստանդարտների համաձայն:

Թողարկողի աուդիտորական եզրակացությամբ հաստատված տարեկան ֆինանսական հաշվետվությունները՝ 2023-2024 թթ.-ի համար, ինչպես նաև անկախ աուդիտորական եզրակացությունները և 2025 թվականի առաջին կիսամյակի հաշվետվությունները ներկայացված են սույն Ծրագրային ազդագրի Հավելված 5-ում:

3.11.2. Հարկային արտոնություններ

Թողարկողը այս պահին չի օգտվում որևէ հարկային արտոնությունից:

Պարտատոմսերի կարգավորվող շուկայում ցուցակվելու և առևտրին թույլատրվելու հայտը բավարարվելու դեպքում, Թողարկողը դիմելու է ՀՀ կառավարության 2023 թվականի հուլիսի 6-ի N 1125-L որոշմամբ հաստատված «Թողարկման և վարկանիշավորման պետական աջակցության ծրագրին»՝ պարտատոմսերի ցուցակման, տեղաբաշխման և բորսայում ցուցակման համար օժանդակություն ստանալու համար:

Օժանդակության պայմաններին բավարարելու դեպքում Թողարկողը կստանա սույն Ծրագրային ազդագրով նախատեսված արժեթղթերի թողարկման և տեղաբաշխման առաջին տրանշի ծավալի 2%-ի չափով միանվագ սուբսիդավորում թողարկման համար, և երեք տարի տարեկան 3%-ական տոկոսի չափով սուբսիդավորում՝ շրջանառության համար:

3.11.3. Դատական և իրավական ընթացակարգը

Ազդագրի գրանցման ներկայացմանը նախորդող 12 ամիսների ընթացքում Թողարկողը ներգրավված չի եղել այնպիսի դատական, արբիտրաժային և վարչական վարույթներում, որոնք թողարկողի ֆինանսական վիճակի կամ շահութաբերության վրա կարող են ունենալ կամ վերջերս ունեցել են էական ազդեցություն:

3.12. Լրացուցիչ տեղեկատվություն

3.12.1. Կանոնադրական կապիտալը

Ընկերության կանոնադրական կապիտալը Ծրագրային ազդագիրը գրանցման ներկայացնելու օրվա դրությամբ կազմել է 132,442,400 (հարյուր երեսուներկու միլիոն չորս հարյուր քառասուներկու հազար չորս հարյուր) ՀՀ դրամ, որը բաղկացած է 132,442,400 (հարյուր երեսուներկու միլիոն չորս հարյուր քառասուներկու հազար չորս հարյուր) ՀՀ դրամ արժեքով մեկ բաժնեմասից և ամբողջությամբ վճարված է:

3.13.2. Կանոնադրությունը

Համաձայն Թողարկողի Կանոնադրության 1.1- կետի՝ Ընկերությունը հիմարվում է շահույթ ստանալու նպատակով հիմնադրված առևտրային կազմակերպություն:

3.13. Էական պայմանագրեր

2023-2024 թթ. ընթացքում Թողարկողի կողմից բնականոն գործունեության շրջանակներից դուրս կնքված և գործողության մեջ գտնվող պայմանագրեր, որոնց գինը գերազանցում է Թողարկողի վերջին հաշվետու ժամանակաշրջանի ֆինանսական հաշվետվություններում նշված սեփական կապիտալի արժեքի 5%-ը չեն կնքվել:

3.14. Փորձագետի, գնահատողի, խորհրդատուի կամ հաշվապահի մասնագիտական կարծիքը և երրորդ անձանցից վերցված տեղեկատվությունը

Սույն Ծրագրային ազդագրի պատրաստման ընթացքում Թողարկողը օգտվել է «ԷՄ ԲԻ ՔՆՍԱԼԹԻՆԳ» ՓԲԸ (պետական գրանցման համար՝ 264.120.1161751, գրանցման

ամսաթիվ՝ 05.02.2021թ., ՀՎՀՀ՝ 00182311) խորհրդատվական ընկերության ծառայություններից, որի շրջանակում խորհրդատվական ընկերությունը գնահատել է «Օնլայն շոփփինգ ներվորք» ՍՊԸ-ի բիզնեսի արժեքը:

3.15. Այլ տեղեկատվություն

Բացի սույն Ծրագրային Ազդագրում ներկայացված Թողարկողի պատմական ֆինանսական հաշվետվություններից, որոնք ենթարկվել են աուդիտի անկախ աուդիտորական ընկերությունների կողմից, սույն Ծրագրային Ազդագրում ներկայացված այլ տեղեկատվություն չի ենթարկվել աուդիտի անկախ աուդիտորական ընկերությունների կողմից: Հաշվետվությունների և դրանց վերաբերյալ անկախ աուդիտորական կազմակերպությունների կողմից տրված եզրակացությունների պատճենները ներկայացված են Հավելված 5-ում:


Թողարկողի Կանոնադրությունը, տարեկան ֆինանսական հաշվետվությունները, աուդիտորական եզրակացությունները մշտապես հասանելի են հանրությանը էլեկտրոնային տարբերակով: Նշված փաստաթղթերի էլեկտրոնային տարբերակները տեղադրված են Թողարկողի ինտերնետային կայքում՝ www.globbing.com:

Սույն Ծրագրային ազդագրի էլեկտրոնային տարբերակը կիրառության ողջ ժամկետի ընթացքում տեղադրված է լինելու Թողարկողի և Տեղաբաշխողի ինտերնետային կայքերում՝ www.globbing.com, www.conversebank.am

Ներդրողը անվճար կարող է ձեռք բերել սույն Ծրագրային Ազդագիրը և դրան կից փաստաթղթերը թղթային տարբերակով՝ Տեղաբաշխողի Գլխամասային գրասենյակում՝ Հայաստանի Հանրապետություն, 0010, ք.Երևան, Հանրապետության հրապարակ, Վազգեն Սարգսյան 26/1 հասցեում:

ՆԵՐԴՐՈՂԸ, ԾԱՆՈԹԱՆԱԼՈՎ ՍՈՒՅՆ ԱԶԴԱԳՐԻՆ, ՊԵՏՔ Է ԻՆՔՆՈՒՐՈՒՅՆ ԳՆԱՀԱՏԻ ՏՎՅԱԼ ԱՐԺԵԹՂԹԵՐՈՒՄ ՍԵՓԱԿԱՆ ՆԵՐԴՐՄԱՆ ՌԻՍԿԸ՝ ՄԻՆՉԵՎ ՁԵՌՔԵՐՄԱՆ ՈՐՈՇՄԱՆ ԸՆԴՈՒՆՈՒՄ

Հավելված 1. «Գլոբալ Շիփինգ» ՍՊԸ-ի կազմակերպական կառուցվածքը



Հավելված 2. Ֆինանսական գործակիցների հաշվարկման բանաձևերը

Զուտ շահույթը մեկ բաժնետոմսի հաշվով (EPS) = Զուտ շահույթ շահութահարկի գծով ծախսի նվազեցումից հետո / Բաժնետոմսերի միջին կշռված թիվը

Սեփական կապիտալի շահութաբերություն (ROE) = Զուտ շահույթ շահութահարկի գծով ծախսի նվազեցումից հետո / Սեփական կապիտալի միջին մեծություն

Ակտիվների շահութաբերություն (ROA) = Զուտ շահույթ շահութահարկի գծով ծախսի նվազեցումից հետո / Ընդհանուր ակտիվների միջին մեծություն

Զուտ շահույթի մարժա (NPM) = Զուտ շահույթ շահութահարկի գծով ծախսի նվազեցումից հետո / Արտադրանքի, ապրանքների, աշխատանքների, ծառայությունների իրացումից հասույթ

Կապիտալի համարժեքության գործակից = Սեփական կապիտալ / Ընդհանուր ակտիվներ

Ֆինանսական կախվածության գործակից = Ընդամենը պարտավորություններ / Սեփական կապիտալ

Բացարձակ իրացվելիության գործակից = (Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ + Ընթացիկ ֆինանսական ներդրումներ) / Ընթացիկ պարտավորություններ

Ընթացիկ իրացվելիության գործակից = (Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ + Ընթացիկ ֆինանսական ներդրումներ + Ընթացիկ դեբիտորական պարտքեր և կանխավճարներ) / Ընթացիկ պարտավորություններ

Ընդհանուր իրացվելիության գործակից = Ընթացիկ ակտիվներ / Ընթացիկ պարտավորություններ

Դեբիտորական պարտքերի շրջանառելիության գործակից = Արտադրանքի, ապրանքների, աշխատանքների, ծառայությունների իրացումից հասույթ / Վաճառքների գծով դեբիտորական պարտքերի միջին արժեքը

Դեբիտորական պարտքերի շրջապտույտի տևողությունն օրերով = 365 / (Արտադրանքի, ապրանքների, աշխատանքների, ծառայությունների իրացումից հասույթ / Վաճառքների գծով դեբիտորական պարտքերի միջին արժեքը)

Պաշարների շրջանառելիության գործակից = Իրացված արտադրանքի, ապրանքների, աշխատանքների, ծառայությունների ինքնարժեք / Պաշարների միջին արժեքը

Պաշարների շրջապտույտի տևողությունն օրերով = 365 / (Իրացված արտադրանքի, ապրանքների, աշխատանքների, ծառայությունների ինքնարժեք / Պաշարների միջին արժեքը)

Կրեդիտորական պարտքերի շրջանառելիության գործակից = Իրացված արտադրանքի, ապրանքների, աշխատանքների, ծառայությունների ինքնարժեք / Կրեդիտորական պարտքերի միջին արժեքը

Կրեդիտորական պարտքերի շրջապտույտի տևողությունն օրերով = 365 / (Իրացված արտադրանքի, ապրանքների, աշխատանքների, ծառայությունների ինքնարժեք / Կրեդիտորական պարտքերի միջին արժեքը):

Հավելված 3. «Գլոբալ Շիփփինգ» ՍՊԸ թողարկած արժեկտրոնային պարտատոմսերի ձեռքբերման հայտ-հանձնարարական ֆիզիկական անձանց կամ անհատ ձեռնարկատերերի համար

Լրացվում է Ներդրողի կողմից

Հայտը Տեղաբաշխողին ներկայացման ամսաթիվը և ժամը (օր, ամիս, տարի, ժամ)	
Հայտ ներկայացնողի անունը (անուն, ազգանուն)	
Անձը հաստատող փաստաթղթի տվյալներ (անձնագրի համար)	
Անձը հաստատող փաստաթղթի տրման Ամսաթիվը (անձնագրի տրման ամսաթիվը)	
Գրանցման վայրը (գրանցման վայրի հասցեն)	
Ռեզիդենտությունը (ռեզիդենտ/ ոչ ռեզիդենտ)	

Սույն հայտ-հանձնարարականի ներկայացմամբ ընդունում եմ «Գլոբալ Շիփփինգ» ՍՊԸ առաջարկը, որով և ցանկություն եմ հայտնում ձեռք բերել թողարկած արժեկտրոնային պարտատոմսերը հետևյալ պայմաններով՝

Պարտատոմսի ԱՄՏԾ (ISIN)	
Պարտատոմսերի թողարկման արժույթ	
1 պարտատոմսի ձեռքբերման գինը (թվերով/տառերով)	
Պարտատոմսերի քանակը՝ հատ (թվերով/տառերով)	
Պարտատոմսերի դիմաց վճարվելիք ընդհանուր գումարը (թվերով/տառերով)	
Պարտատոմսերի ձեռքբերման համար ելքագրվող հաշվեհամարը	

Արժեթղթերի հաշիվը հաշվառող անձի անունը	
Արժեթղթերի հաշվի համարը	

Հավաստում եմ, որ հայտ-հանձնարարականը ներկայացնելուց առաջ, ըստ էության, ծանոթացել եմ վերջինիս անբաժանելի մասը հանդիսացող «Գլոբալ Շիփֆինգ» ՍՊԸ-ի պարտատոմսերի հրապարակային առաջարկի Ծրագրային Ազդագրին, ընդունում և համաձայն եմ դրանում նշված պայմաններին, ստանձնում եմ այդ պարտատոմսերում ներդրումների հետ կապված պարտականությունները և հնարավոր ռիսկերը:

Հաստատում եմ, որ ֆինանսական միջոցները, որոնք փոխանցվում են Տեղաբաշխողին, ստացված են օրինական ճանապարհով և ոչ մի կերպ կապված չեն ահաբեկչության ֆինանսավորման, թմրանյութերի վաճառքի, մարդկանց վաճառքի, հարկերի վճարումից խուսափելու և այլ հանցավոր գործունեության հետ:

Համաձայն եմ, որ Կողմերի միջև ծագած վեճերն ու տարաձայնություններն առաջնահերթության կարգով լուծվեն Կողմերի փոխադարձ բանակցությունների միջոցով, իսկ համաձայնության չգալու դեպքում՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

Սույն հայտ-հանձնարարականի հաստատման ու պահից այն կհանդիսանա Կողմերի միջև կնքված և ուժի մեջ մտած պայմանագիր:

Ներդրողի ստորագրություն -----

Լրացվում է Տեղաբաշխողի կողմից

Հայտի ընդունման ամսաթիվը և ժամը (օր, ամիս, տարի, ժամ)	
Հայտ ընդունող աշխատակցի ստորագրությունը և շտամպը	
Վաճառված պարտատոմսերի ընդհանուր քանակ (թվերով/տառերով)	
Վաճառված Պարտատոմսերի դիմաց գանձված ընդհանուր գումարը (թվերով/տառերով)	
Դրամական միջոցների փոխանցման/ մուտքագրման ամսաթիվը (օր, ամիս, տարի)	

Հիշեցում: Եթե ներդրողի կողմից պարտատոմսերի ձեռքբերման համար դրամական միջոցները ՀՀ դրամով պարտատոմսերի դեպքում՝ **19300927663876** կամ ԱՄՆ դոլարով պարտատոմսերի դեպքում՝ **19300637882578** հատուկ բանկային հաշվին են փոխանցվում մինչև աշխատանքային օրվա ժամը 16:30-ը, ապա այդ դրամական միջոցները մուտքագրված են համարվում դրանց վճարման օրը, իսկ եթե համապատասխան գումարները վճարվում են աշխատանքային օրվա 16:30-ից հետո, ապա դրանք մուտքագրված են համարվում վճարմանը հաջորդող առաջին աշխատանքային օրը:

Հավելված 4. «Գլոբալ Շիփփինգ» ՍՊԸ թողարկած արժեկտրոնային պարտատոմսերի ձեռքբերման հայտ-հանձնարարական իրավաբանական անձանց համար

Լրացվում է Ներդրողի կողմից

Հայտը Տեղաբաշխողին ներկայացման ամսաթիվը և ժամը (օր, ամիս, տարի, ժամ)	
Իրավաբանական անձի անվանումը (ֆիրմային անվանում, կազմակերպատիրական ձև)	
Պետական գրանցման տվյալները (գրանցման վկայականի համար, ամսաթիվ)	
Գրանցման և գտնվելու վայրը (գրանցման և գտնվելու վայրի հասցեները)	
ՀՎՀՀ	
Ռեզիդենտությունը (ռեզիդենտ/ ոչ ռեզիդենտ)	

Սույն հայտ-հանձնարարականի ներկայացմամբ ընդունում եմ «Գլոբալ Շիփփինգ» ՍՊԸ առաջարկը, որով և ցանկություն եմ հայտնում ձեռք բերել թողարկած արժեկտրոնային պարտատոմսերը հետևյալ պայմաններով՝

Պարտատոմսի ԱՄՏԾ (ISIN)	
Պարտատոմսերի թողարկման արժույթ	
1 պարտատոմսի ձեռքբերման գինը (թվերով/տառերով)	
Պարտատոմսերի քանակը՝ հատ (թվերով/տառերով)	
Պարտատոմսերի դիմաց վճարվելիք ընդհանուր գումարը (թվերով/տառերով)	
Պարտատոմսերի ձեռքբերման համար ելքագրվող բանկային հաշվեհամարը	

Արժեթղթերի հաշիվը հաշվառող անձի անունը	
Արժեթղթերի հաշվի համարը	

Սույնով, հավաստում եմ, որ հայտ-հանձնարարականը ներկայացնելուց առաջ, ծանոթացել եմ վերջինիս անբաժանելի մասը հանդիսացող «Գլոբալ Շիփինգ» ՍՊԸ-ի պարտատոմսերի հրապարակային առաջարկի Ծրագրային ազդագրին, ընդունում և համաձայն եմ դրանում նշված պայմաններին, ստանձնում եմ այդ պարտատոմսերում ներդրումների հետ կապված պարտականությունները և հնարավոր ռիսկերը:

Հաստատում եմ, որ ֆինանսական միջոցները, որոնք փոխանցվում են Տեղաբաշխողին ստացված են օրինական ճանապարհով և ոչ մի կերպ կապված չեն ահաբեկչության ֆինանսավորման, թմրանյութերի վաճառքի, մարդկանց վաճառքի, հարկերի վճարումից խուսափելու և այլ հանցավոր գործունեության հետ:

Հաստատում եմ, որ սույն հայտ-հանձնարարականի հաստատման պահից այն կհանդիսանա Կողմերի միջև կնքված և ուժի մեջ մտած պայմանագիր:

Ներդրողի ստորագրություն -----

Լրացվում է Տեղաբաշխողի կողմից

Հայտի ընդունման ամսաթիվը և ժամը (օր, ամիս, տարի, ժամ)	
Հայտ ընդունող աշխատակցի ստորագրություն և շտամպը	
Վաճառված պարտատոմսերի ընդհանուր քանակ (թվերով/տառերով)	
Վաճառված Պարտատոմսերի դիմաց գանձվա ընդհանուր գումարը (թվերով/տառերով)	
Դրամական միջոցների փոխանցման/ մուտքագրման ամսաթիվը/ժամը (օր, ամիս, տարի, ժամ)	

Հիշեցում: Եթե ներդրողի կողմից պարտատոմսերի ձեռքբերման համար դրամական միջոցները ՀՀ դրամով պարտատոմսերի դեպքում՝ **19300927663876** կամ ԱՄՆ դոլարով պարտատոմսերի դեպքում՝ **19300637882578** հատուկ բանկային հաշվին են փոխանցվում մինչև աշխատանքային օրվա ժամը 16:30-ը, ապա այդ դրամական միջոցները մուտքագրված են համարվում դրանց վճարման օրը, իսկ եթե համապատասխան գումարները վճարվում են աշխատանքային օրվա 16:30-ից հետո, ապա դրանք մուտքագրված են համարվում վճարմանը հաջորդող առաջին աշխատանքային օրը:

Հավելված 5. Ֆինանսական հաշվետվություններ

**Համախմբված ֆինանսական
հաշվետվություններ և
Անկախ աուդիտորի եզրակացություն**

«Գլոբալ Շիփինգ» ՍՊԸ

31 դեկտեմբերի 2024թ. և 31 դեկտեմբերի 2023թ.

Բովանդակություն

Անկախ աուդիտորի եզրակացություն	3
Շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքի մասին համախմբված հաշվետվություն	6
Ֆինանսական վիճակի մասին համախմբված հաշվետվություն	7
Սեփական կապիտալում փոփոխությունների մասին համախմբված հաշվետվություն	9
Դրամական հոսքերի մասին համախմբված հաշվետվություն	10
Համախմբված ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ	12

Անկախ աուդիտորի եզրակացություն

Grant Thornton CJSC
Yerevan Plaza Business Center
9 Grigor Lusavorich Street
Yerevan 0015
Republic of Armenia

T +374 10 50 09 64/61

«Գլոբալ Շիփսիինգ» ՍՊԸ-ի մասնակցին

Գրանթ Թորնթոն ՓԲԸ
Երևանի Պլազա բիզնես
կենտրոն
ՀՀ, ք. Երևան 0015
Գրիգոր Լուսավորչի 9

Կարծիք

Մենք աուդիտի ենք ենթարկել «Գլոբալ Շիփսիինգ» ՍՊԸ-ի (Ընկերություն) և նրա դուստր ընկերության (միասին՝ Խումբ) համախմբված ֆինանսական հաշվետվությունները, որոնք ներառում են 2024թ. դեկտեմբերի 31-ի և 2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ֆինանսական վիճակի մասին համախմբված հաշվետվությունը, ինչպես նաև այդ ամսաթվերին ավարտված տարվա շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքի մասին համախմբված հաշվետվությունը, սեփական կապիտալում փոփոխությունների մասին համախմբված հաշվետվությունը և դրամական հոսքերի մասին համախմբված հաշվետվությունը, ինչպես նաև համախմբված ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրությունները, ներառյալ հաշվապահական հաշվառման էական քաղաքականության ամփոփ նկարագիրը:

Հեռ.՝ +374 10 50 09 64/61

Մեր կարծիքով՝ կից համախմբված ֆինանսական հաշվետվությունները տալիս են Խմբի՝ 2024թ. դեկտեմբերի 31-ի և 2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ համախմբված ֆինանսական վիճակի և նույն ամսաթվերին ավարտված տարիների համախմբված ֆինանսական արդյունքների ու համախմբված դրամական հոսքերի ճշմարիտ և իրական պատկերը՝ համաձայն ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների (ՖՀՄՍ-ներ):

Կարծիքի հիմք

Մենք աուդիտն անցկացրել ենք աուդիտի միջազգային ստանդարտներին (ԱՄՍ-ներ) համապատասխան: Այդ ստանդարտներից բխող մեր պատասխանատվությունը լրացուցիչ նկարագրված է մեր եզրակացության՝ «Աուդիտորի պատասխանատվությունը համախմբված ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համար» բաժնում: Մենք անկախ ենք Խմբից՝ համաձայն Հաշվապահների էթիկայի միջազգային ստանդարտների խորհրդի կողմից հրապարակված «Պրոֆեսիոնալ հաշվապահի էթիկայի կանոնագրքի» (ՀԷՄՍԽ կանոնագիրք) և էթիկայի համապատասխան պահանջների, որոնք կիրառելի են համախմբված ֆինանսական հաշվետվությունների մեր աուդիտի նկատմամբ Հայաստանի Հանրապետությունում, և կատարել ենք էթիկայի գծով մեր այլ պարտականությունները՝ նշված պահանջների և ՀԷՄՍԽ կանոնագրքի համաձայն: Համոզված ենք, որ ձեռք ենք բերել բավարար համապատասխան աուդիտորական ապացույցներ՝ մեր կարծիքն արտահայտելու համար:

Այլ հանգամանք

Խմբի 2022թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համախմբված ֆինանսական հաշվետվությունները աուդիտի չեն ենթարկվել:

Ղեկավարության և կառավարման օղակներում գտնվող անձանց պատասխանատվությունը համախմբված ֆինանսական հաշվետվությունների համար

Ղեկավարությունը պատասխանատու է ՖՀՄՍ-ների համաձայն համախմբված ֆինանսական հաշվետվությունների պատրաստման և ճշմարիտ ներկայացման և այնպիսի ներքին հսկողության համար, որն ըստ ղեկավարության, անհրաժեշտ է խարոջախության կամ սխալի հետևանքով էական խեղաթյուրումներից զերծ համախմբված ֆինանսական հաշվետվությունների պատրաստումն ապահովելու համար:

Համախմբված ֆինանսական հաշվետվությունները պատրաստելիս՝ ղեկավարությունը պատասխանատու է Խմբի՝ անընդհատ գործելու կարողությունը գնահատելու համար՝ անհրաժեշտության դեպքում բացահայտելով անընդհատությանը վերաբերող հարցերը, ինչպես նաև հաշվապահական հաշվառման անընդհատության հիմունքը կիրառելու համար, եթե ղեկավարությունը չունի Խումբը լուծարելու կամ Խմբի գործունեությունը դադարեցնելու մտադրություն, կամ չունի այդպես չվարվելու որևէ իրատեսական այլընտրանք:

Կառավարման օղակներում գտնվող անձիք պատասխանատու են Խմբի ֆինանսական հաշվետվողականության գործընթացի վերահսկման համար:

Աուդիտորի պատասխանատվությունը համախմբված ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համար

Մեր նպատակն է ձեռք բերել ողջամիտ հավաստիացում առ այն, որ համախմբված ֆինանսական հաշվետվությունները բոլոր էական առումներով զերծ են էական խեղաթյուրումներից՝ անկախ դրանց՝ խարդախության կամ սխալի հետևանքով առաջացման հանգամանքից, և ներկայացնել մեր կարծիքը ներառող աուդիտորական եզրակացություն: Ողջամիտ հավաստիացումը բարձր մակարդակի հավաստիացում է, բայց այն չի երաշխավորում, որ ԱՄՄ-ներին համապատասխան իրականացված աուդիտը միշտ կհայտնաբերի էական խեղաթյուրումը, երբ այն առկա է: Խեղաթյուրումները կարող են առաջանալ խարդախության կամ սխալի արդյունքում և համարվում են էական, երբ խելամոռեմ կարող է ակնկալվել, որ դրանք առանձին կամ միասին վերցրած կազմեն օգտագործողների՝ այդ համախմբված ֆինանսական հաշվետվությունների հիման վրա կայացվող տնտեսական որոշումների վրա:

ԱՄՄ-ների համաձայն իրականացրած աուդիտի ողջ ընթացքում կիրառում ենք մասնագիտական դատողություն և պահպանում մասնագիտական կասկածամտություն: Ի լրումն՝

- Հատկորոշում և գնահատում ենք խարդախության կամ սխալի հետևանքով համախմբված ֆինանսական հաշվետվությունների էական խեղաթյուրման ռիսկերը, նախագծում և իրականացնում ենք աուդիտորական ընթացակարգեր՝ այդ ռիսկերին արձագանքելու նպատակով, և ձեռք ենք բերում աուդիտորական ապացույցներ, որոնք բավարար ու համապատասխան հիմք են հանդիսանում մեր կարծիքի համար: Խարդախության պատճառով առաջացած էական խեղաթյուրման չհայտնաբերման ռիսկն ավելի բարձր է, քան սխալի հետևանքով էական խեղաթյուրման չհայտնաբերման ռիսկը, քանի որ խարդախությունը կարող է ներառել հանցավոր համաձայնություն, զեղծարարություն, միտումնավոր բացթողումներ, սխալ ներկայացումներ կամ ներքին հսկողության չարաշահում:
- Ձեռք ենք բերում պատկերացում աուդիտին վերաբերող ներքին հսկողության մասին՝ տվյալ հանգամանքներին համապատասխան աուդիտորական ընթացակարգեր նախագծելու, այլ ոչ թե Խմբի ներքին հսկողության արդյունավետության վերաբերյալ կարծիք արտահայտելու համար:
- Գնահատում ենք հաշվապահական հաշվառման կիրառված քաղաքականության տեղին լինելը, ինչպես նաև ղեկավարության կողմից կատարած հաշվապահական հաշվառման գնահատումների և կից բացահայտումների խելամոռելությունը:
- Եզրահանգումներ ենք կատարում ղեկավարության կողմից հաշվապահական հաշվառման անընդհատության հիմունքի կիրառման տեղին լինելու վերաբերյալ և, հիմնվելով ձեռք բերված աուդիտորական ապացույցների վրա, գնահատում ենք՝ արդյոք առկա է էական անորոշություն դեպքերի կամ իրավիճակների վերաբերյալ, որը կարող է նշանակալի կասկած հարուցել Խմբի անընդհատ գործելու կարողության վերաբերյալ: Եթե մենք եզրահանգում ենք, որ առկա է էական անորոշություն, ապա մեզանից պահանջվում է աուդիտորի եզրակացությունում ուշադրություն հրավիրել համախմբված ֆինանսական հաշվետվությունների համապատասխան բացահայտումներին, կամ, եթե այդպիսի բացահայտումները բավարար չեն, ձևափոխել մեր կարծիքը: Մեր եզրահանգումները հիմնված են մինչև մեր եզրակացության ամսաթիվը ձեռք բերված աուդիտորական ապացույցների վրա: Այնուամենայնիվ, ապագա դեպքերը կամ իրավիճակները կարող են ստիպել Խմբին դադարեցնել անընդհատության հիմունքի կիրառումը:
- Գնահատում ենք համախմբված ֆինանսական հաշվետվությունների ընդհանուր ներկայացումը, կառուցվածքը և բովանդակությունը, ներառյալ բացահայտումները, ինչպես նաև համախմբված ֆինանսական հաշվետվությունների հիմքում ընկած գործարքների ու դեպքերի ճշմարիտ ներկայացումը:

- Ձեռք ենք բերում բավարար համապատասխան աուդիտորական ապացույցներ հսմբի ներսում գործող կազմակերպությունների կամ ձեռնարկատիրական գործառնությունների ֆինանսական տեղեկատվության վերաբերյալ՝ համախմբված ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ կարծիք արտահայտելու նպատակով: Մենք պատասխանատու ենք հսմբի աուդիտի ուղղորդման, ղեկավարման և իրականացման համար: Մենք ամբողջովին պատասխանատու ենք մեր աուդիտորական կարծիքի համար:

Կառավարման օղակներում գտնվող անձանց, ի թիվս այլ հարցերի, հաղորդակցում ենք աուդիտի առաջադրանքի պլանավորված շրջանակի և ժամկետների, ինչպես նաև աուդիտի ընթացքում հայտնաբերված նշանակալի հարցերի, ներառյալ ներքին հսկողությանը վերաբերող նշանակալի թերությունների մասին:

Արմեն Հովհաննիսյան

«Գրանթ Թորնթոն» ՓԲԸ-ի
տնօրեն

Նարինե Աճեմյան, FCCA

Առաջադրանքի պատասխանատու



31 հուլիսի 2025թ.

Շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքի մասին համախմբված հաշվետվություն

Հազար ՀՀ դրամ

	Ծանոթ.	2024թ.	2023թ.
Հասույթ	5	10,505,443	10,641,552
Վաճառքի ինքնարժեք	6	(6,146,152)	(6,006,394)
Համախառն շահույթ		4,359,291	4,635,158
Այլ եկամուտ		4,738	11,080
Իրացման ծախսեր	7	(1,616,486)	(1,339,557)
Վարչական ծախսեր	8	(1,531,272)	(1,089,680)
Այլ ծախսեր		(91,867)	(238,969)
Գործառնական գործունեությունից շահույթ		1,124,404	1,978,032
Ֆինանսական եկամուտ	9	13,576	11,269
Ֆինանսական ծախսեր	9	(174,382)	(91,502)
Փոխարժեքային տարբերությունից զուտ օգուտ (վնաս)	10	48,209	(7,291)
Շահույթ մինչև հարկերը		1,011,807	1,890,508
Շահութահարկի գծով ծախս	11	(218,991)	(360,998)
Տարվա շահույթ		792,816	1,529,510
Այլ համապարփակ ֆինանսական արդյունք			
Հոդվածներ, որոնք հետագայում կարող են վերադասակարգվել շահույթին կամ վնասին			
Արտերկրյա ստորաբաժանումների վերահաշվարկումից առաջացած փոխարժեքային տարբերություններ		(66,230)	14,758
		(66,230)	14,758
Ընդամենը տարվա համապարփակ ֆինանսական արդյունք		726,585	1,544,268

Շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքի մասին համախմբված հաշվետվությունը պետք է ընթերցվի այս համախմբված ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը կազմող 12-ից մինչև 42-րդ էջերում ներկայացված կից ծանոթագրությունների հետ մեկտեղ:

Ֆինանսական վիճակի մասին համախմբված հաշվետվություն

Հազար ՀՀ դրամ

	Ծանոթ.	31 դեկտեմբերի 2024թ.	31 դեկտեմբերի 2023թ.	31 դեկտեմբերի 2022թ.
Ակտիվներ				
Ոչ ընթացիկ ակտիվներ				
Հիմնական միջոցներ	12	526,023	373,737	158,972
Ոչ նյութական ակտիվներ	13	226,636	190,298	14,849
Օգտագործման իրավունքի ձևով ակտիվներ	14.1	859,006	851,630	416,804
Հետաձգված հարկային ակտիվներ	15	81,206	81,094	48,809
Տրամադրված փոխառություններ	16	-	114,353	470,379
Ընդամենը ոչ ընթացիկ ակտիվներ		1,692,871	1,611,112	1,109,813
Ընթացիկ ակտիվներ				
Պաշարներ		28,319	10,220	23,983
Առևտրային և այլ դեբիտորական պարտքեր	17	1,920,376	1,521,336	797,335
Տրամադրված փոխառություններ	16	1,290,940	776,647	338,628
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	18	77,102	273,841	85,701
Ընդամենը ընթացիկ ակտիվներ		3,316,737	2,582,044	1,245,647
Ընդամենը ակտիվներ		5,009,608	4,193,156	2,355,460

Ֆինանսական վիճակի մասին համախմբված հաշվետվություն (շարունակություն)

Հազար ՀՀ դրամ	Ծանոթ.	31 դեկտեմբերի 2024թ.	31 դեկտեմբերի 2023թ.	1 հունվարի 2023թ.
Սեփական կապիտալ և պարտավորություններ				
Սեփական կապիտալ	19			
Կանոնադրական կապիտալ		40,443	40,443	50
Արտարժույթի փոխարկման պահուստ		(77,201)	(10,971)	(25,729)
Կուտակված շահույթ		2,359,417	1,566,601	844,939
Ընդամենը սեփական կապիտալ		2,322,659	1,596,073	819,260
Պարտավորություններ				
Ոչ ընթացիկ				
Վարկեր և փոխառություններ	20	316,638	552,612	167,993
Վարձակալության գծով պարտավորություն	14.2	799,842	813,696	420,302
Ընդամենը ոչ ընթացիկ պարտավորություններ		1,116,480	1,366,308	588,295
Ընթացիկ				
Վարկեր և փոխառություններ	20	347,946	221,003	253,842
Վարձակալության գծով պարտավորություն	14.2	148,649	111,960	54,237
